ԳՆԴԱԿ ԽԱՂԱՑՈՂ ԿԱՏՎԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Ձոնված՝ օրիորդ Մարի դը Մոնթոյին

Սեն-Դընի փողոցի միջին մասում, գրեթե Պըտի-Լիոն փողոցի անկյունում, ժամանակին գոյություն ուներ այն արժեքավոր տներից մեկը, որոնց հիման վրա պատմագիրները կարող են հեշտությամբ վերականգնել հին Փարիզի կերպարը: Թվում էր, թե խայտաբղետ բևեռագրեր են նկարազարդում այդ խղճուկ տան կիսախարխուլ պատերը: Եվ իրոք, դիտողն ի՞նչ անուն կարող էր տալ հորիզոնական և շեղակի դասավորված փայտի կտորտանքներով կազմված այն X-երին և V-երին, որ ճակատի վրա գծագրվում էին զուգահեռ, փոքրիկ ճեղքերով: Ակներևաբար, երբ կառքերն անցնում էին փողոցով, այդ հեծաններից յուրաքանչյուրը շարժվում էր իր բնի մեջ: Իր հնությամբ պատկառելի այդ կառույցն ուներ եռանկյունաձև մի տանիք, որից շուտով ոչ մի նմուշ չի մնա Փարիզում: Այդ կտուրը, Փարիզի անբարեխառն կլիմայի ներգործությունից ծռմռված, երեք ոտնաչափ դուրս էր ցցված դեպի փողոցը՝ անձրևի ջրերից պաշտպանելու համար դռան շեմքը, նույնքան և պատսպարելու համար ձեղնահարկի պատերն ու սրա ձեղնալուսամուտը: Այս վերջին հարկը կառուցվել էր մեկը մյուսի վրա գամված տախտակներով, անտարակույս, չծանրաբեռնելու համար արդեն իսկ խարխուլ եղող այս շենքը:

Մարտ ամսվա անձրևոտ մի առավոտ, մի երիտասարդ, խնամքով փաթաթված իր վերարկուի մեջ, կանգնած էր այդ հնամենի բնակարանի դեմառդեմ գտնվող խանութի դռան քվի տակ. թվում էր, թե նա այդ բնակարանն ուսումնասիրում է հնագետի հիացմունքով: Իսկապես տասնվեցերորդ դարաշրջանի բուրժուական ապրելակերպի այդ բեկորը կարող էր դիտողի առաջ լուծելու դնել մի շարք խնդիրներ: Յուրաքանչյուր հարկն ուներ իր յուրահատուկ տարօրինակությունները: Առաջինում՝ չորս երկար պատուհաններ էին, նեղ, իրար մոտիկ, որոնք իրենց ներքևի մասում ապակու փոխարեն ունեին փայտե քառակուսի տախտակներ, որպեսզի այդպիսով ստացվի կիսաստվերոտ մի այնպիսի լույս, որի քողի տակ ճարպիկ վաճառականը կերպասներին տալիս է իր հաճախորդների համար ցանկալի երանգները: Թվում էր, թե երիտասարդն արհամարհանքով անտեսում է շենքի այդ էական մասը. նրա հայացքը դեռևս կանգ չէր առել այնտեղ: Նա չէր հետաքրքրվում նույնպես և երկրորդ հարկի պատուհաններով, որոնց բարձրացված վանդակափեղկերը թույլ էին տալիս տեսնելու բոհեմական մեծադիր ապակիների միջով բեհեզյա շիկագույն փոքրիկ վարագույրներ: Նրա ուշադրությունը կենտրոնանում էր հատկապես երրորդ հարկի անշուք պատուհանների վրա, որոնց կոպտորեն և անարվեստ շինված շրջանակները արժանի էին ցուցադրվելու Արվեստների ու արհեստների թանգարանում՝ ցույց տալու համար ֆրանսիական փայտամշակման արվեստում հյուսների առաջին փորձերը: Այդ պատուհաններն ունեին փոքրիկ կանաչ ապակիներ, այնքան մուգ, որ երիտասարդն առանց իր գերազանց տեսողության, պիտի չկարողանար նշմարել կապույտ, քառակուսի նախշերով կտավե վարագույրները, որոնք անցանկալի հայացքներից քողարկում էին այդ բնակարանի գաղտնիքները: Երբեմն այդ դիտողը, ձանձրացած լինելով իր ապարդյուն զննումներից կամ այն լռությունից, որի մեջ թաղված էր տունը, ինչպես նաև ամբողջ թաղամասը, իր հայացքներն իջեցնում էր դեպի շենքի ավելի ներքևի մասերը: Այն ժամանակ, ակամա մի ժպիտ էր գծագրվում նրա շրթունքների վրա, երբ նա կրկին անգամ տեսնում էր խանութը, ուր կային բավականին ծիծաղելի հավաքածուներ: Ինչ-որ հսկայական մեծությամբ մի փայտի կտոր, ամրացված չորս սյուների վրա, որոնք կարծես կռացած էին այդ խարխուլ շենքի ծանրաբերձ զանգվածի տակ, ընդունել էր այլազան գույներով յուղաներկի այնքան շերտեր, ինչքան երբևէ կարմիր շպար չէր ընդունել զառամյալ մի դքսուհու այտը: Այս մանրաքանդակ, լայն գերանի մեջտեղում գտնվում էր հնամենի մի նկար, որը ներկայացնում էր գնդակ խաղացող մի կատու: Այս ծիծաղաշար նկարը մեծապես զվարճացնում էր երիտասարդին: Սակայն, պետք է ասել, որ արդիական ամենանրբամիտ նկարիչն անգամ չէր կարողանա հնարել նույնքան կոմիկական լիցք ունեցող մի պատկեր: Կենդանին իր առջևի թաթերից մեկով բռնած ուներ իր չափ մեծ մի ռակետա, և հետևի թաթերի վրա շտկված՝ նա նշան էր բռնում ահագին խոշորությամբ մի գնդակի, որ ասեղնագործված հագուստով մի ազնվական ետ էր ուղարկում նրան: Գծագրությունը, գույները, հարակից մասերը, ամբողջ պատկերը մշակված էր այնպիսի եղանակով, որ, կարծես, գեղարվեստագետն ուզեցել էր ծաղրի ենթարկել և վաճառականին, և անցորդներին: Ժամանակը, խեղաթյուրելով այս միամտորեն անպաճույճ յուղանկարը, այն դարձրել էր առավել ևս ծիծաղաշարժ՝ մի քանի անստուգություններով, որոնք պիտի շփոթեցնեին բարեխղճորեն հետաքրքրասեր դիտողներին: Այսպես ուրեմն, կենդանու խայտաճամուկ պոչը կերտված էր այնպիսի ձևով, որ կարելի էր այն նմանեցնել ոգևորված հանդիսատեսի, երևի այդպես խոշոր, երկար և փարթամ էր մեր նախնիների կատուների պոչը: Նկարի աջ կողմը, երկնագույն դաշտի վրա, որը լրիվ չէր թաքցնում փայտի փտությունը, անցորդները կարդում էին. ԳԻՅՈՄ, իսկ, ձախ կողմը՝ ՊԱՐՈՆ ՇԵՎՐԵԼԻ ՅԱՁՈՐԴԸ: Արևն ու անձրևը կրծոտել էին տառերի վրա ժլատորեն կպցված կռածո ոսկու մեծ մասը: Այդ արձանագրության մեջ Ս-երը փոխարինում էին V-երին և փոխադարձաբար՝ ըստ մեր հին ուղղագրության կանոններին: Որպեսզի մի փոքր համեստ լինեն

նրանք, ովքեր գոռոզանում են, կարծելով թե մարդիկ գնալով դառնում են ավելի նրբամիտ, և թե ժամանակակից շառլատանությունը գերազանցում է ամեն ինչ, լավ կլիներ այստեղ դիտել տալ, որ այդ ցուցանակները, որոնց ստուգաբանությունն անհեթեթ է թվում Փարիզի վաճառականներից շատ շատերին, հանդիսանում են կենդանի բնության պատկերներ, և որ դրանց օգնությամբ մեր հնարամիտ նախնիներին հաջողվել էր հաճախորդներին գրավել դեպի իրենց վաճառատները: Այսպես ուրեմն՝ «Մանող-խոզը», «Կանաչ-կապիկը» և այլն, վանդակի մեջ ցուցադրված կենդանիներ են եղել, որոնց վարժեցումը XV դարում ճարտարիմաց մարդու համբերատար ոգու ապացույցն էր: Այդպիսի հետաքրքրաշարժ ցուցանակները շատ ավելի շուտ էին հարստացնում իրենց երջանիկ սեփականատերերին, քան, օրինակ, «Նախախնամություն», «Ուղղամտություն», «Շնորհն աստծո», «Սուրբ Հովհաննես Մկրտչի Գլխատումը», որոնց դեռևս հանդիպում ենք Սեն-Դընի փողոցում: Այնուամենայնիվ, անծանոթը, անշուշտ չէր կանգնել այնտեղ, որպեսզի զմայլվեր այդ կատվի վրա, որի պատկերը մի վայրկյանի ուշադրությամբ բավական էր դրոշմվելու հիշողության մեջ: Այդ երիտասարդը նույնպես ուներ իր տարօրինակությունները: Նրա թիկնոցը փոթփոթված էր հնադարյան հանդերձանքների ճաշակով, նա ուներ վայելչաձև կոշիկներ, որոնք առավել ևս էին աչքի զարնում, քանի որ Փարիզի ցեխի մեջ նա հագել էր մետաքսյա սպիտակ գուլպաներ, որոնց բծերը վկայում էին նրա անհամբերության մասին: Անտարակույս նա դուրս էր գալիս ինչ-որ խնջույքից կամ պարահանդեսից: Նրա գանգրացված սև մազերի խոպոպները ցրիվ էին եկել ուսերի վրա, ցույց տալով Կարակալա
1

ձևի հարդարանք: Այս վերջին նորաձևությունը առաջ էր քաշել թե՛ Դավիդի
2

շկոլան և թե՛ հունական և հռոմեական ձևերի հանդեպ ցուցաբերված այն հիացմունքը, որով նշվեց մեր դարաշրջանի առաջին տարիները: Չնայած մի քանի քառատրոփ անցնող ուշացած բանջարավաճառների աղմուկին, որոնք շտապում էին դեպի մեծ շուկա, այժմ այնքան աղմկոտ այս փողոցն այդ ժամանակ լի էր այնպիսի լռությամբ, որի մոգական ներգործությունը ծանոթ է միմիայն նրանց, ովքեր թափառել են ամայացած Փարիզում այն ժամերին, երբ նրա ժխորը, մի որոպե հանդարտված, վերածնվում է և լսվում հեռուներում, ինչպես ծովի մեծատարած հառաչը: Այս տարօրինակ երիտասարդը պետք է լիներ նույնքան հետաքրքրական «Գնդակ խաղացող կատվի» վաճառատան մարդկանց համար, ինչքան ինքն էր հետաքրքրասեր՝ «Գնդակ խաղացող կատվի» վաճառատան հանդեպ: Շլացնող գեղեցկությամբ սպիտակափայլ փողկապը նրա դեմքը դարձնում էր ևս ավելի գունաթափ, քան ինչ նա իրականում էր: Նրա սև աչքերից ցայտող կրակը, մերթ մթին, մերթ բոցկլտուն, ներդաշնակվում էր դեմքի անհեթեթ շրջագծերի, նրա լայնածիր և ծամածուռ բերանի հետ, որը կծկվում էր ժպտալիս: Ճակատը, սաստիկ սրտնեղությունից կնճռոտված, կարծես ուներ ինչ-որ չարագուշակ մի բան: Այն բոլոր բաներից, ինչ գտնվում է մարդու մեջ, ամենամարգարեականը մի՞թե ճակատը չէ: Երբ այդ անծանոթի ճակատը կիրք էր արտահայտում, այնտեղ կազմվող խորշոմները մի տեսակ սարսափ էին ազդում այն ուժգնությամբ, որով դրանք շեշտվում էին: Բայց, երբ այն վերընդունում էր իր այնքան դյուրախռով անդորրը, ապա այնտեղ երևում էր շնորհագեղ ինչ-որ շողք, որը հրապուրիչ էր դարձնում այդ դեմքը, ուր ուրախությունը, վիշտը, սերը, ցասումը, արհամարհանքը պոռթկում էին այնպիսի հաջորդականությամբ, որ ամենասառնարյուն մարդն իսկ դրանից պետք է տպավորվեր: Այս անծանոթն այնքան էր սրտնեղած այն որպեհն, երբ հապշտապ բաց արեցին ձեղնահարկի լուսամուտը, որ նա չնկատեց այնտեղ երևացող երեք ուրախ դեմքերի՝ կլոր, ճերմակ, վարդագույն, բայց հասարակ այնքան, ինչքան որոշ մոնումենտների վրա քանդակված Առևտրի խորհրդապատկերները: Լուսամուտով շրջանակված երեք դեմքերը հիշեցնում էին ամպերի մեջ ցրիվ եկած հայր-աստծուն ուղեկցող կարմրաթշիկ հրեշտակների գլուխները: Աշակերտներն այնպիսի ագահությամբ շնչեցին փողոցի արտաբուրումներով հագեցած օդը, որ դա ցույց էր տալիս, թե ինչքա՜ն տաք և նեխած պետք է լիներ իրենց ձեղնահարկի մթնոլորտը: Այն գործակատարը, որը, ըստ երևույթին, բոլորից ավելի զվարթաբանն էր, ցույց տալուց հետո այդ տարօրինակ ժամապահին, անհայտացավ և իսկույն ետ եկավ, ձեռքում բռնած ինչ-որ գործիք, որի անծռելի մետաղը վերջերս փոխարինվեց փափուկ և ճկուն կաշվով: Ապա, բոլորն ընդունեցին չարաճճի արտահայտություն, երբ նրանք նայեցին այդ անմիտ հետաքրքրասիրություն ցուցաբերող երիտասարդին և նրան քողարկեցին ինչ-որ բարակ և սպիտակավուն անձրևով, որի բույրն ասում էր, թե այդ երեք ծնոտներն արդեն իսկ սափրված էին: Ոտի թաթերի վրա բարձրացած և ապաստանելով ձեղնահարկում՝ գործակատարներն ուզում էին զվարճանալ՝ դիտելով իրենց զոհի զայրույթը, սակայն նրանք դադարեցին ծիծաղելուց, երբ տեսան անփույթ քամահրանքը, որով երիտասարդը թափ տվեց վերարկուն, և խորունկ արհամարհանքը, որ արտահայտեց նրա դեմքը, երբ նա իր հայացքն ուղղեց դեպի դատարկ լուսամուտը: Այդ որպեհն, սպիտակ և քնքուշ մի ձեռք բարձրացրեց դեպի իր մույթը երրորդ հարկի կոպիտ պատուհաններից մեկի ստորին մասը: Դա սահոցավոր պատուհաններից էր, որոնց շրջուն արգելակը հաճախ չի պահում ապակեփեղկը, և որը, հանկարծակի խույս տալով, ընկնում է ծանրորեն: Անցորդի երկար սպասումը վարձատրվեց.

հայտնվեց մի մանկամարդ աղջիկ, նորափթիթ, ինչպես այն ձյունափայլ ծաղկաբաժակը, որը բացվում է ջրերի գոգում: Նրա դեմքը պսակազարդված էր մուսլինե փեթակաձև վարսակալով, որն անմեղության հոգեզմայլ տեսք էր տալիս նրա գլխին: Ուսերն ու պարանոցը, թեև ծածկված թխագույն մի շալով, ընդնշմարվում էին, այնուամենայնիվ, քնի մեջ կատարած շարժումներից թեթև դուրս ընկած լինելով շապիկից: Անձկության ոչ մի արտահայտություն չէր խաթարում այդ դեմքի ո՛չ անսեթևեթ անկեղծությունը, ո՛չ էլ անդորրը, որ անմահացվել են Ռաֆայելի վսեմ հորինվածքներում. առած դարձած այդ կույսերի միևնույն նազանքն էր, միևնույն հանդարտությունը: Դյութիչ հակադրություն էին կազմում թշերի մատղաշությունն այդ դեմքի, ուր քունը կարծես առավել հորդառատ կյանք էր դրել, և հնությունն այդ թանձրակառույց, կոշտ շրջագծերով պատուհանի, որի գոգը սև էր: Նման այն ցերեկային ծաղիկների, որոնք առավոտյան դեռևս չեն բացել գիշերային ցրտից փաթաթված իրենց թերթիկները, մանկամարդ աղջիկը, հազիվ արթնացած, իր կապուտակ աչքերն ուղղեց հարևան տանիքներին ու նայեց երկնքին: Ապա, մի տեսակ սովորությամբ, նա հայացքն իջեցրեց փողոցի ավելի մռայլ շրջանները, ուր և հանդիպեց իր երկրպագուի նայվածքին: Իր կոկետությունը հարված ստացավ անշուշտ, որ իրեն տեսել էին կիսահոլանի՝ ցայգազգեստով: Նա իսկույն ետ քաշվեց. մաշված արգելակը շրջվեց. ապակեփեղկը սահեց դեպի ներքև և իջավ մի այնպիսի արագությամբ, որով մեր նախնիների կողմից հայտնագործված այդ անմեղ գյուտը մեր օրերին ստացավ այնքան նողկալի անուն: Տեսիլքը չքացավ, երիտասարդին թվաց, թե ինչ-որ ամպ քողարկեց ամենից ավելի փողփողուն այգաստղը: Այս փոքրիկ իրադարձությունների ընթացքում «Գնդակ խաղացող կատվի» ներքին խուլ փեղկերը, որոնք պաշտպանում էին ապակեպատ սարքերը, կարծես կախարդանքով վերացվել էին: Բախոց ունեցող հնամենի դուռը ծալվեց վաճառատան ներքին պատի դեմ մի սպասավորի կողմից, որն ըստ երևույթին ցուցանակին ժամանակակից էր և նա դողդոջուն ձեռքերով պատին ամրացրեց քառակուսի կերպասի կտորը, որի վրա ասեղնագործված էր դեղնագույն մետաքսով.

Գիյոմ՝ Շևրելի հաջորդը:

Անցորդներից շատ շատերին դժվար կլիներ գուշակել պարոն Գիյոմի առևտրի բնույթը. նրա խանութն արտաքնապես պաշտպանող երկաթյա հաստ ձողերի արանքով հազիվ թե նշմարվում էին թուխ կերպասով փաթաթված բազմաթիվ ծրարներ, իրար սեղմված խիտ-խիտ, ինչպես տառեխները, երբ անցնում են օվկիանոսով: Չնայած այդ գոթական ֆասադի արտաքին պարզությանը՝ Փարիզի բոլոր կերպասավաճառներից միշտ էլ բովանդակությամբ ամենաճոխ խանութն ունեցողը պարոն Գիյոմն էր, որի կապերն ամենից ավելի ընդարձակ էին, և որի առևտրական ուղղամտությունն ամենաանվթարն էր: Եթե իր արհեստակիցներից մի քանիսը գործարք արած լինեին կառավարության հետ, առանց կերպասի պահանջված քանակն ունենալու, ապա նա միշտ պատրաստ էր հայթայթելու հանձն առած անհրաժեշտ կտորեղենը, ինչքան էլ շատ լիներ դրա քանակը: Խորամանկ վաճառականը հազար ու մի եղանակ գիտեր իրեն վերապահելու շահույթի խոշոր բաժինը՝ առանց հարկադրված լինելու մյուսների պես վազել պաշտպանների մոտ, ստորություններ անել կամ՝ թանկարժեք նվերներ տալ: Եթե արհեստակիցները չկարողանային իրեն վճարել այլ կերպ, բայց եթե երկար ժամկետով պարտամուրհակներով, ապա նա ցույց էր տալիս իր նոտարին որպես մի մարդու, որի հետ կարելի է հարմարվել, շնորհիվ այս հնարքի՝ նա գիտեր կրկին անգամ խուզել ոչխարը, ապահովելով երկկողմանի շահույթ, ինչ որ Սեն-Դընի փողոցի վաճառականներին ասել էր տալիս, որպես առած՝ «Աստված ձեզ պահի պարոն Գիյոմի նոտարից»՝ ակնարկելով պահումների բարձր տոկոսը: Ծեր վաճառականը կարծես հրաշքով կանգնած էր իր խանութի առջև այն պահին, երբ ծառան հեռացավ: Պարոն Գիյոմը նայեց Սեն-Դընի փողոցին, հարևան խանութներին և եղանակին, ինչպես մի մարդ, որը նավից դուրս գալով Հավրի նավահանգիստը, կրկին անգամ տեսնում է Ֆրանսիան՝ երկարատև ճանապարհորդությունից հետո: Լրիվ համոզված լինելով, թե ոչինչ չէր փոխվել իր քնի ընթացքում, նա, հանկարծ նկատեց պահակ կանգնած այդ անցորդին, որն իր կողմից դիտում էր կերպասեղենի պատրիարքին այնպես, ինչպես Հումբոլդտը դիտած կլիներ Ամերիկայում առաջին էլեկտրաձուկը: Պարոն Գիյոմը հագին ուներ սև թավիշե լայն անդրավարտիք, երփնահյուս գուլպաներ և արծաթյա օղերով քառակուսի կոշիկներ: Ֆրակը քառակուսի գործվածքով, քառակուսի քղանցքներով, քառակուսի օձիքով, փաթաթում էր նրա թեթևորեն կորացած մարմինը: Կերպասը կանաչավուն էր, կոճակները՝ սպիտակ մետաղից, բայց երկարատև գործածությունից պղնձագույն դարձած: Գորշ մազերն այնպիսի խնամքով էին տափակացված և սանրված նրա դեղնավուն գանգի վրա, որ սա ակոս-ակոս վարած դաշտի էր նմանվում: Փոքրիկ կանաչ աչքերը, կարծես գայլիկոնով ծակված, բոցկլտում էին թափված հոնքերի փոխարեն թեթևորեն կարմրին տվող երկու աղեղների սակ: Մտահոգությունները նրա ճակատի վրա գծել էին հորիզոնական բազմաթիվ խորշոմներ այնքան շատ, որքան ֆրակի ծալքերն էին: Այդ գունատ դեմքը արտահայտում էր համբերություն, վաճառականական իմաստություն, և այն մի տեսակ արծաթապաշտությունը, որ առևտուրն է պահանջում: Այդ ժամանակշրջանում ավելի քիչ կային, քան այսօր, այնպիսի ընտանիքներ, ուր որպես թանկագին ավանդություններ պահպանվեին նրանց պրոֆեսիան բնորոշող բարքերն ու տարազները, և որոնք նոր քաղաքակրթության միջում

մնացել էին այնպես, ինչպես իր պեղումներում Կյուվիեի հայտնաբերած անդրջրհեղեղյան բրածո մնացուկները: Գիյոմ ընտանիքի ավագն այդ հին սովորությունների հարգարժան պահապաններից մեկն էր. երբեմն պատահում էր, որ նա ափսոսանքով հիշում էր հին օրերի
վաճառականական ավագին,
և նա երբեք չէր խոսում Առևտրի ատյանի կողմից ընդունված մի որևէ որոշման մասին, առանց այն անվանելու
կոնսուլների վճիռ:
Անտարակույս, այդ հին սովորությունների ներգործությամբ էր, որ նա բոլորից շուտ էր վեր կենում և հաստատ սպասում էր խանութի երեք գործակատարների ժամանումին՝ ուշացման դեպքում դրանց հանդիմանելու համար: Մերկուրիոսի
3

այդ երիտասարդ հետևորդների համար ոչ մի բան այնքան զարհուրելի չէր, ինչքան այն լուռ համառությունը, որով պատրոնը երկուշաբթի առավոտը, զննում էր նրանց դիմագծերն ու շարժումները, այնտեղ փնտրելով օրինազանցության փաստեր կամ հետքեր: Սակայն, այս անգամ, ծերունի կերպասավաճառը ոչ մի ուշադրություն չդարձրեց իր գործակատարների վրա. նա զբաղված էր գտնելու շարժառիթն այն հետաքրքրության, որով մետաքսյա գուլպաներ և թիկնոց հագած երիտասարդը հետազոտում էր, փոխիփոխ, նրա ցուցանակն ու խանութի խորքերը: Օրն ավելի պայծառանալով, թույլ էր տալիս այնտեղ նշմարել կանաչավուն, հին մետաքսով վարագուրված վանդակապատ գրասեղանը, որտեղ դրված էին հաստափոր գրքեր՝ վաճառատան համր պատգամախոսները: Այդ չափազանց հետաքրքրասեր օտարականը, թվում էր, թե տենչում է այդ փոքրիկ բնակարանին, ուզում է վերցնել հատակագիծը շենքի կողմնակի թևը կազմող սեղանատան, որը լույս էր ստանում առաստաղի մեջ հարմարեցված ապակեփեղկերից, ուր հավաքված ընտանիքը կարող էր հեշտությամբ տեսնել, ճաշի ընթացքում, ամենափոքր դեպքերն անգամ, որոնք կարող էին պատահել խանութի շեմքի վրա: Իր բնակարանի նկատմամբ այդպիսի բուռն սեր կասկածելի էր թվում վաճառականին, որը ճաշակել էր «Մաքսիմումի» ռեժիմը
4

: Ուստի, պարոն Գիյոմը շատ բնականորեն մտածում էր, թե այդ չարագուշակ անձնավորության ցանկության առարկան «Գնդակ խաղացող կատվի վաճառատան» դրամարկղն է: Իր տիրոջ և անծանոթի միջև տեղի ունեցող այդ լուռ մենամարտը ծածուկ վայելելուց հետո՝ գործակատարներից ամենատարեցը, տեսնելով որ երիտասարդը գաղտագողի դիտում էր երրորդ հարկի պատուհանները, սիրտ առավ և համարձակվեց տեղավորվել այն սալաքարի վրա, ուր կանգնած էր պարոն Գիյոմը: Նա մի քանի քայլ առաջացավ փողոցում, բարձրացրեց գլուխը և նրան թվաց, թե նկատեց օրիորդ Օգյուստին Գիյոմին, որը հապճեպ ետ էր քաշվում: Իր ավագ գործակատարի սրատեսությունից դժգոհած՝ կերպասավաճառը նրա վրա գցեց մի խեթ հայացք: Բայց հանկարծ փոխադարձ երկյուղը, որ այդ անցորդի ներկայությունն էր հարուցում վաճառականի և սիրահար գործակատարի հոգում, փարատվեց. անծանոթը կանգնեցրեց մի վարձակառք, որը մոտակա ինչ-որ տեղ էր գնում, և անտարբերություն ձևացնելով՝ արագորեն կառք նստեց: Այդ մեկնումը կարծես բալասան դրեց մնացած գործակատարների սրտին, որոնք բավականին անհանգստացել էին, վախենալով, թե կարող էին ընդհարվել իրենց կատակի զոհը դարձած անծանոթի հետ:
— Դե լա՛վ, պարոննե՛ր, ի՞նչ եք կանգնել այստեղ՝ ձեռքներդ ծալած,— ասաց պարոն Գիյոմն իր երեք գործակատարներին:— Հին ժամանակ, գրողը տանի, երբ ես պարոն Շևրելի մոտն էի, արդեն ստուգած կլինեի կերպասի երկու թոփ:
— Ուրեմն օրն ավելի շուտ էր լուսանում,— ասաց երկրորդ գործակատարը, որին վերաբերում էր այդ աշխատանքը:
Ծեր վաճառականը չկարողացավ զսպել ժպիտը: Թեև այս երեք երիտասարդներից երկուսը, որոնք իր խնամատարությանն էին հանձնված Լուվիե և Սեդան քաղաքներում հարուստ մանուֆակտուրիստ հայրերի կողմից, կարող էին, եթե միայն ցանկություն հայտնեին, ստանալ հարյուր հազար ֆրանկ, երբ նրանք անձնական խանութ բանալու տարիքին հասնեին, այնուամենայնիվ, պարոն Գիյոմն իր համար պարտք էր համարում նրանց պահել բռնապետական խստագույն իշխանության տակ, ինչ որ անծանոթ է մեր օրերին, արդիական շքեղ վաճառատներում, որոնց գործակատարները երեսուն տարեկան հասակում արդեն իսկ ուզում են հարստանալ: Նա նրանց աշխատեցնում էր սևամորթների նման: Այդ գործակատարները՝ երեքով բավարարում էին կատարելու մի այնպիսի աշխատանք, որին եռանդագին պիտի լծվեին տասը ծառայողներ, որոնք իրենց անգործությամբ ծանրաբեռնում են այսօր պետական բյուջեի սյունակները: Ոչ մի աղմուկ չէր խանգարում անդորրն այդ հանդիսավոր վաճառատան, ուր թվում էր, թե ծխնիները միշտ յուղոտված են, և ուր ամենափոքր կահույքն անգամ, ուներ այն պատկառելի մաքրությունը, որը ցույց էր տալիս, թե այնտեղ տիրում է խիստ կարգ ու կանոն և տնտեսվարություն: Հաճախ, գործակատարներից ամենազվարթամիտը զվարճացել էր, գրելով գրյույեր պանրի վրա, որը նրանց տրվում էր նախաճաշին, և որին նրանք հաճությամբ ձեռք չէին

տալիս, այն ամսաթիվը, երբ այդ պանիրն ստացվել էր վաճառատանը: Այս և ուրիշ նմանօրինակ մի քանի չարաճճիություններ երբեմն ժպիտ էին հարուցում Գիյոմի երկու աղջիկներից փոքրիկի շրթունքներին, այն չքնաղ կույսի շրթունքներին, որը երևացել էր հմայված անցորդին: Չնայած գործակատարներից յուրաքանչյուրը, և նույնիսկ ամենահինը, բարձր սննդավճար էր տալիս, դրանցից և ոչ մեկը բավականաչափ հանդուգն չէր լինի, որպեսզի նստած մնար տիրոջ սեղանին այն պահին, երբ աղանդերն էր մատուցվում: Երբ տիկին Գիյոմը խոսում էր սալաթը պատրաստելու մասին, ապա այդ խեղճ երիտասարդները դողում էին, մտածելով, թե ինչպիսի՜ ժլատությամբ նրա զգույշ ձեռքը գիտեր դրա մեջ ձիթայուղն ածել: Նրանք չպետք է միտք անեին մի որևէ գիշեր անցկացնել տնից դուրս՝ առանց նախօրոք և հանգամանորեն ներկայացնելու հաստատված կարգի այդ խախտման համար ընդունելի պատճառաբանություն: Ամեն կիրակի, փոխիփոխ, երկու գործակատար ուղեկցում էին Գիյոմ ընտանիքին՝ գնալու համար Սեն-Լյո եկեղեցին, ուր նրանք լսում էին պատարագն ու երեկոյան ժամերգությունը: Օրիորդներ Վիրժինին և Օգյուստինը, հագած հնդկական կտավեհամեստ շորեր, թևանցուկ արած յուրաքանչյուրը գործակատարներից մեկի հետ, առաջ էին շարժվում իրենց մոր սրաթափանց հայացքի տակ. ծնողները փակում էին ընտանեկան այդ փոքրիկ թափորը: Գիյոմը, որին վարժեցրել էր տիկինը, թևի տակ տանում էր սև, կաշեկազմ երկու խոշոր աղոթագիրք: Երկրորդ գործակատարը ռոճիկ չէր ստանում: Գալով այն մեկին, որին իր տասներկու տարվա բարեխիղճ աշխատանքն ու զգոնությունը իրավունք էին տալիս մասնակից դառնալու տան գաղտնիքներին, ապա նա իր վաստակի համար որպես վարձատրություն ստանում էր ութ հարյուր ֆրանկ: Ընտանեկան որոշ տոներին նրան շնորհվում էր մի քանի նվերներ, որոնց տիկին Գիյոմի չոր, խորշոմած ձեռքն էր միայն արժեքավորում. դրանք նրբաթել քսակներ էին, որ տիկինը խնամքով լցնում էր բամբակով՝ առավել ցայտուն դարձնելու համար ասեղնագործ, ծակոտկեն նախշերը. նրբահյուս, բայց տոկուն ձգափոկեր էին, կամ՝ մի քանի զույգ մետաքսյա հաստ գուլպաներ: Երբեմն, բայց հազվադեպորեն, այս առաջին մինիստրին թույլ էր տրվում մասնակցելու ընտանիքի զվարճություններին, լինի գյուղագնացության դեպքում կամ լինի, երբ, ամիսներ ամբողջ սպասելուց հետո, ընտանիքը որոշում էր ընդունում թատրոն գնալ և վարձում էր օթյակ՝ տեսնելու համար մի այնպիսի ներկայացում, որի մասին Փարիզն այլևս չէր մտածում: Ինչ վերաբերում է մյուս երկու գործակատարներին՝ ապա հարգանքի պատնեշը, որը հին ժամանակ բաժանում էր կերպասավաճառ տիրոջն ու գործակատարներին, այնքան էր ամուր հաստատված նրանց և ծեր վաճառականի միջև, որ նրանց համար գուցե շատ ավելի հեշտ էր գողանալ մի թոփ կերպաս, քան խախտել սահմանված օգոստափառ այդ խիստ կարգաձևը: Այս խոհեմ զգուշավորությունը կարող է ծիծաղելի թվալ այսօր: Բայց և այնպես այդ հին տները անարատ վարքի և ուղղամտության դպրոցներ էին: Տերը որդեգրում էր իր աշակերտներին: Տանտիրուհին խնամքով հարդարում, նորոգում և երբեմն էլ բոլորովին նորերով փոխարինում էր երիտասարդի սպիտակեղենը: Եթե պատահեր, որ մի գործակատար հիվանդանար, ապա նա իսկապես մայրական խնամքների առարկա էր հանդիսանում: Վտանգի դեպքում տերը շռայլում էր իր դրամը՝ կանչելու համար ամենահռչակավոր բժիշկներին, որովհետև նա այդ երիտասարդների ոչ միայն վարքի և գիտելիքների համար էր պատասխանատու՝ ծնողների առաջ: Եթե դրանցից մեկն ու մեկը՝ ազնիվ բնավորության տեր, որևէ դժբախտություն ունենար, ապա այդ հին վաճառականները գիտեին գնահատել այն ունակությունը, որ իրենք էին զարգացրել և չէին տատանվում վստահելու իրենց դստեր երջանկությունը այն մարդուն, որին նրանք երկար ժամանակ վստահել էին իրենց հարստությունը: Գիյոմը հենց այդ վաղեմի մարդկանցից մեկն էր. եթե նա ուներ դրանց ծիծաղելի կողմերը, ապա և նա իր մեջ խտացնում էր դրանց բոլոր բարեմասնությունները: Դրա համար էլ Ժոզեֆ Լեբան՝ նրա ավագ գործակատարը, հարստությունից զուրկ մի որբ, նրա մտքում հանդիսանում էր նրա մեծ դստեր՝ Վիրժինիի ապագա փեսացուն: Սակայն Ժոզեֆը երբեք էլ չէր բաժանում իր տիրոջ հետևողական հայացքները, իսկ սա ոչ մի կերպ չէր համաձայնի իր երկրորդ աղջիկն ամուսնացնել առաջինից շուտ: Դժբախտ գործակատարն զգում էր, որ իր սիրտն ամբողջությամբ տիրել է կրտսերը, օրիորդ Օգյուստինը: Արդարացնելու համար այդ բուռն սերը, որն աճել էր գաղտնաբար, անհրաժեշտ է ավելի խոր թափանցել այդ հին կերպասավաճառի տունը կառավարող բացարձակ իշխանության սահմաններից ներս:
Գիյոմն ուներ երկու աղջիկ: Մեծը՝ օրիորդ Վիրժինին, իսկ ու իսկ մոր դիմանկարն էր: Տիկին Գիյոմը՝ պարոն Շևրելի դուստրը, այնքան ձիգ էր պահում իրեն վաճառասեղանի նստարանի վրա, որ նա բազմիցս լսել էր հանաքասերների գրազ գալը՝ թե այնտեղ դրված ինչ-որ հարդալից մանեկեն էր: Նրա երկարավուն և նիհար դեմքն արտահայտում էր չափից դուրս պաշտոնասիրություն: Հրապուրանքից և բարեձևությունից միանգամայն զուրկ՝ տիկին Գիյոմն իր վաթսունամյա գլուխը սովորաբար պաճուճում էր մի գդակով, որի ձևն անփոփոխ էր և զարդարված ծոպերով, ինչպես այրի կնոջ գդակն է լինում: Բոլոր հարևանները նրան անվանում էին, ինչպես մենաստանում, «քույր դռնապանուհի»: Նրա խոսքը կտրուկ էր և շարժուձևերը հիշեցնում էին հեռագրամեքենայի ընդհատ-ընդհատ ազդանշաններին: Հայացքը՝ հստակ, ինչպես կատվինն է, լի ոխակալությամբ բոլորի նկատմամբ, կարծես մարդիկ պատասխանատու լինեին իր

տգեղության համար: Օրիորդ Վիրժինին, որը, ինչպես իր կրտսեր քույրը, դաստիարակվել էր մոր բռնակալական իշխանության ներքո, բոլորում էր իր քսանութերորդ տարին: Երիտասարդությունը մեղմացնում էր այն ապաշնորհ տեսքը, որ երբեմն նրա դեմքին տալիս էր մոր հետ ունեցած նրա նմանությունը: Սակայն մայրական խստապահանջությունը նրան օժտել էր երկու մեծ բարեմասնություններով, որոնք կարող էին ամեն ինչ հակակշռել. նա քաղցրաբարո էր և համբերատար: Օրիորդ Օգյուստինը, հազիվ տասնութ տարեկան, չէր նմանվում ո՛չ հորը, ո՛չ մորը: Սա այն աղջիկներից էր, որոնք այնքան զուրկ են իրենց տգեղ ծնողների նմանությունից, որ նրանց տեսնելիս, մարդու մտքին է գալիս բարեպաշտ առածը, թե «աստված է տալիս երեխաներին»: Օգյուստինը փոքրահասակ էր, բայց ավելի ճիշտ պատկերելու համար, ասենք գողտրիկ էր: Շնորհագեղ ու անմեղունակ այդ դյութական էակի մոտ կենցաղագետ մարդը նրա երեսով տալու ոչինչ չէր կարող գտնել, բացի ձեռքի մի քանի անճարտար շարժումներից կամ կեցվածքի որոշ ռամկությունից, երբեմն էլ՝ բռնազբոսիկությունից: Նրա լռակյաց և անշարժ դեմքն արտահայտում էր այն անցողիկ մելամաղձոտությունը, որը տիրում է բոլոր մանկամարդ աղջիկներին, երբ սրանք չափից դուրս են թույլ, որպեսզի համարձակվեն դիմադրել մոր քմահաճ կամայականություններին: Միշտ համեստորեն հագնված՝ այս երկու քույրերը կնոջ մոտ եղող բնածին պչնասիրությունը չէին կարող բավարարել այլ կերպ, բայց եթե վերին աստիճանի մաքրասիրությամբ, որը նրանց այնքան հրաշալիորեն սազում էր և ներդաշնակվում այդ փայլեցված վաճառասեղանների, այդ դարակների հետ, որոնց վրա ծեր սպասավորը փոշու ամենափոքր հատիկն անգամ չէր կարող հանդուրժել, նրանց շրջապատող հնամենի կահավորանքի հետ: Ստիպված լինելով իրենց կենցաղի բերումով դժվարին և համառ աշխատանքներում փնտրել երջանկության տարրեր՝ Օգյուստինն ու Վիրժինին, մինչ այդ, միայն գոհունակություն ու հաճույք էին պատճառել իրենց մորը, որը ներքնապես հրճվում էր՝ տեսնելով իր երկու աղջիկների անթերի բնավորությունը: Հեշտությամբ կարելի է պատկերացնել նրանց ստացած դաստիարակության արդյունքները: Առևտրի համար կրթված, միմիայն չարչիական տխրալից պատկերացումներ և հաշիվներ լսելու սովոր, անցած լինելով միմիայն քերականություն, փոքր-ինչ հրեից պատմություն, Ֆրանսիայի պատմությունն ըստ Լերագուայի և չկարդալով այլ բան, բայց եթե միայն այն հեղինակների գրքերը, որոնց ընթերցումը թույլատրված էր մոր կողմից՝ նրանց մտահորիզոնը չափազանց քիչ էր ընդարձակվել. նրանք շատ լավ իմանում էին առտնին տնտեսվարությունը, հասկանում էին իրերի արժեքը, գիտեին գնահատել այն դժվարությունները, որ մարդ կրում է փող կուտակելիս. նրանք խնայասեր էին և մեծ հարգանք էին տածում վաճառականի արժանիքների հանդեպ: Չնայած իրենց հոր հարստությանը՝ նրանք նույնքան ճարտար էին կարկատաններ անելու, ինչքան և ասեղնագործելու մեջ. հաճախ նրանց մայրը խոսում էր խոհարարական արվեստը նրանց սովորեցնելու մասին, որպեսզի նրանք լավ իմանային ճաշ պատրաստել և հարկ եղած դեպքում կարողանային հանդիմանել խոհարարուհուն գիտակցորեն՝ որպես հասկացող: Անգիտանալով աշխարհիկ հաճույքները և տեսնելով, թե ինչպե՛ս էր ընթանում իրենց ծնողների օրինակելի կյանքը, նրանք հազվադեպորեն էին իրենց հայացքները գցում հայրական տան շրջապատից այն կողմ, տուն, որը իրենց մոր համար տիեզերքն էր ներկայացնում: Ընտանեկան տոնախմբությունների առթիվ տեղի ունեցող հավաքույթները նրանց երկրային վայելքների միակ հեռանկարն էին կազմում: Երբ երկրորդ հարկում գտնվող մեծ դահլիճը պետք է ընդուներ տիկին Ռոգենին՝ ծննդյամբ Շևրել, որն իր հորեղբոր աղջկանից տասնհինգ տարով փոքր էր և կրում էր ադամանդներ, երիտասարդ Ռաբուրդենին՝ գրասենյակի պետի տեղակալ ֆինանսների մինիստրությունում, պարոն Ցեզար Բիրոտոյին, անուշահոտ օծանելիքների հարուստ վաճառական և սրա տիկնոջը, տիկին Բիրոտոյին, պարոն Կամյուզոյին, Բուրդոնե փողոցում մետաքսեղենի վաճառականներից ամենահարուստը, երկու կամ երեք բանկիրների, անբասիր բարքերով մի քանի կանանց, ապա, յուրահատուկ եղանակով փաթաթված արծաթյա և բյուրեղյա սպասները, սաքսոնական ճենապակիները, մոմակալները պատրաստելու համար անհրաժեշտ աշխատանքը փոփոխություն էր մտցնում այդ երեք կանանց միօրինակ կյանքի մեջ, որոնք գնում գալիս էին տենդոտ եռանդով՝ ինչպես միանձնուհիներն արքեպիսկոպոսի ընդունելության ժամանակ: Այնուհետև, երբ երեկոյան երեքով հոգնած՝ սրբելուց, շփելուց, ծրարները քանդելուց, տոնախմբության զարդարանքները դասավորելուց՝ երկու աղջիկներն օգնում էին իրենց մորը, պառկելու, տիկին Գիյոմը նրանց ասում էր.

— Երեխաներս, մենք այսօր ոչինչ չենք արել:

Երբ այս հանդիսավոր հավաքույթներում «քույր-դռնապանուհին» թույլ էր տալիս պարել՝ բոստոնի, վիստի և նարդի խաղերը կենտրոնացնելով իր ննջասենյակում, ապա այդ արտոնությունը համարվում էր մեկն այն երջանիկ անակնկալներից, որ այդ աղջիկները հազիվ թե կարողանային հուսալ, և որը նրանց պատճառում էր նույնքան հաճույք, ինչքան երկու կամ երեք մեծ պարահանդեսներ գնալը, ուր Գիյոմն էր տանում նրանց՝ բարեկենդանի ժամանակ: Վերջապես, տարին մեկ անգամ հյուրամեծար կերպասավաճառը խնջույք էր տալիս, որի համար ոչինչ չէր խնայվում: Ինչքան էլ մեծահարուստ և պերճաշուք լինեին հրավիրված անձնավորությունները, նրանք չէին կարող խույս տալ այդտեղ ներկա լինելուց, որովհետև

առևտրական հրապարակի ամենաերևելի տներն անգամ այս կամ այն կերպ դիմում էին պարոն Գիյոմի անսահման վարկին, կապիտալին, կամ նրա հին փորձառությանը: Սակայն այդ արժանավոր վաճառականի երկու աղջիկները չէին օգտվում, ինչքան այդ կարելի է ենթադրել, այն դասերից, որ աշխարհիկ կյանքն է տալիս մատղաշ հոգիներին. այդ հավաքույթներին, որոնց ծախսերը գրանցվում էին վաճառատան ելքի տոմարում, նրանք գալիս էին այնպիսի պաճուճանքներով, որոնց խեղճությունը նրանց շիկնեցնում էր. նրանց պարելու եղանակը ակնառու ոչինչ չուներ, մոր հսկողությունը թույլ չէր տալիս նրանց իրենց կավալերների հետ պերճախոսել այլ կերպ, քան «այո» կամ «ոչ»-ով: Բացի այդ՝ «Գնդակ խաղացող կատվի» վաճառատան հին օրենքը հրամայողաբար սահմանում էր տանը լինել ժամը տասնմեկին, այն պահին, երբ պարահանդեսներն ու տոնախմբություններն սկսում են աշխուժանալ: Այդպիսով, նրանց զվարճությունները առերևույթ, ասես, համապատասխանում էին հոր հարստությանը, բայց այդ ընտանիքի սովորությունների և կարգ ու կանոնի պատճառով անգույն էին դառնում: Ինչ վերաբերում է նրանց առօրյային, ապա, պատկերն ավարտելու համար բավական է նշել մի դիտողություն. տիկին Գիյոմը պահանջում էր, որ իր աղջիկները հագնված լինեն վաղ առավոտյան, որ՝ նրանք իջնեն ներքև միևնույն ժամին, վերջապես, նա նրանց զբաղմունքները ենթարկում էր վանական կանոնավորության: Այսուհանդերձ, դիպվածն Օգյուստինին տվել էր բավականին բարձր մի հոգի, որպեսզի նա զգար այդ գոյության ունայնությունը: Երբեմն նա իր կապուտակ աչքերն անձկությամբ ման էր ածում այդ մռայլ սանդուղքի և խոնավ վաճառատան խորքերը, ասես հարցաքննում էր: Եվ զննելուց հետո այդ մենաստանային լռությունը՝ նրան թվում էր թե, որպես հայտնություն, հեռվից լսում է տարտամ հևքը ինչ-որ կրքոտ, սիրաբորբոք մի կյանքի, որն ավելի բարձր է դասում զգացմունքներն իրերից: Այդ որպեներին նրա դեմքը շառագունում էր և ձեռքերը թուլացած, բաց էին թողնում սպիտակ բեհեզը, որն ընկնում էր վաճառասեղանի հղկված կաղնեփայտի վրա. իսկույն մայրն ասում էր նրան այնպիսի ձայնով, որը միշտ էլ մնում էր կծու՝ նույնիսկ իր ամենաքնքուշ շեշտերում.

— Օգյուստի՛ն, դու ինչի՞ մասին ես մտածում, գոհարս:

Գուցե, «Դուգլասի կոմս Հիպոլիտը» և «Կոմինգի կոմսը»

5

, երկու վեպեր, որ Օգյուստինը գտել էր տիկին Գիյոմի կողմից վերջերս հեռացված խոհարարուհու դարակի միջից, նպաստեցին զարգացնելու այդ մանկամարդ աղջկա գաղափարները. նա այդ վեպերը ծածուկ և ագահորեն կարդացել էր նախորդ ձմռան երկար գիշերների ընթացքում: Ուստի Օգյուստինի ինչ-որ անորոշ տենչանքի արտահայտությունները, քաղցրիկ ձայնը, թավշյա մորթը, կապույտ աչքերը բորբոքել էին խեղճ Լեբայի սրտում մի այնպիսի սեր, որը, մնալով հարգալից, առավել ևս փոթորկում էր նրա հոգին: Հեշտությամբ հասկանալի ինչ-որ քմայքով՝ Օգյուստինը ոչ մի հակում չուներ այդ որբի հանդեպ. գուցե նրա համար, որ ինքը չգիտեր, թե սիրված է: Դրան հակառակ, ավագ գործակատարի երկար սրունքները, շագանակագույն մազերը, խոշոր ձեռքերը, հուժկու պարանոցը գաղտնորեն սքանչացրել էին օրիորդ Վիրժինիին, որի հետ, չնայած իր հիսուն հազար ֆրանկ օժիտին, ոչ ոք ամուսնանալու ցանկություն չէր հայտնել: Ոչինչ այնքան բնական չէ, ինչքան այս երկու ներհակ սերերը, որոնք ծնվել էին այդ մթին վաճառասեղանների լռության մեջ, ինչպես մանուշակներն են ծաղկում անտառների խորքում: Լուռ և հարատև հայեցողությունը, որը, համառ և տաղտկալի աշխատանքների ընթացքում, վանական անվրդով խաղաղության մեջ, սփոփանքի սաստիկ կարիքից մղված, միավորում էր այդ երիտասարդների նայվածքները, անշուշտ, վաղ թե ուշ, պետք է հրահրեր սիրո զգացմունքներ: Միևնույն դեմքն անընդհատ տեսնելու սովորությունն այդ դեմքի վրա հայտնաբերել է տալիս հոգու արժանիքները և ի վերջո ջնջում դրա թերությունները:

«Եթե նա այդ շարունակի նույն թափով, մեր աղջիկները շուտով տեղի կտան, ինչ փեսացու էլ պատահի»,— ինքն իրեն ասաց պարոն Գիյոմը, կարդալով Նապոլեոնի առաջին հրովարտակը, որով ժամկետից շուտ զորակոչ էր ազդարարում:

Այդ օրվանից, հուսահատությամբ դիտելով իր մեծ աղջկա թառամումը, ծերունի վաճառականը հիշեց, թե ինքը օրիորդ Շևրելի հետ ամուսնացել էր գրեթե նույն այդ կացության մեջ, ուր գտնվում էին Ժոզեֆ Լեբան և Վիրժինին: Ինչ լավ գործ կլիներ ամուսնացնել իր աղջկան և հատուցել մի սրբազան պարտք՝ վերադարձնելով մի որբի այն բարիքը, որ ինքն էր ստացել ժամանակին իր նախորդից՝ նույնպիսի հանգամանքներում: Լինելով երեսուներեք տարեկան, Ժոզեֆ Լեբան մտածում էր այն խոչընդոտների մասին, որ տարիքի տասնհինգ տարվա տարբերությունը հարուցում էր իր և Օգյուստինի միջև: Նա արդեն չափազանց խորաթափանց էր, որպեսզի չգուշակեր պարոն Գիյոմի տրամադրությունը և բավականին լավ գիտեր նրա անողոք սկզբունքները, որպեսզի հասկանար, թե փոքրը երբեք չէր ամուսնանա նախքան մեծը: Ուստի և խեղճ գործակատարը, որի սիրտը պատվական էր այնքան, որքան սրունքներն էին երկար և իրանը ամրակազմ, լուռ տառապում էր:

Այսպիսին էր իրադրությունը այս փոքրիկ ռեսպուբլիկայում, որը, Սեն-Դընի փողոցի միջում, բավականին նմանվում էր Տրապիստների մենաստանի բաժանմունքի: Սակայն արտաքին

իրադարձությունների, ինչպես նաև զգացմունքների ճշգրիտ հաշվետվությունը ներկայացնելու համար հարկավոր է մի քանի ամսով ետ գնալ այն տեսարանից, որով սկսում է այս պատմությունը: Մի անգամ երեկոյան, երբ մութն ընկել էր, մի երիտասարդ, անցնելով «Գնդակ խաղացող կատվի» մութ վաճառատան առջևով, մի րոպե մնացել էր կանգնած այնտեղ՝ հափշտակված մի այնպիսի պատկերով, որը պիտի կանգնեցներ աշխարհի բոլոր նկարիչներին: Խանութը դեռևս լուսավորված չէր, և այդ սև ֆոնի խորքում երևում էր վաճառականի սեղանատունը: Առաստաղից կախված լամպը շեշտակիորեն սփռում էր այն դեղնավուն լույսը, որն այնպես հրապույր է տալիս հոլանդական դպրոցի նկարներին: Սեղանի սպիտակափայլ ծածկույթը, արծաթյա և բյուրեղյա սպասները այդ պատկերը հարստացնող հարակից շքեղ մասեր էին, որոնք առավել ևս գեղեցկանում էին լույսի և ստվերների միջև առաջացած սաստիկ հակադրություններով: Ընտանիքի հոր, սրա կնոջ, ինչպես նաև գործակատարների դեմքերը, Օգյուստինի նուրբ դիմագծերը և նրանից երկու քայլի վրա կանգնած խոշորակազմ, թշեղ մի աղջիկ, կազմում էին չափազանց հետաքրքրական մի խումբ. այդ գլուխներն այնքան էին ինքնատիպ, և յուրաքանչյուր կերպարանք ուներ այնքան հարազատ և անկեղծ արտահայտություն, այնքան հեշտ ու պարզ կարելի էր գուշակել այդ ընտանիքի խաղաղությունը, լռությունն ու համեստ կյանքը, որ բնությունն արտահայտելու սովոր մի արվեստագետի մեջ, անսպասելիորեն ինքնամատույց այդ տեսարանը վերարտադրելու բուռն ցանկություն էր առաջանում: Այդ անցորդը մի երիտասարդ նկարիչ էր, որը յոթ տարի առաջ շահել էր նկարչության առաջին մեծ մրցանակը: Նա նոր էր վերադարձել Հռոմից: Երկար ժամանակ բնակվելուց հետո այդ պերճ երկրում, ուր արվեստն ամենուրեք սփռել է իր հոյատեսիլ շքեղությունները, բանաստեղծությամբ սնված նրա հոգին, Ռաֆայելով և Միքել-Անջելոյով հագեցած նրա աչքերը անեղծ բնության ծարավն ունեին: Սխալ լիներ, թե ճիշտ՝ այդպիսին էր նրա սեփական զգացմունքը: Երկար ժամանակ անձնատուր լինելով իտալական փոթորկահույզ կրքերի, նրա հոգին տենչում էր մի համեստ և ինքնամփոփ կույսի, ինչպիսին, դժբախտաբար, Հռոմում նա միայն նկարների մեջ կարողացել էր գտնել: Դիտելով այդ կենդանի պատկերը, նրա հոգին իր հուզավառ ոգևորությունից բնականաբար անցավ հիացմունքի՝ գլխավոր ֆիգուրի նկատմամբ: Օգյուստինը մտախոհ տեսք ուներ և ոչինչ չէր ուտում. լամպն այնպես էր կախված, որ լույսն ամբողջությամբ ընկնելով նրա դեմքին, թվում էր, թե նրա կուրծքը բարձրանում և իջնում էր հրեղեն շրջանակի մեջ, որը տարանջատում էր առավել ցայտունությամբ նրա գլխի շրջագծերը և այն լուսավորում ինչ-որ գերբնական ձևով: Արվեստագետն ակամայից նրան համեմատեց մի տարագիր հրեշտակի հետ, որը երկինքն էր հիշում: Գրեթե անծանոթ մի զգացողություն, մի վճիտ, հորդեռանդ սեր հեղեղեց նրա հոգին: Մի րոպե այդպես մնալուց հետո, կարծես խորտակված իր մտքերի ծանրության տակ, նա պոկ եկավ իր երջանիկ հոգեզմայլանքից, վերադարձավ տուն, չկերավ, ամենևին չքնեց: Հաջորդ օրը նա մտավ իր արվեստանոցը և այնտեղից դուրս եկավ միայն այն ժամանակ, երբ արդեն նա հանձնել էր կտավին այդ դյութական տեսարանի կախարդանքը, մի տեսակ մոլեգնած՝ դրա հիշողությամբ: Եվ նրա երջանկությունը մնաց անկատար այնքան ժամանակ, մինչև նա ունեցավ իր պաշտած աղջկա հավատարիմ դիմանկարը: Նա շատ անգամներ անցավ «Գնդակ խաղացող կատվի» վաճառատան առջևով. նա նույնիսկ համարձակվեց մեկ-երկու անգամ ծպտված մուտք գործել այնտեղ, որպեսզի ավելի մոտիկից տեսնի այն չքնաղ էակին, որին տիկին Գիյոմը թևերի տակ էր պահում: Ութ ամիս շարունակ անձնատուր լինելով իր սիրույն, իր վրձիններին՝ նա մնաց անտեսանելի իր ամենամտերիմ բարեկամների համար իսկ, մոռանալով աշխարհը, պոեզիան, թատրոնը, երաժշտությունն ու իր ամենաթանկ սովորությունները: Մի առավոտ, Ժիրոդեն

, խախտելով բոլոր արգելքները, որոնք հայտնի են արվեստագետներին, և որոնց միջև նրանք գիտեն խուսանավել, հասավ մինչև նա, և նրան սթափեցրեց իր հարցումով.

— Ի՞նչ ես ներկայացնելու պատկերասրահին:

Արվեստագետը բռնեց իր բարեկամի ձեռքը, նրան քաշ տվեց մինչև իր արվեստանոցը, բաց արավ մի փոքրադիր նկար ու մի դիմանկար: Դանդաղորեն և ագահաբար դիտելուց հետո այդ երկու գլուխգործոցները՝ Ժիրոդեն նետվեց իր բարեկամի վզին և գրկեց նրան՝ ոչ մի խոսք չգտնելով: Նրա հուզմունքը կարելի չէր արտահայտել այլ կերպ, քան այնպես, ինչպես ինքն էր զգում՝ հոգուց հոգի անցնող զգացմունքների լեզվով:

— Դու սիրահարվա՞ծ ես,— հարցրեց Ժիրոդեն:

Նրանք երկուսով գիտեին, որ Տիցիանը, Ռաֆայելն ու Լեոնարդո դա Վինչին իրենց ամենագեղեցիկ ստեղծագործությունները պարտական են խելացնոր զգացումների, որոնք տարբեր պայմաններում ստեղծում են բոլոր տեսակի գլուխգործոցները: Ուստի, որպես պատասխան՝ երիտասարդ արվեստագետը կախեց գլուխը:

— Ի՞նչ երջանիկն ես, որ կարողանում ես սիրահարվել այստեղ, այն ժամանակ, երբ վերադառնում ես Իտալիայից: Ես քեզ խորհուրդ չեմ տալիս այսպիսի գործերը ցուցադրել,— ավելացրեց տաղանդավոր արվեստագետը:— Լսի՛ր, այս երկու նկարները չէին ընկալվի պատկերահանդեսում:

Այս միանգամայն իրական գույները, այս հրաշալի գործը դեռևս չեն կարող գնահատվել, հասարակությունն այլևս սովոր չէ այս աստիճանի խորության: Ի՞նչ մենք այժմ նկարում ենք, թանկագի՛ն բարեկամս, էկրաններ են, շիրմաներ: Ազնիվ խոսք, ավելի լավ է ոտանավորներ գրել, թարգմանել հնադարյան հեղինակների. այդպիսով ավելի փառքի կհասնենք, քան այս խղճուկ կտավներով:
Հակառակ բարյացակամորեն տրված այս խորհրդին, այդ երկու նկարները ցուցադրվեցին: Ընտանեկան կենցաղի տեսարանը ուղղակի հեղաշրջում առաջացրեց նկարչության մեջ: Դա ծնունդ տվեց կենցաղային այն նկարներին, որոնք այնպիսի մեծ քանակությամբ հեղեղեցին մեր բոլոր պատկերասրահները, որ կարելի էր կարծել, թե դրանք ստացվում էին ինչ-որ զուտ մեխանիկական եղանակով: Ինչ վերաբերում է դիմանկարին, ապա՝ թվով քիչ են այն արվեստագետները, որոնք դեռևս չեն պահում հիշատակն այն կենդանի կտավի, որին հասարակությունը — երբեմն արդարադատ — շնորհեց հաղթանակի պսակը, որ Ժիրոդեն իր իսկ ձեռքով տեղավորեց այնտեղ: Այդ երկու նկարները շրջապատվեցին հսկայական բազմությամբ: Այնտեղ կարելի էր ճխլվել, ինչպես ասում էին կանայք: Սպեկուլյանտներ, մեծ ազնվապետներ այդ նկարները. ծածկեցին նապոլեոն զույգ ոսկիներով, արվեստագետը համառորեն մերժեց դրանք վաճառել, նա մինչև անգամ հրաժարվեց դրանցից պատճեններ նկարահանել: Նրան առաջարկեցին հսկայական գումարներ, որպեսզի գեթ իրավունք ունենան դրանցից գրավյուրներ փորագրել, սակայն վաճառականներն ավելի բախտավոր չեղան, քան արվեստի սիրահարները: Թեև այս արկածային իրադարձությունը մեծ աղմուկ բարձրացրեց հասարակության մեջ, այնուամենայնիվ, դա իր բնույթով իսկ չէր կարող հասնել մինչև Սեն-Դընի փողոցի ճգնարանը: Եվ սակայն, տիկին Գիյոմի մոտ այցելության գալով՝ նոտարի կինը խոսեց պատկերահանդեսի մասին Օգյուստինի ներկայությամբ, որին նա շատ էր սիրում, միևնույն ժամանակ նրան բացատրելով դրա նշանակությունը: Տիկին Ռոգենի շատախոսությունը բնականաբար Օգյուստինին ներշնչեց նկարները տեսնելու ցանկություն և համարձակություն, որպեսզի նա ծածուկ խնդրի ազգականուհուն իրեն ուղեկցել մինչև Լուվրը: Զարմուհին հաջողությամբ բանակցություններ վարեց տիկին Գիյոմի հետ և թույլտվություն ստացավ իր դեռատի ազգականուհուն ոչ ավելի, քան երկու ժամով պոկելու նրա տխուր աշխատանքներից: Ուստի, ճեղքելով ամբոխը՝ Օգյուստինը կարողացավ հասնել մինչև պսակազարդ նկարը: Ինչ-որ դող պարուրեց նրա համակ էությունը, և նա սարսռաց թխկու տերևի պես, երբ նկարի մեջ ճանաչեց իրեն: Ահաբեկված՝ նա իր շուրջը նայեց, որպեսզի միանա տիկին Ռոգենին, որից նա բաժանվել էր ծովածավալ բազմությամբ: Այդ ոոպեին նրա վախեցած հայացքը հանդիպեց երիտասարդ արվեստագետի բոցավառ դեմքին, և հանկարծ նա հիշեց իրենց տան մոտ շրջագայող մեկի դիմագիծը, որին նա հետաքրքրասիրությունից տարված, հաճախ նկատել էր, մտածելով, թե նա ինչ-որ մի նոր հարևան կլիներ:
— Դուք տեսնո՞ւմ եք, թե սերն ինչ է ներշնչել ինձ,— ասաց արվեստագետն այդ խոսքերից սարսափած երկչոտ էակի ականջին:
Գերմարդկային արիությամբ աղջիկը ճեղքեց ճնշումը՝ միանալու համար իր ազգականուհուն, որը դեռևս ջանք էր գործադրում, որպեսզի իր համար անցք բանա մինչև նկարը հասնելու արգելք հանդիսացող բազմության միջով:
— Դուք ուղղակի շնչահեղձ կլինեք,— գոչեց Օգյուստինը,— գնանք:
Սակայն նկարահանդեսում երբեմն այնպես խռնված են լինում, որ դժվար է երկու կանանց համար ազատորեն շարժվել պատկերասրահներում իրենց ցանկացած ուղղությամբ: Բազմության անկարգ շարժումը երկու կանանց մոտեցրեց երկրորդ նկարին: Դիպվածի բերումով՝ նրանք դյուրություն ունեցան երկուսով մոտենալու այն նկարին, որ ընդհանուրի ճանաչման էր արժանացել... Բայց այս անգամ տաղանդի հետ համաձայն: Նոտարի կինը զարմանքի մի բացականչություն արձակեց, որը կորավ ամբոխի ժխորի և բզզոցի մեջ, իսկ Օգյուստինն ակամայից լաց եղավ՝ տեսնելով այդ հրաշալի պատկերը: Ապա՝ գրեթե անբացատրելի մի զգացմունքով, նա մատը դրեց շուրթերին, երբ իրենից երկու քայլի վրա տեսավ՝ երիտասարդ արվեստագետի զմայլանք արտահայտող դեմքը: Անծանոթը գլխի շարժումով մատնանշեց տիկին Ռոգենին որպես խանգարողի և այդպիսով աղջկան նշան արեց, որ նրան հասկացել է: Այդ մնջախաղը կարծես թեժ կրակով վառեց խեղճ աղջկա ամբողջ մարմինը: Նա գտնում էր, թե ինքը՝ հանցագործ է, պատկերացնելով, որ արվեստագետի և իր միջև արդեն իսկ կայացել է ինչ-որ համաձայնություն: Հեղձուցիչ տոթը, շողշողուն արդուզարդի անընդհատ տեսքը, գույների ներգործությունից Օգյուստինի ունեցած գլխապտույտը, կենդանի կամ նկարված դեմքերի խուռն բազմությունը, ոսկյա շրջանակների առատությունն աղջկա մեջ առաջացրին մի տեսակ արբեցություն, որը կրկնապատկեց նրա երկյուղը: Նա գուցե և ուշաթափվեր, եթե՝ հակառակ այդ զգացողությունների քաոսին, նրա սրտի խորքում բարձրացած չլիներ իրեն միանգամայն անծանոթ ինչ-որ բերկրանք, որը ողողեց նրա բովանդակ էությունը: Այնուհանդերձ, նա կարծեց, թե ինքն արդեն իսկ գտնվում է այն դևի ազդեցության տակ, որի զարհուրելի որոգայթների մասին նախօրոք իրեն հայտնվել էր քարոզիչների որոտընդոստ ճառերով: Նրա համար այդ եղավ

խենթության մի րոպե. նա տեսավ, թե ինչպես երջանկությամբ և սիրով փողփողուն այդ երիտասարդն ուղեկցեց իրեն մինչև իր ազգականուհու կառքը: Ճարակ դարձած նոր մի գրգիռի, մի գինովության, որը նրան մատնում էր բնությանը, Օգյուստինը լսեց իր սրտի պերճախոս ձայնը և մի քանի անգամ նայեց երիտասարդ արվեստագետին՝ ակնհայտ ցույց տալով իր հոգու խռովքը: Նրա այտերի վարդակարմիրը երբեք այնքան սաստկությամբ հակադրություն չէր կազմել նրա մորթի սպիտակության հետ: Ուստի, արվեստագետը տեսավ այդ գեղեցկուհուն նրա լիակատար փթթումի մեջ, այդ կույսին՝ ամոթխածության ողջ փայլով: Օգյուստինն զգաց միաժամանակ թե ուրախություն և թե սարսափ, երբ մտածեց, թե իր ներկայությունը երջանկություն էր պատճառում այն մարդուն, որի անունը բոլորի շուրթերի վրա էր, որի տաղանդը անմահություն էր տալիս վաղանցուկ պատկերներին: Նա սիրված էր. անհնարին էր տարակուսել այդ մասին: Արվեստագետն արդեն հեռացել էր, բայց Օգյուստինի սրտում դեռևս թնդում էին այս պարզ խոսքերը. «Դուք տեսնո՞ւմ եք, թե սերն ինչ է ներշնչել ինձ»: Եվ բաբախումները դառնալով ավելի խորունկ՝ կարծես խոցոտում էին նրա կուրծքը՝ այնքան նրա առավել բորբոքված արյունը մարմնում արթնացնում էր անծանոթ ուժեր: Նա ձևացրեց, թե սաստիկ գլխացավ ունի, որպեսզի խուսափի պատասխանելուց նկարների վերաբերյալ իր ազգականուհու տված հարցերին: Սակայն, վերադարձին, տիկին Ռոգենը չկարողացավ իրեն զսպել և հայտնեց տիկին Գիյոմին, թե ինչպե՜ս հռչակվել է «Գնդակ խաղացող կատուն», և Օգյուստինը դողաց ամբողջ մարմնով, երբ լսեց, թե մայրն ուզում էր գնալ պատկերահանդես՝ այնտեղ տեսնելու իր տունը: Մանկամարդ աղջիկը կրկին անգամ պնդեց, թե շատ վատ է զգում և թույլտվություն խնդրեց գնալ պառկելու:

— Ահա թե ի՜նչ օգուտ կարելի է ստանալ այդ տեսարաններից,— գոչեց պարոն Գիյոմը,— . ..գլխացավեր: Մի՞թե այդ աստիճանի զվարճալի բան է տեսնել նկարում այն, ինչ ամեն օր պատահում է մեր փողոցում: Դուք ինձ մի խոսեք այդ արվեստագետների մասին, որոնք, ինչպես և ձեր հեղինակները, սոված մարդիկ են: Ո՞ր սատանան է նրանց ստիպում իմ տունը նախշել իրենց նկարներում:

— Դա կարող է նպաստել, որ դուք մի քանի կանգուն ավելի կերպաս վաճառեք,— ասաց Ժոզեֆ Լեբան:

Չնայած այս դիտողությանը՝ արվեստն ու մտածողությունը մի անգամ ևս դատապարտվեցին վաճառականության ատյանի առջև: Պետք է մտածել, որ այդ դատողությունները ոչ մի հուսալի հեռանկար չբացեն Օգյուստինին: Գիշերն ամբողջ նա անձնատուր եղավ սիրո առաջին խոկումներին: Այդ օրվա իրադարձությունները կարծես երազ լինեին, որ նա հաճույքով վերարտադրում էր իր մտքում: Նա համակվեց երկյուղներով, հույսերով, տագնապներով, զգացմունքային այն բոլոր տատանումներով, որոնք պետք է օրորեին պարզունակ և երկչոտ մի սիրտ՝ ինչպիսին նրա սիրտն էր: Ի՜նչ ունայնություն նա հայտնաբերեց այդ մթին տան մեջ և ի՜նչ գանձեր՝ իր հոգում: Տաղանդավոր մի մարդու կին լինել, մասնակից դառնալ նրա փառքին... Այդ միտքն ի՞նչ ավերներ ասես, պիտի չգործեր այդ ընտանիքի ծոցում հասակ առած մի երեխայի սրտում: Դա ի՜նչ հույսեր պիտի չարթնացներ մինչ այդ հասարակ զգացմունքներով սնված մի մատղաշ հոգում, որը տենչացել էր շքեղ կյանքի: Արևի մի շողք էր ընկել այդ բանտի մեջ: Օգյուստինը սիրեց միանգամից: Նրա մեջ այնքան շատ զգացմունքներ էին շոյված միաժամանակ, որ նա տեղի տվեց առանց կշռադատելու: Տասնութ տարեկան հասակում՝ սերն իր պրիզման չի՞ դնում աշխարհի և աղջկա աչքերի միջև: Օգյուստինը կարո՞ղ էր կանխագուշակել այն ծանր ընդհարումները, որոնցով վերջանում է սիրող կնոջ և երևակայության տեր տղամարդու կապը: Նա հավատում էր, թե ինքը կոչված է երջանկացնելու նրան՝ առանց նշմարելու իրենց միջև եղած անհավասարությունը: Օգյուստինի համար ողջ ապագան խտացված էր ներկայի մեջ:

Հաջորդ օրը, երբ հայրն ու մայրը վերադարձան պատկերահանդեսից, նրանց մռայլված դեմքերը ինչ-որ հիասթափություն էին արտահայտում: Նախ նկարիչը վերցրել էր այդ երկու նկարները: Բացի այդ, տիկին Գիյոմը կորցրել էր իր կաշմիրե շարֆը: Իմանալով, որ նկարներն անհայտացել էին պատկերահանդեսն իր այցելելուց հետո՝ Օգյուստինը դրանում տեսավ նրբազգացություն, որ կանայք միշտ էլ գիտեն գնահատել, թեկուզ անգիտակցաբար:

Այն առավոտ, երբ Թեոդոր դը Սոմերվիոն, այդպես էր այն անունը, որի հռչակը հասցրել էր մինչև Օգյուստինի սիրտը, պարահանդեսից վերադառնալիս քողարկվել էր «Գնդակ խաղացող կատվի» գործակատարների կողմից, նա սպասում էր իր պարզամիտ բարեկամուհու հայտնվելուն, որը, իհարկե, չգիտեր նրա այնտեղ գտնվելու մասին: Պատկերահանդեսի դեպքից հետո դա ուրեմն չորրորդ անգամն էր միայն, որ երկու սիրահարները հանդիպում էին իրար: Այն արգելքները, որ Գիյոմների տան ներքին կարգն էր հակադրում արվեստագետի կրակոտ բնավորությանը, Օգյուստինի հանդեպ նրա տածած սիրույն հաղորդում էին մի այնպիսի ուժգնություն, ինչպիսին հեշտությամբ կարելի է պատկերացնել: Ինչպե՞ս մոտենալ մի աղջկա, որը նստած է վաճառասեղանի հետև, երկու այնպիսի կանանց միջև, ինչպիսիք օրիորդ Վիրժինին և տիկին Գիյոմն էին: Ինչպե՞ս կարելի էր հարաբերության մեջ մտնել նրա հետ, քանի որ մայրը երբեք չէր հեռանում նրանից: Հմուտ, ինչպես բոլոր սիրահարները՝ իր համար սրտի տվայտանքներ հնարելու

մեջ, Թեոդորը գործակատարներից մեկի մեջ տեսնում էր իր ախոյանին, իսկ մյուսներին նա դարձնում էր նրա դաշնակիցները: Եթե նույնիսկ խուսափեր այնքան շատ արգոսներից
7
, ապա նա պիտի ձախողվեր ծեր վաճառական և կամ տիկին Գիյոմի խիստ հայացքների առաջ: Ամենուրեք խոչընդոտնե՛ր, ամենուրեք հուսահատությո՛ւն: Իր սիրո ուժգնությունն իսկ խանգարում էր երիտասարդ արվեստագետին՝ գտնելու այն ճարտարամիտ հնարները, որոնք կալանավորների, ինչպես նաև սիրահարների մոտ, թվում է, թե հանդիսանում են ազատության սաստիկ կարիքից կամ սիրո կրակից բորբոքված բանականության վերջին ճիգը: Ուրեմն, Թեոդորը ման էր գալիս թաղամասում խելագարի համառությամբ՝ կարծես շարժումը կարող էր իրեն խորամանկություններ ներշնչել: Իր երևակայությունը սաստիկ չարչարելուց հետո՝ նա միտք արեց ոսկով սիրաշահել թշեղ սպասուհուն: Ուստի մի քանի նամակներ փոխանակվեցին, հեռվից հեռու, տասնհինգ օրերի ընթացքում, որոնք հաջորդեցին այն առավոտյան, երբ պարոն Գիյոմն ու Թեոդորը այնքան լավ էին զննել իրար:
Այժմ երկու երիտասարդները համաձայնել էին միմյանց տեսնել կիրակի օրը, որոշ ժամերին, Սեն-Լյո եկեղեցում, պատարագի և երեկոյան ժամերգության ընթացքում: Օգյուստինն իր թանկագին Թեոդորին ուղարկել էր իրենց ընտանիքի ազգականների և բարեկամների ցուցակը. երիտասարդ նկարիչն աշխատեց ընդունվել նրանց մոտ, որպեսզի իր սիրային մտադրությունների նկատմամբ շահագրգռի, եթե երբեք դա հնարավոր էր, մեկն ու մեկին այդ մարդկանցից, որոնց համար ճշմարիտ սերը պետք է թվար ամենահրեշավոր սպեկուլյացիան, մի չլսված սպեկուլյացիա: Ի միջի այլոց, ոչինչ չփոխվեց «Գնդակ խաղացող կատվի» սովորություններում: Եթե Օգյուստինը դարձավ մտացրիվ, եթե ընտանեկան խարտիայի օրենքների տարրական պահանջները ոտնահարելով՝ նա բարձրացավ իր սենյակը, որպեսզի շնորհիվ մի ծաղկամանի, նա այդտեղից ազդանշաններ ուղարկի, եթե նա հոգոց հանեց, եթե, վերջապես, նա մտախոհ դարձավ, ապա ոչ ոք, նույնիսկ մայրը, ոչինչ չնկատեցին: Այս հանգամանքը որոշ չափով պիտի զարմացներ նրանց, ովքեր հասկացած կլինեն այդ տան ոգին, ուր պոեզիայով դրոշմված յուրաքանչյուր միտք անպայմանորեն հակադրություն պիտի կազմեր մարդկանց և իրերի հետ, ուր ոչ ոք չէր կարող իրեն թույլ տալ նվազագույն շարժումը, հայացքը, գիտենալով, որ դրանք պիտի նկատվեն և վերլուծվեն: Սակայն ամեն ինչ բացատրվում էր հասարակ կերպով, այդ նավը, որը «Գնդակ խաղացող կատվի» դրոշի ներքո անվրդով նավարկում էր փարիզյան շուկայի ալեկոծ ծովի վրա, բռնվել էր մի այնպիսի մրրիկի, որպիսին կարելի է անվանել օրահավասարային՝ իր պարբերական վերադարձի պատճառով: Երկու շաբաթ էր, ինչ անձնակազմի չորս մարդիկ, ինչպես նաև տիկին Գիյոմը և օրիորդ Վիրժինին լծվել էին ծայր աստիճանի տանջալի մի աշխատանքի, որը ծանոթ է ապրանքների հաշվառում անունով: Բոլոր հակերը շարժվում էին տեղից, և ստուգվում թոփերի չափը, որպեսզի որոշվեր յուրաքանչյուր կտորի ճշգրիտ արժեքը: Խնամքով քննվում էր յուրաքանչյուր ծրարից կախված կարտը՝ իմանալու համար, թե ե՞րբ էին գնվել կերպասները: Նշանակվում էր նոր գինը: Միշտ ոտի վրա, կանգունը ձեռքում, գրիչն ականջի հետև, պարոն Գիյոմը նմանվում էր մի նավապետի, որը ղեկավարում է նավի շարժումները: Նրա սուր ձայնը, անցնելով օդանցքների միջով՝ հարցապնդելու համար ներքևի պահեստում աշխատող մարդկանց, որոտալից լսվում էր առևտրի ինչ-որ մի բարբարոս, առեղծվածային լեզվով.— ինչքա՞ն Հ. Ն. Զ.-ից: Գնված: Ի՞նչ է մնում Կ. Ս.-ից:— Երկու կանգուն: Գի՞նը: Հինգ-հինգ-երեք:— Փոխադրեցեք երեք Ա-ի վրա ամբողջ— Ի. Ի.-ին, ամբողջ Մ. Գ.-ն և Վ. Դ. Օ.-ի մնացորդը: Հազար ու մի այլ նախադասություններ՝ նույնքան անըմբռնելի, թնդում էին վաճառասեղանների միջով, կարծես լինեին ինչ-որ նորագույն պոեզիայի չափածո ասմունքներ, որ ռոմանտիկներն արտասանում են, միշտ վառ պահելու համար սիրված բանաստեղծի հանդեպ իրենց ունեցած խանդավառությունը: Երեկոյան, Գիյոմը, առանձնանալով իր կնոջ և գործակատարի հետ, հաշիվներ էր փակում, նոր հաշիվներ էր բանում, գրում պարտապաններին և կազմում ֆակտուրաներ: Նրանք երեքով կատարում էին այդ հսկայական աշխատանքը, որի արդյունքն ամփոփվում էր մի մեծադիր թղթի՝ քառակուսու վրա և ապացուցում Գիյոմների վաճառատանը, որ կար այսքան դրամ, այսքան ապրանքային արժեք, փոխանակագիր, այսքան պարտամուրհակ, որ նա ոչ մի սու պարտական չէր, որ նրան պարտ են հարյուր կամ երկու հարյուր հազար ֆրանկ, որ դրամագլուխն ավելացել էր, որ ագարակների, տների, ռենտայի եկամուտները կլորացել են, կարգի են բերվել կամ կրկնապատկվել:
Այդտեղից անհրաժեշտություն էր ծագում ավելի մեծ եռանդով, քան երբևէ, կուտակել նոր էկյուներ, ըստ որում այդ ջանասեր մրջյունների գլխում նույնիսկ առաջ չէր գալիս այն հարցը, թե ինչի՞ է պետք այդ բոլորը:
Օգտվելով տարին մի անգամ տեղի ունեցող այդ խառնաշփոթությունից, երջանիկ Օգյուստինը խուսափում էր իր արգոսների աչալրջությունից: Վերջապես, մի շաբաթ օր երեկո հաշվառումն ավարտվեց: Պահանջի ընդհանուր գումարի թվանշանները բավականին շատ զրոներ ունեին, որպեսզի այդ առիթով վերացվեր այն խիստ արգելքը, որը տարին ամբողջ իշխում էր աղանդերի պահին: Ծածկամիտ կերպասավաճառը ուրախ շփեց ձեռքերը և արտոնեց իր

գործակատարներին չհեռանալ սեղանից: Անձնակազմի մարդկանցից յուրաքանչյուրը հազիվ էր վերջացրել մի փոքրիկ բաժակ տնական խմիչքը, երբ ներքևում լսվեց ինչ-որ կառքի դղրդոց: Ընտանիքը գնաց Վարիետե թատրոնը տեսնելու «Մոխրատիտիկը», մինչդեռ երկու կրտսեր գործակատարները ստանում էին յուրաքանչյուրը վեց ֆրանկ փող և թույլտվություն՝ գնալու այնտեղ, որտեղ իրենք էին ցանկանում, միայն թե վերադարձած լինեին կես-գիշերին: Չնայած այդ խրախճանքին՝ կիրակի առավոտ, ժամը վեցին ծերունի կերպասավաճառը սափրվեց, հագավ իր շագանակագույն ֆրակը, որի հիանալի ցոլքն իրեն միշտ միևնույն գոհունակությունն էր պատճառում, և կապեց ոսկե օղերն իր մետաքսյա լայն անդրավարտիքին, ապա, երբ դեռ բոլորը քնած էին տանը, նա ուղղվեց դեպի խանութի առաջին հարկի բաժանմունքին կից եղող իր փոքրիկ առանձնասենյակը: Սա լույս էր ստանում երկաթյա հաստ ձողերով պաշտպանված մի պատուհանից և նայում փոքրիկ քառակուսի մի բակի, որի պատերն այնքան սև էին, որ դա համարյա ջրհորի էր նմանվում: Ծերունի վաճառականն ինքն իր ձեռքով բացեց իրեն այնքան ծանոթ այդ թիթեղապատ փեղկերը և սահեցնելով՝ բարձրացրեց ապակեփեղկերի կես մասը: Բակի ցուրտ օդը, ներխուժելով, հովացրեց այդ սենյակի տաք մթնոլորտը, որն արտաբուրում էր գրասենյակներին հատուկ հոտը: Վաճառականը մնաց կանգնած՝ ձեռքերը դրած գունաթափ սեկով պատած մի եղեգնյա բազկաթոռի կեղտակալած հենակի վրա, կարծես տատանվում էր այնտեղ նստել: Քնքուշ հայացքով նայեց զույգ գրակալներով սեղանին, ուր, իր դիմաց՝ պատի մեջ բացված մի փոքրիկ կամարի տակ, տեղ էր սարքված իր կնոջ համար: Նա դիտեց համարակալված կարտոնները, պարանները, անոթները, կերպասը դրոշմելու սարքը, անհիշատակ ժամանակներում պատրաստված դրամարկղը, հիշեց պարոն Շևրելին և նրան թվաց, որ տեսնում է նրա ստվերը: Նա մոտեցրեց այդ նույն աթոռակը, որի վրա, տիրոջ դիմաց, ինքը նստել էր անցյալում: Սև կաշվով պատած այդ աթոռակը, որի անկյուններից դուրս էին պրծել, բայց ցած չէին թափվում ձիու մազերը, նա նորից դողդոջուն ձեռքով դրեց նույն այդ տեղը, ուր իր նախորդն էր դրել, ապա մի այնպիսի հուզմունքով, որ դժվար է նկարագրել, նա քաշեց Ժոզեֆ Լեբայի մահճակալի սնարի հետ հաղորդվող զանգի լարը: Այդ վճռական հարվածը տալուց հետո, ծերունին, որի հուշերն անտարակույս չափազանց ծանր էին իր համար, վերցրեց երեք-չորս մուրհակներ, և մտացրիվ նայեց դրանց, կարծես առանց տեսնելու, երբ իսկույն հայտնվեց Ժոզեֆ Լեբան:

— Նստեցե՛ք այստեղ,— ասաց Գիյոմը, ցույց տալով նրան աթոռակը: Ժոզեֆ Լեբան ցնցվեց. ծերունի կերպասավաճառն իր գործակատարին երբեք չէր առաջարկել նստել իր ներկայությամբ:

— Ի՞նչ եք մտածում այս մուրհակների մասին,— հարցրեց Գիյոմը:

— Դրանք չեն վճարվի:

— Ինչպե՞ս թե…

— Չէ՞ որ ես գիտեմ, որ Էտիեն և Ընկերությունն իրենց վճարումները կատարել են ոսկով:

— Օհո՛… բացականչեց կերպասավաճառը,— մարդ պետք է լրջորեն հիվանդ եղած լինի, որպեսզի այդպես ցույց տա իր մաղձը: Խոսենք այլ բանի մասին: Ժոզեֆ, հաշվառումը վերջացավ:

— Այո, պարո՛ն, և պետք է ասել, որ դիվիդենդը մինչ այսօր ձեր ունեցածներից ամենաբարձրն է:

— Դե, դուք այդ նոր բառերը մի օգտագործեք: Ասեք պարզապես վաստակ, Ժոզե՛ֆ: Դուք գիտե՞ք, տղա՛ս, որ դրանում մի փոքր էլ ձեզ ենք պարտական, ուստի, ես այլևս չեմ ուզում ձեզ ռոճիկով պահել: Տիկին Գիյոմն ինձ խորհուրդ տվեց ձեզ առաջարկել շահաբաժին: Հը՞, Ժոզեֆ:

Գիյոմ

և

Լեբա

, մի՞թե դա լավ ֆիրմա չէր լինի, կարելի է ավելացնել… և

Ընկերություն

, ցուցանակին վերջնական տեսք տալու համար:

Ժոզեֆ Լեբայի աչքերում արտասուքներ երևացին. նա ջանաց թաքցնել դրանք:

— Ո՛հ, պարոն Գիյոմ, ես ինչո՞վ եմ կարողացել արժանանալ այդքան շնորհների: Ես միայն պարտքս եմ կատարում: Արդեն քիչ չէ այն, որ դուք հանձն եք առել կարեկցել մի խեղճ որբ…

Նա իր թիկնոցի ձախ թևքի թավշյա կրկնակը խոզանակում էր աջ թևով և չէր համարձակվում նայել ծերունուն, որը ժպտում էր մտածելով, որ այս համեստ երիտասարդը, ինչպես ինքն անցյալում, կարիք ուներ քաջալերվելու, որպեսզի հարցը լրիվ պարզաբանվի:

— Սակայն,— շարունակեց Վիրժինիի հայրը,— դուք այնքան էլ արժանի չեք այս շնորհին, Ժոզեֆ. դուք ինձ չեք վստահում այնքան, ինչքան ինքս եմ վստահում ձեզ (գործակատարն ընդոստ բարձրացրեց իր գլուխը):

— Ձեզ հայտնի է մեր դրամարկղի գաղտնիքը: Երկու տարի է, ինչ ես ձեզ տեղյակ եմ պահում համարյա իմ բոլոր գործառնություններին. ես ձեր առաջ բաց եմ արել իմ բոլոր գործերը, ձեզ ֆաբրիկա եմ ուղարկել: Ուղղակի կասեմ. ես ձեզնից ոչինչ չեմ թաքցնում, իսկ դո՞ւք… Դուք ինչ-որ հակում ունեք և այդ մասին ոչինչ չեք շշնջացել ինձ (Ժոզեֆ Լեբան շառագունեց):

— Հա՛, հա՛... — բացականչեց Գիյոմը:— Մի՞թե դուք կարծում էիք, թե կարող եք խաբել ինձ նման մի ծեր աղվեսի: Ինձ նման մեկի, որը, ինչպես տեսաք, գուշակեց Լեկոկի սնանկությունը:
— Ինչպե՞ս թե... պարո՛ն,— պատասխանեց Ժոզեֆ Լեբան, զննելով իր տիրոջն այնպես ուշադիր, ինչպես տերն էր զննում նրան:— Մի՞թե դուք գիտեք, թե ես ո՛ւմ եմ սիրում:
— Ես ամեն ինչ գիտեմ, անպիտա՛ն,— ասաց նրան պատկառելի և խորամանկ վաճառականը, ոլորելով նրա ականջի ծայրը:— Եվ ես ներում եմ. նույն բանը ինքս եմ արել:
— Եվ դուք կհամաձայնեիք նրան տա՞լ ինձ:
— Այո՛, և հիսուն հազար էկյու, նույնքան էլ կթողնեմ քեզ կտակով: Մենք կընդլայնենք մեր շրջանառությունները և նոր ֆիրմա բաց կանենք: Մենք դեռ շատ ու շատ գործեր կհաջողեցնենք, ա՛յ տղա,— բացականչեց ծեր վաճառականը ոգևորված, վեր կենալով և թափահարելով իր թևերը:— Տեսնո՞ւմ ես, փեսա՛ս, առևտուրն է, որ կա: Նրանք, ովքեր իրենց հարց են տալիս՝ թե մարդիկ ի՞նչ հաճույք են գտնում դրանում, պարզապես տխմարներ են: Քայլել գործարքների հետքերով, ղեկավարել գիտենալ շուկան, անձկությամբ սպասել, ինչպես խաղի ժամանակ, որպեսզի տեսնես Էտիեն և Ընկերությունը սնանկանո՞ւմ է, թե ոչ, տեսնել, թե ինչպե՛ս անցնում է մեր կերպասով հագնված կայսերական գվարդիայի մի գունդը, հարևանի սրունքին խփել, օրենքով, իհարկե, ուրիշներից ավելի էժան գներով ապրանք բաց թողնել, հետևել մի գործի, որ ծրագրում ես, և որը սաղմնավորվում է, մեծանում, երերում և հաջողվում է, ոստիկանության պետի նման լավ ճանաչել առևտրական տների բոլոր հնարները, որպեսզի ճանապարհին չմոլորվես. հաստատորեն կանգնած մնալ նավաբեկությունների ժամանակ. բարեկամներ ունենալ թղթակցությամբ՝ մանուֆակտուրային բոլոր քաղաքներում. Ժոզեֆ, մի՞թե սա անդուլ և միշտ նորոգվող խաղ չէ: Բայց դա արդեն նշանակում է ապրել: Ես այդ շարժման մեջ, այդ անհանգիստ վիճակում էլ կմեռնեմ, ինչպես ծերունի Շևրելը, այնուամենայնիվ, դրանից ես կվերցնեմ ինձ համար առավելագույն բավականությունը:
Այս հանպատրաստի և ինքնաբուխ ճառախոսության ջերմ շնչով տարված՝ Գիյոմը գրեթե չէր նայել իր գործակատարին, որը լալիս էր դառնորեն և հորդառատ արտասուքով:
— Դե լա՛վ, Ժոզեֆ, խե՛ղճ տղաս, ի՞նչ պատահեց քեզ:
— Օ՜, ես նրան այնքա՛ն եմ սիրում, օ՜, այնքա՛ն, պարոն Գիյոմ, որ սիրտս թուլանում է, ես կարծում եմ… — Դե՛, լավ, տղաս,— ասաց վաճառականը հուզված,— դու ավելի երջանիկ ես, հավատացնում եմ քեզ, քան ինքդ ես կարծում, որովհետև նա սիրում է քեզ. ինքս այդ գիտեմ:
Եվ նա թարթեց իր երկու փոքրիկ կանաչ աչքերը՝ նայելով իր գործակատարին:
— Օրիորդ Օգյուստի՛ն, օրիորդ Օգյուստի՛ն,— բացականչեց Ժոզեֆ Լեբան ոգևորված:
Նա արդեն պատրաստ էր խոյանալու կաբինետից դուրս, երբ զգաց, որ երկաթյա մի բազուկ կանգնեցնում է իրեն, և տերն ապշած՝ նրան ուժգին ետ բերեց:
— Բայց ի՞նչ գործ ունի Օգյուստինն այս խնդրում,— հարցրեց Գիյոմը, որի ձայնը տեղն ու տեղը քարացրեց դժբախտ Ժոզեֆ Լեբային:
— Մի՞թե նա չէ իմ սիրածը,— ասաց Ժոզեֆ Լեբան կակազելով:
Շփոթված, որ տվյալ դեպքում չէր ունեցել անհրաժեշտ հստակատեսություն, Գիյոմը վերստին նստեց. նա իր սրածայր գլուխն առավ իր երկու ձեռքերի մեջ, որպեսզի խորհրդածի այն անհեթեթ դրության մասին, որի մեջ նա գտնվում էր: Ամոթահար և հուսալքված Ժոզեֆ Լեբան մնաց կանգնած:
— Ժոզե՛ֆ,— խոսեց վաճառականը սառն արժանավորությամբ,— ես ձեզ հետ խոսում էի Վիրժինիի մասին: Սերը հրամանի չի ենթարկվում, ես այդ գիտեմ: Ինձ հայտնի է ձեր գաղտնապահությունը, մենք այս կմոռանանք: Ես երբեք Օգյուստինին չեմ ամուսնացնի Վիրժինիից առաջ: Ձեր շահաբաժինը կլինի տասը տոկոսի չափով:
Գործակատարը, որին սերը տվեց չգիտեմ ի՞նչ աստիճանի արիություն և պերճախոսություն, միացրեց իր ձեռքերը, սկսեց խոսել. նա աղաչեց Գիյոմին քառորդ ժամ շարունակ, այնպիսի ջերմեռանդությամբ և զգայնությամբ, որ դրությունը փոխվեց: Եթե խնդիրը վերաբերեր առևտրական որևէ գործի, ապա ծեր վաճառականն ուներ անփոփոխ կանոններ, որով նա կկարողանար արագ վճռել այն. սակայն, առևտրից հարյուր մղոն հեռու, նետված՝ զգացմունքների ծովի վրա և առանց կողմնացույցի, նա տատանվեց, մտածելով, թե ինքն ի՞նչ որոշում կարող էր ընդունել այսքան անօրինակ մի իրադարձության առջև: Եվ, տարվելով իր բնածին բարությամբ՝ սկսեց նահանջել.
— Դե՛, գրո՛ղը տանի, Ժոզե՛ֆ, դու հո գիտես, որ ես իմ երկու երեխաներին ունեցել եմ մեկը մյուսից տասը տարի ուշ: Օրիորդ Շևրելը գեղեցիկ չէր, սակայն նա ինձնից դժգոհելու ոչ մի պատճառ չունի: Ուրեմն դու էլ ինձ պես արա: Վերջապես, լաց մի՛ լինի, ինչ հիմա՛րն ես: Մի բան կանենք, էլի, գուցե և հարցը կարգադրվի, կտեսնենք: Դժվարություններից ելք գտնելու միշտ էլ միջոց կա: Հո մենք, տղամարդիկս, մեր կանանց համար սիրուց միշտ հալումաշ եղող կելադոններ չենք կարող լինել: Դու ինձ հասկանո՞ւմ ես: Տիկին Գիյոմը բարեպաշտ է, և... դե՛ ուրեմն, տղա՛ս, սատանա՛ն տանի, այս առավոտ թևդ տուր Օգյուստինին պատարագի գնալիս:

Սրանք էին այն նախադասությունները, որոնք հենց այդպես, առանց մտածելու, ասվեցին Գիյոմի կողմից: Այդ բոլորն ավարտող եզրափակիչ խոսքը հափշտակվելու աստիճան ուրախացրեց սիրահար գործակատարին. նա օրիորդ Վիրժինիի համար արդեն նկատի ուներ իր բարեկամներից մեկին. դուրս գալով այդ մրոտված կաբինետից, Լեբան սեղմեց իր ապագա աներոջ ձեռքը և, միմյանց լավ հասկացած մարդկանց մտերմիկ տեսքով, նրան ասաց, թե անշուշտ ամեն ինչ լավագույնս կկարգադրվի:
«Ի՞նչ պետք է մտածի տիկին Գիյոմը»: Այս միտքը սաստիկ չարչարեց ազնիվ վաճառականին, երբ նա մենակ մնաց:
Նախաճաշին, տիկին Գիյոմն ու Վիրժինին, որոնց կերպասավաճառը մի առ ժամանակ թողել էր անտեղյակ իր հուսախաբության մասին, բավականին խորամանկությամբ նայեցին Ժոզեֆ Լեբային, որն իրեն զգաց չափազանց անհարմար վիճակում, իր ամոթխածությամբ գործակատարը գրավեց զոքանչին և նվաճեց նրա բարեկամությունը. տիկին Գիյոմը այնքան զվարթացավ, որ նա քաղցրաժպիտ նայեց ամուսնուն և իրեն թույլ տվեց այդ միամիտ ընտանիքներում անհիշատակ ժամանակներից մնացած մի քանի փոքրիկ կատակներ: Նա հարց բարձրացրեց, թե հասակով ո՞վ ավելի բարձր է, Վիրժինի՞ն, թե Ժոզեֆը, որպեսզի նրանց խնդրի չափվել: Այս պարզամիտ նախապատրաստությունները որոշ մտահոգություն պատճառեցին ընտանիքի գլխավորին. նրա ճակատը փոքր-ինչ մռայլվեց և նա այնպիսի սեր ցուցահանեց արտաքին պատշաճության նկատմամբ, որ հրամայեց Օգյուստինին ավագ գործակատարի հետ թևանցուկ անել Սեն-Լյո գնալիս: Արական սեռի այս փափկանկատությունից զարմացած՝ տիկին Գիյոմը գլխի շարժումով հավանություն տվեց ամուսնուն: Ուստի և թափորը դուրս ելավ տնից այնպիսի կարգ ու կանոնով, որը հարևանների կողմից ոչ մի չարամիտ մեկնաբանության չէր կարող տեղիք տալ:
— Դուք չե՞ք գտնում, օրիորդ Օգյուստին,— ասում էր գործակատարը հուզմունքից դողդոջուն,— որ բարձր վարկի տեր վաճառականի կինը, մի այնպիսի վաճառականի, ինչպիսին պարոն Գիյոմն է, օրինակի համար, կարող էր և զվարճանալ մի քիչ ավելի, քան ձեր տիկին մայրը. նա կարող էր ադամանդներ կրել, կառքով գնալ: Ո՜հ, ինքս, նախ և առաջ, եթե երբեք ամուսնանայի, կցանկանայի բոլոր դժվարությունները հանձն առնել, որպեսզի կնոջս տեսնեի երջանիկ: Կերպասի առևտրում, նկատեցե՛ք, կանանց ներկայությունն այժմ անհրաժեշտ չէ այնքան, ինչքան դա հին ժամանակ էր: Պարոն Գիյոմն իրավացի է եղել այդպես վարվելով և դա նրա տիկնոջ ճաշակով էր: Սակայն կինը պետք է միայն մի փոքր օգնի հաշիվներում, թղթակցության հետ կապված մանր աշխատանքներում, պատվերներում, իր տնային գործերում, որպեսզի պարապ չմնա, ահա և բոլորը: Ժամը յոթին, երբ խանութն արդեն փակ է, ես կզվարճանայի, կգնայի թատրոն, այցելումներ կանեի: Բայց դուք ինձ չեք լսում:
— Ինչպե՞ս թե, պարոն Ժոզեֆ, ես լսում եմ, բայց դուք ի՞նչ կասեիք նկարչության մասին: Ա՛յ, դա գեղեցիկ զբաղմունք է:
— Այո, ես ճանաչում եմ շինարարության գծով աշխատող մի վարպետ նկարչի՝ պարոն Լուրդուայի, որը փող ունի:
Զրուցելով այսպես, ընտանիքը հասավ Սեն-Լյո եկեղեցին: Այնտեղ տիկին Գիյոմը վերականգնեց իր իրավունքները և նա Օգյուստինին, առաջին անգամ լինելով, նստեցրեց իր կողքին: Վիրժինին տեղ գրավեց չորրորդ աթոռի վրա՝ Լեբայի կողքին: Քարոզի ժամանակ ամեն ինչ լավ անցավ Օգյուստինի և Թեոդորի միջև, այս վերջինը, մի սյունի հետև կանգնած, ջերմագին աղոթում էր իր տիրամորը, սակայն ամբարձման մոմենտին, տիկին Գիյոմը նկատեց, փոքր-ինչ ուշ, որ իր աղջիկը՝ Օգյուստինը ծուռ էր բռնել աղոթագիրքը: Նա պատրաստվում էր նրան սաստիկ հանդիմանել, երբ, իջեցնելով իր քողը՝ նա ընդհատեց իր ընթերցումը և սկսեց նայել աղջկա հայացքի ուղղությամբ: Ակնոցների օգնությամբ նա տեսավ երիտասարդ արվեստագետին, որն իր աշխարհիկ էլեգանտությամբ նմանվում էր ավելի շուտ հեծելազորի պաշտոնաթող կապիտանի, քան թե թաղեցի մի վաճառականի: Դժվար է պատկերացնել փոթորկահույզ ապրումները տիկին Գիյոմի, որը պարծենում էր աղջիկներին տված իր անբասիր դաստիարակությամբ, հայտնաբերելով Օգյուստինի սրտում մի այնպիսի սեր, որի վտանգը չափազանցվում էր այդ կնոջ աչքին՝ նրա կեղծ-բարեպաշտության և տգիտության պատճառով: Նա կարծեց, որ իր աղջիկն ապականված է ողջ էությամբ:
— Նախ և առաջ ձեր գիրքը ուղիղ բռնեցեք, օրիո՛րդ,— ասաց նա ցածրաձայն, բայց դողդողալով զայրույթից: Նա արագ խլեց ամբաստանող աղոթագիրքը և այն շուռ տվեց, այնպես, որ տառերը լինեն իրենց բնական ուղղությամբ:
— Մի՛ համարձակվեք ձեր հայացքը բարձրացնել ձեր աղոթագրքից բացի՝ ուրիշ տեղ,— ավելացրեց նա,— այլապես դուք գործ կունենաք ինձ հետ: Պատարագից հետո ձեր հայրը և ես պետք է խոսենք ձեզ հետ:
Այս խոսքերի վրա Օգյուստինը կարծես շանթահարվեց: Քիչ էր մնում նա ուշաթափվեր: Բայց, մի կողմից՝ հակազդելու համար իր զգացած ցավի դեմ, մյուս կողմից՝ վախենալով, որ եկեղեցում կարող էր սկանդալ առաջ բերել, նա իր մեջ բավականին ուժ գտավ և թաքցրեց իր անձկությունը:

Եվ սակայն, դժվար չէր գուշակել նրա հոգեկան սաստկահույզ վիճակը, տեսնելով, թե ինչպե՞ս աղոթագիրքը դողում էր նրա ձեռքում և թե ինչպե՞ս արցունքները թափվում էին նրա շուռ տված յուրաքանչյուր թերթիկի վրա: Տիկին Գիյոմի նետած կայծակնացայտ հայացքից արվեստագետն զգաց, թե ինչպիսի ահավոր վտանգի տակ էր գտնվում իր սերը, և նա դուրս եկավ, մոլեգնած, որոշելով ոչ մի բանի առաջ չընկրկել:
— Գնացե՛ք ձեր սենյակը, օրիորդ,— ասաց տիկին Գիյոմն իր դստեր, երբ նրանք վերադարձան տուն,— մենք ձեզ կանչել կտանք. և, նամանավանդ, չփորձեք դուրս գալ այդտեղից:
Ամուսինների միջև կայացած խորհրդակցությունն այնքան գաղտնի անցավ, որ սկզբում հնարավոր չեղավ ոչինչ իմանալ: Սակայն, Վիրժինին, որը քաջալերել էր քրոջը հազար ու մի քաղցրիկ մտապատկերներով, հաճոյակատարությունը հասցրեց այն աստիճանի, որ նա հանձն առավ գողտուկ մոտենալ մոր ննջասենյակի դռանը, ուր տեղի էր ունենում վիճաբանությունը, որպեսզի կարողանա մի քանի նախադասություններ կորզել: Երրորդից դեպի երկրորդ հարկ իր կատարած առաջին ճանապարհորդության օգուտն եղավ այն, որ նա լսեց հոր բացականչությունը.
— Տիկի՛ն, ուրեմն դուք սպանե՞լ եք ուզում ձեր աղջկան:
— Թանկագի՛նս,— ասաց Վիրժինին իր վշտահար քրոջը,— հայրիկը պաշտպանում է քեզ:
— Իսկ ի՞նչ են ուզում անել Թեոդորի հետ,— հարցրեց անմեղ արարածը:
Ուստի, հետաքրքրասեր Վիրժինին կրկին իջավ ներքև. բայց այս անգամ նա մնաց ավելի երկար. նա իմացավ, որ Լեբան սիրում էր Օգյուստինին: Ճակատագիրն այնպես էր որոշել, որ հիշատակվելու իրոք արժանի այդ օրվա ընթացքում, սովորաբար այնքան խաղաղ մի տուն պետք է վերածվեր դժոխքի: Պարոն Գիյոմն ուղղակի հուսահատության մատնեց Լեբային՝ նրան հայտնելով Օգյուստինի սերը հանդեպ ինչ-որ մի օտարականի: Լեբան, որը զգուշացրել էր իր բարեկամին, որպեսզի սա Վիրժինիի ձեռքը խնդրի, տեսավ իր հույսերի տապալումը: Օրիորդ Վիրժինին, իմանալով, որ Լեբան մի տեսակ մերժել էր իրեն, սաստիկ ընկճվեց և բռնվեց ուժեղ գլխացավից: Երկու ամուսինների երես առ երես բացատրությունից հետո, երբ նրանք կյանքում երրորդ անգամ տարակարծություն ունեցան, նրանց միջև սոսկալի երկպառակություն ծագեց:
Վերջապես, երեկոյան ժամը չորսին, Օգյուստինը, գունատ և աչքերը կարմրած, դողդողալով ներկայացավ հոր և մոր առջև: Խեղճ երեխան միամիտ անմեղությամբ պատմեց իր սիրո չափազանց կարճ պատմությունը: Սրտապնդվելով հոր նախաբանից, որը վստահեցնում էր նրան լսել առանց ընդհատելու, նա որոշ չափով քաջություն ցուցաբերեց և արտասանեց ծնողների առջև իր թանկագին Թեոդոր դը Սոմերվիոյի անունը՝ չարաճճի խորամանկությամբ հնչեցնելով դրա արիստոկրատական մասնիկը: Սեփական սիրուց խոսելու իրեն դեռևս անծանոթ հմայքից տարված՝ նա իր մեջ բավականին համարձակություն գտավ, որպեսզի հայտնի անմեղ վճռականությամբ, թե սիրում էր պարոն դը Սոմերվիոյին, թե նրան գրել էր այդ մասին, և նա ավելացրեց արտասվալից աչքերով.
— Դուք ինձ կդժբախտացնեիք, եթե ինձ զոհեիք մի ուրիշի համար:
— Բայց, Օգյուստի՛ն, մի՞թե դուք չգիտեք, թե ի՞նչ մարդիկ են նկարիչները,— բացականչեց մայրը նողկանքով:
— Տիկի՛ն Գիյոմ…— արտասանեց ծերունի հայրը՝ լռություն պարտադրելով իր կնոջը:— Օգյուստին,— ասաց նա,— արվեստագետներն առհասարակ սոված մարդիկ են: Նրանք այնքան շատ են վատնում, որ միշտ էլ մնում են անպիտան մարդիկ: Ես մատակարարել եմ հանգուցյալ պարոն Ժոզեֆ Վեռնեին, հանգուցյալ պարոն Լեկենին և հանգուցյալ պարոն Նովերին
8
: Ա՛հ, եթե դու միայն իմանայիր, թե պարոն Նովերը, ասպետ պարոն դը Սեն-Ժորժը և մանավանդ պարոն Ֆիլիդորը ինչպիսի՜ խաղեր են սարքել խեղճ հայր Շևրելի գլխին... Դրանք անօրինակ ծաղրածուներ են, ինքս այդ լավ գիտեմ: Նրանք քեզ մի այնպիսի լեզու և ձևեր կթափեն... Ա՛հ, երբեք քո պարոն Սյումեր... Սոմ…
— Դը Սոմերվիո, հայրիկ:
— Դե լա՛վ, թող լինի դը Սոմերվիո: Նա երբեք այնքան սիրալիր չի լինելու քեզ հետ, ինչքան ասպետ պարոն դը Սեն-Ժորժն է եղել ինձ հետ այն օրը, երբ ես առևտրական ատյանի դատավճիռը հանել տվեցի նրա դեմ: Եվ պետք է ավելացնել, որ նրանք ոչ թե նորելուկ, այլ հին ժամանակի և իսկապես ազնվազարմ մարդիկ էին:
— Բայց, հայր իմ, պարոն Թեոդորը իրոք ազնվական է, և նա գրել է ինձ, թե ինքը շատ հարուստ է: Նրա հայրը կոչվելիս է եղել ասպետ դը Սոմերվիո դեռևս ռևոլյուցիայից առաջ:
Այդ խոսքերի վրա պարոն Գիյոմը նայեց իր սարսափազդու կողակցուհուն. վերջինս, ինչպես մի կին, որին հակառակել են, ոտքի ծայրով խփում էր հատակին և պահպանում մռայլ լռություն: Նա նույնիսկ խուսափում էր իր ցասմնալից հայացքը գցելու Օգյուստինի վրա, և թվում էր, թե նա այս չափազանց ծանրակշիռ գործի ամբողջ պատասխանատվությունը թողնում է պարոն Գիյոմին, քանի որ իր կարծիքն անտեսվում էր: Այնուամենայնիվ, հակառակ իր առերևույթ հանդարտությանը, երբ նա տեսավ, որ իր ամուսինը կամաց-կամաց հաշտվում էր այդ աղետի հետ, որն առևտրական ոչ մի բնույթ չէր կրում, նա բացականչեց.

— Իսկապես, պարո՛ն, դուք մի այնպիսի թուլությո՛ւն եք ցուցաբերում ձեր աղջիկների նկատմամբ... բայց…
Դռան առջև կանգ առնող ինչ-որ կառքի աղմուկն ընդհատեց այդ կշտամբողական ճառը, որին ծեր վաճառականն արդեն սպասում էր սարսափով: Եվ անմիջապես սենյակի մեջտեղում հայտնվեց տիկին Ռոգենը: Նայելով այդ ընտանեկան ներկայացման երեք դերակատարներին.
— Ես ամեն ինչ գիտեմ, զարմուհիս,— ասաց նա հովանավորի տեսքով:
Տիկին Ռոգենն ուներ մի թերություն. նա կարծում էր, թե փարիզեցի նոտարի կինը կարող էր աշխարհիկ տիկնոջ դեր խաղալ:
— Ես ամեն ինչ գիտեմ,— կրկնեց նա,— և ես գալիս եմ Նոյի տապանը, ինչպես աղավնին՝ ձիթենու ճյուղով: Ես այս այլաբանությունը կարդացել եմ «Քրիստոնեության Ոգում»
9
,— ասաց նա շուռ գալով դեպի տիկին Գիյոմը,— համեմատությունը պետք է ձեզ դուր գա, իմ զարմուհի: Դուք գիտե՞ք,— ավելացրեց նա, ժպտալով Օգյուստինին,— որ այդ պարոն դը Սոմերվիոն հիանալի մարդ է: Այս առավոտ նա ինձ տվեց իմ դիմանկարը, և դա իրոք որ վարպետի գործ է. դա արժե առնվազն վեց հազար ֆրանկ:
Այդ ասելով, նա թեթև խփեց պարոն Գիյոմի թևին: Ծերունի վաճառականը չկարողացավ իրեն զսպել և թթված՝ ծռմռեց շրթունքներն այնպիսի ձևով, որն իրեն հատուկ էր:
— Ես շատ լավ եմ ճանաչում պարոն դը Սոմերվիոյին,— շարունակեց աղավնին,— երկու շաբաթ է, ինչ նա գալիս է իմ երեկույթներին, բացառիկ հրապույր տալով դրանց իր ներկայությամբ: Նա ինձ պատմեց իր ողջ անձկությունը և ինձ վստահեց իր դատը պաշտպանելու գործը: Այս առավոտվանից ես գիտեմ, որ նա պաշտում է Օգյուստինին և նա նրան կառնի: Օ՜հ, զարմուհի, այդպես մի թափահարեք ձեր գլուխը, իբր թե մերժում եք: Իմացե՛ք, որ նա կբարձրացվի բարոնի աստիճանի, արդեն իսկ պատկերահանդեսում կայսրն անձամբ շնորհեց նրան Պատվո լեգեոնի ասպետի շքանշանը: Ռոգենը դարձավ նրա նոտարը և տեղյակ է նրա բոլոր գործերին: Պարոն դը Սոմերվիոն սեփականատեր է հրաշալի կալվածքների, որոնցից նա ստանում է տասներկու հազար ֆրանկ եկամուտ, ահա թե ի՜նչ: Դուք գիտե՞ք, որ նրա նման մի մարդու աները կարող է ինչ-որ մի բան դառնալ, ասենք, իր շրջանի մեր, օրինակի համար: Դուք չտեսա՞ք, թե ինչպե՜ս պարոն Դյուպոնը դարձավ կայսրության կոմս և սենատոր, որովհետև մերի իր հանգամանքով նա պարզապես եկավ կայսեր շնորհավորելու՝ նրա Վիեննա մուտքի առթիվ: Օ՜, այս ամուսնությունը պետք է կատարվի: Ես այդ երիտասարդին պաշտում եմ: Օգյուստինի հանդեպ նրա վերաբերմունքը կարելի է տեսնել միայն վեպերում: Դե գնա՛, պստիկս, դու երջանիկ կլինես և բոլորը պիտի ցանկանան քո տեղը լինել: Իմ երեկույթներում լինում է դքսուհի Կարիլիանոն, որը գժվում է պարոն դը Սոմերվիոյի վրա: Մի քանի չար լեզուներ ասում են, թե նա գալիս է ինձ մոտ միայն այդ երիտասարդի համար, կարծես թե նորաթուխ մի դքսուհի իրեն անհարմար զգար լինելու Շևրելների մոտ, որոնք հարյուր տարի է, ինչ պատկանում են հարգված բուրժուազիային:— Օգյուստին,— շարունակեց տիկին Ռոգենը փոքրիկ դադարից հետո,— ես տեսա դիմանկարը: Տե՜ր աստված, ի՜նչ գեղեցիկն է: Դու գիտես, թե կայսրը ցանկացել է այն տեսնել: Նա ծիծաղելով ասել է դերկոնետաբլին, որ եթե նրա նման կանայք շատ լինեին իր արքունիքում, ուր այնքան շատ թագավորներ են գալիս, ապա նա հանձն կառներ մշտատև խաղաղություն հաստատել Եվրոպայում: Փաղաքշական է, չէ՞:
Տագնապները, որոնցով սկսել էր այդ օրը, նմանվեցին բնության մրրիկներին, անդորրն ու պայծառ մթնոլորտը հաջորդեցին դրանց: Տիկին Ռոգենը այնպիսի հրապուրանք ծավալեց իր ճառախոսություններում, նա կարողացավ պարոն և տիկին Գիյոմների չորացած սրտերում դիպչել միանգամից այնքան շատ լարերի, որ ի վերջո նա գտավ ամենից թույլը և օգուտ քաղեց դրանից: Այդ յուրահատուկ ժամանակաշրջանում, առևտրականներն ու ֆինանսիստներն առավել քան երբեք, խելահեղ մոլություն ունեին ազգակցական կապեր հաստատելու ազնվականության մեծ ներկայացուցիչների հետ, և կայսրության գեներալները բավականին օգտվեցին այդ տրամադրություններից: Պարոն Գիյոմը հատկապես ծառանում էր այդ կործանարար կրքի դեմ: Որպես աքսիոմա նա սիրում էր ասել. եթե կինն ուզում է երջանկություն գտնել, նա անպայման պետք է ամուսնանա իր դասակարգի մարդու հետ: Ցանկանալով շատ բարձրանալ մարդ վաղ թե ուշ պատժվում է: Սերն այնքան քիչ է դիմանում առտնին տաղտուկին, որ երջանիկ լինելու համար ամուսինները պետք է գտնեն միմյանց մոտ չափազանց կայուն արժանիքներ: Չպետք է որ ամուսիններից մեկը մյուսից ավելին գիտենա, որովհետև ամենից առաջ հարկավոր է իրար հասկանալ: Երբ մարդը խոսում է հունարեն, իսկ կինը՝ լատիներեն, նրանք ենթակա են սովամահ լինելու: Նա ինքն էր հնարել այդ առածը: Այդօրինակ ամուսնությունները նա նմանեցնում էր մետաքսով և բրդով գործված այն հին կերպասներին, որոնց մետաքսն ի վերջո տրորում է բուրդը: Այնուամենայնիվ, մարդն այնքան ունայնասիրություն ունի իր սրտի խորքում, որ «Գնդակ խաղացող կատուն» հրաշալի վարպետությամբ ղեկավարող այդ վարորդի զգուշավորությունը տեղի տվեց տիկին Ռոգենի շաղակրատության առջև: Խստաբարո տիկին Գիյոմն առաջինը իր դստեր հակման մեջ շարժառիթներ գտավ, որպեսզի խախտի իր սկզբունքները և համաձայնի

ընդունելու իր տանը պարոն դը Սոմերվիոյին, որին և նա որոշեց ենթարկել խստագույն քննության:
Ծերունի վաճառականը գնաց գտնելու Ժոզեֆ Լեբային և նրան իրազեկ պահեց տիրող իրադրության մասին: Ժամը վեցն անց կեսին նկարչի ներկայությամբ պայծառացած սեղանատունն իր ապակյա կտուրի տակ հավաքեց տիկին և պարոն Ռոգենևերին, երիտասարդ նկարչին և նրա նազելաշուք Օգյուստինին, Ժոզեֆ Լեբային, որը համբերությամբ տանում էր իր դժբախտությունը, ինչպես նաև օրիորդ Վիրժինիին, որի գլխացավն անցել էր: Պարոն և տիկին Գիյոմները հեռանկարում տեսան իրենց աղջիկներին տեղավորված և «Գնդակ խաղացող կատվի» բախտը հանձնված հմուտ ձեռքերի: Նրանց գոհունակությունը չափ ու սահման չունեցավ, երբ աղանդերի պահին, Թեոդորը նրանց նվիրեց այն սքանչելի նկարը, որ նրանց չէր հաջողվել տեսնել: Դա ներկայացնում էր ներքին կյանքը այն վաղեմի խանութի, որին նրանք այդքան երջանկություն էին պարտական:
— Ինչ սիրունի՜կն է,— բացականչեց Գիյոմը:— Մտածել, որ սրան երեսուն հազար ֆրանկ էին ուզում տալ:
— Բա իմ ծոպե՜րը,— վրա տվեց տիկին Գիյոմը:
— Եվ այս բացված կերպասնե՜րը,— ավելացրեց Լեբան,— ուզում ես հենց ձեռքով վերցնել:
— Ծալազարդումները միշտ էլ լավ են դուրս գալիս,— պատասխանեց նկարիչը:— Մենք՝ նորագույն նկարիչներս, չափազանց երջանիկ կլինեինք, եթե կարողանայինք այդ բանում հասնել հների կատարելությանը:
— Դուք ուրեմն սիրո՞ւմ եք ծալազարդումը: Դե ուրեմն, սատանան տանի, տվեք ձեր ձեռքը, իմ երիտասարդ բարեկամ: Քանի դուք գնահատում եք առևտուրը, մենք իրար կհասկանանք: Է՜հ, և ինչո՞ւ պետք է արհամարհեն այն. աշխարհը դրանով է սկսել, քանի որ Ադամը դրախտը վաճառեց մի խնձորի, թեև, ճիշտն ասած դա այնքան էլ հաջող մի սպեկուլյացիա չէր:
Եվ ծեր վաճառականը սկսեց բարեհոգությամբ խնդալ. նրա տրամադրությունը բարձրացել էր Շամպայնի գինուց, որ նա առատորեն բաժանում էր իր շուրջը: Արվեստագետի աչքերին այնպիսի թանձր կապ կար, որ ապագա խնամիները նրան թվացին բարեշնորհ մարդիկ: Նա նույնիսկ չզլացավ զվարթացնել նրանց մի քանի նրբաճաշակ կատակախոսություններով: Ուստի և նա ընդհանրապես դուր եկավ: Երեկոյան, երբ, ըստ Գիյոմի արտահայտության, շատ փարթամ առարկաներով կահավորված հյուրասրահն ամայացավ, երբ տիկին Գիյոմը գնում գալիս էր սեղանից դեպի բուխարին, աշտանակներից դեպի ջահերը, փութկոտությամբ փչելով մոմերը, բարեհոգի վաճառականը, որը միշտ գիտեր հստակ տեսնել՝ հենց որ հարցը մի որևէ գործարքի կամ փողի մասին է, իր մոտ կանչեց աղջկան՝ Օգյուստինին: Ապա, նրան քնքշորեն իր ծնկների վրա նստեցնելով՝ այսպես խոսեց.
— Իմ սիրասո՜ւն զավակս, դու կամուսնանաս քո Սոմերվիոյի հետ, քանի որ դու այդպես ես ցանկանում. դու ազատ ես վտանգելու քո երջանկության կապիտալը: Սակայն ես չեմ խաբվի այդ երեսուն հազար ֆրանկով, որ վաստակում են, փչացնելով լավագույն կտավները: Այնքան հեշտությամբ ձեռք բերվող փողը նույն ձևով էլ կգնա: Մի՞թե ես այս երեկո չլսեցի այդ երիտասարդ դատարկամիտին՝ ասելիս. թե «Դրամը կլոր է, դրա համար էլ գլորվելու է»: Եթե կլոր է շռայլ մարդկանց համար, ապա դա տափակ է խնայասեր մարդկանց համար, որոնք դիզում և կուտակում են այն: Ուստի և, զավա՜կս, այդ գեղեցիկ տղան խոսում է քեզ շքակառքե՞ր, ադամանդնե՞ր տալու մասին: Խնդրե՜մ, առավել ևս լավ. փո՞ղ ունի, թող ծախսի քեզ վրա, bene sit*: Դա իմ խառնվելու բանը չէ: Սակայն, ինչ վերաբերում է իմ տվածին, ապա ես չեմ ուզում, որ այնքան դժվարությամբ կուտակած իմ ոսկիները հեռանան, կորչեն անհետ՝ վերածվելով շքակառքերի, պաճուճանքի համար ինչ-որ

---

* Հիանալի է, թո՛ղ այդպես լինի (լատ.):

սնոտիքների: Ով շատ է ծախսում, նա երբեք հարուստ չէ: Իր հարյուր հազար ֆրանկ օժիտով մարդ դեռևս չի կարող ամբողջ Փարիզը գնել: Ժամանակ կգա, որ դու կարող ես էլի մի քանի հարյուր ֆրանկ ստանալ, բայց, սատանան տանի, ես քեզ երկար կսպասեցնեմ դրան: Ուստի ես մի կողմ քաշեցի քո փեսացուին, և Լեկոկի սնանկության գործերը վարող մարդն, իհարկե, ոչ մի դժվարություն չունեցավ համոզելու մի արվեստագետի, որ նա ամուսնանա՝ կողմերն իրենց ունեցվածքով անկախ լինելու պայմանով: Ես զգույշ կհսկեմ, որ պայմանագրում օրինավոր կերպով նշվեն քո օգտին նրա հանձն առած նվիրատվությունները, որոնք պետք է քո սեփականությունը կազմեն: Դե՜, զավակս, հուսով եմ, որ ես շուտով պապի կլինեմ, սատանան տանի. ես արդեն իսկ ուզում եմ զբաղվել իմ թոռնիկներով: Դե ուրեմն, այժմ երդվի՜ր ինձ, թե դրամական ոչ մի գործառնություն չես ստորագրի՝ առանց իմ խորհրդի, և եթե ես շատ շուտ գնամ միանալու հայր Շևրելին, ապա, երդվի՜ր, որ դու կդիմես քո փեսայի՝ երիտասարդ Լեբայի կարծիքին: Դե՜, այդ խոստացիր ինձ:

— Այո՛, հայր իմ, երդվում եմ:
Քնքուշ ձայնով արտասանված այս խոսքերի վրա՝ ծերունին համբուրեց իր դստեր երկու թշերը: Այդ երեկո բոլոր սիրահարները ննջեցին գրեթե այնքան խաղաղ, որքան պարոն և տիկին Գիյոմները:
Այդ հիշատակելի կիրակի օրվանից մի քանի ամիս անց, Սեն-Լյո եկեղեցու գլխավոր խորանը հանդիսատես եղավ իրարից միանգամայն տարբեր երկու ամուսնությունների: Օգյուստինը և Թեոդորն այնտեղ ներկայացան իրենց երջանկության բովանդակ փայլով, աչքերը սիրով առլեցուն, պճնագեղ արդուզարդերով. շքակառքն ու ծառաները սպասում էին դրսում: Իր ծնողների հետ, մի բավականին լավ վարձակառքով եկավ Վիրժինին: Հոր թևին մտած, ավելի համեստ պաճուճանքներով, նա խոնարհորեն հետևում էր իր կրտսեր քրոջը, կարծես նա այդ պատկերի ներդաշնակության անհրաժեշտ ստվերը լիներ: Պարոն Գիյոմը երևակայելի ամեն ճիգ գործադրել էր, որպեսզի եկեղեցում հաջողացնի Վիրժինիի ամուսնությունն Օգյուստինից առաջ: Եվ սակայն, սրտի խորունկ կսկիծով նա տեսավ, որ բարձրաստիճան, ինչպես նաև ստորադաս հոգևորականությունը անտեսելով հանգամանքները, միշտ էլ նախապատվությունը տալիս է ամենապերճ հարսնացուին: Նա լսեց, թե ինչպես իր հարևաններից մի քանիսը գովում էին օրիորդ Վիրժինիի խելոքությունը, որը, ասում էին նրանք, ամենակայուն ամուսնությունն էր կնքում, հավատարիմ մնալով թաղամասին. մինչդեռ նախանձից դրդված՝ նրանք մի քանի խայթոցներ արձակեցին Օգյուստինի հասցեին, որը ամուսնանում էր մի արվեստագետի, մի «ազնվականի» հետ. նրանք ավելացնում էին մի տեսակ սարսափով, որ եթե Գիյոմները վարակվել են փառասիրությամբ, ապա, վե՜րջ նրանց առևտրին: Լսելով թե ինչպես մի ծեր հովհարավաճառ ասում է, թե այդ մսխողը շուտով աղջկան կնստեցնի մոխիրի վրա, հայր Գիյոմը in petto* հրճվեց այն զգուշավորության համար, որով ինքը շարժվել էր ամուսնական պայմանագրի հոդվածները շարադրելիս: Երեկոյան, ընտանիքը բաժանվեց շքեղ պարահանդեսից հետո, որին և հաջորդեց մի այնպիսի ճոխ ու համադամ ընթրիք, որի հիշատակը քանի գնում կորչում է այժմվա սերնդի հիշողության մեջ: Պարոն և տիկին Գիյոմները մնացին Կոլոմբիե փողոցի իրենց առանձնատանը, ուր տեղի էր ունեցել խնջույքը: Պարոն և տիկին Լեբաները վարձակառքով վերադարձան Սեն-Դընի փողոցի վաղեմի տունը՝ իրենց ձեռքը վերցնելու «Գնդակ խաղացող կատվի» ղեկավարությունը: Արվեստագետը, երջանկությունից արբշիռ, փաթաթվեց իր սիրասուն Օգյուստինին, և երբ նրանց շքակառքը հասավ Տրուա-Ֆրեր փողոցը, նա նրան կրքոտությամբ բարձրացրեց իր թևերի վրա և գրկած նրան տարավ իր շքեղ ապարանքը:
Սիրո սաստկաշունչ կրակը, որով բռնված էր Թեոդորը, բերկրալից լափլիզել տվեց երիտասարդ ամոլին մոտավորապես մի ամբողջ տարի. ամենաթեթև մշուշն անգամ չեկավ պղտորելու երկնային լազուրը, որի տակ ապրեցին նրանք:

---

*
Հոգում (լատ.):

Կյանքը ոչնչով չճնշեց նրանց վրա: Թեոդորը յուրաքանչյուր օր սփռում էր վայելքի անբացատրելի թրթռանքներ: Կրքի պոռթկումները փոխարինում էին խնդությանը, քնքշանքին, երբ հոգիներն այնպես բարձր են սլանում գերզմայլանքի մեջ, որ կարծես այնտեղ մոռանում են մարմնական միավորումը: Մտածելու անկարող, երանավետ Օգյուստինը, անձնամատույց, օրորվում էր իր երջանկության ալեծուփ ընթացքով: Նա կարծում էր, թե դեռևս բավական չէ ամբողջ էությամբ անձնատուր լինել ամուսնությամբ նվիրագործված սրբազան սիրո, թե ինքը պետք է ավելին անի: Միամիտ և պարզունակ, նա չգիտեր ո՛չ մերժումների պչրանքը, ո՛չ էլ այն իշխանությունը, որ բարձրաշխարհիկ դեռատի կինն է ձեռք բերում իր ամուսնու վրա՝ ճարպիկ քմահաճույքներով: Նա չափից դուրս էր սիրում, որպեսզի հաշվի նստի ապագայի հետ, և նա երբեք չէր երևակայում, որ մի այդպիսի քաղցրաբույր կյանք կարող է երբևէ վերջ ունենալ: Նա ուրախ էր, տեսնելով, թե ինքը հանդիսանում է ամուսնու համակ խնդությունը. ուստի նա կարծեց, որ իր համար այդ անմար սերը կլինի զարդարանքներից ամենագեղեցիկը, ինչպես իր անձնվիրությունն ու հնազանդությունը կլիներ անսպառ հրապույր: Վերջապես, սիրո երանությունը այն աստիճանի էր չքնաղացրել նրան, որ իր գեղեցկությունը նրան ներշնչեց հպարտություն և հավատք, թե ինքը կարող էր տևականապես իշխել այնքան դյուրությամբ բոցավառվող մի մարդու վրա, ինչպիսին պարոն դը Սոմերվիոն էր: Այսպես ուրեմն, ամուսնությունը սիրո ուսուցումից բացի նրան ոչինչ չբերեց: Իր երջանկության մեջ նա մնաց այն տգետ, փոքրիկ աղջիկը, որն ապրում էր անշքորեն թաղված Սեն-Դընի փողոցում, և նա երբեք միտք չարեց յուրացնելու ձևերը, կրթությունը, տոնը այն հասարակության, ուր նա պետք է ապրեր: Նրա խոսքերը սիրո խոսքեր էին. ճիշտ է, նա դրանցում ծավալում էր մտքի մի տեսակ ճկունություն և արտահայտության որոշ նրբություն, սակայն նա օգտագործում էր այն ընդհանուր լեզուն, որը հատուկ է բոլոր կանանց, երբ սրանք ընկղմվում են մի այնպիսի կրքոտ սիրո մեջ, որը, թվում է, թե նրանց տարերքն է հանդիսանում: Եթե պատահմամբ Օգյուստինն արտահայտեր Թեոդորի մտքերի հետ չներդաշնակվող մի միտք,

ապա երիտասարդ արվեստագետը դրա վրա ծիծաղում էր, ինչպես ծիծաղում են մի օտարականի թույլ տված լեզվական առաջին սխալների վրա, որոնք սակայն վերջ ի վերջո դառնում են ձանձրալի, եթե երբեք չուղղվեն:
Այնուամենայնիվ, երբ ավարտվեց այդ տարին այնքան սրընթաց, ինչքան դյութիչ էր եղել, Թեոդորը մի առավոտ կարիք զգաց վերսկսելու իր աշխատանքներն ու սովորությունները: Նրա կինը հղի էր: Նա նորից հանդիպեց իր բարեկամներին: Երկար ու տանջալից այդ տարվա ընթացքում, երբ, Օգյուստինը մայր դարձավ և սնում էր երեխային, Թեոդորը հիարկե եռանդագին աշխատեց, սակայն նորից սկսեց զվարճություններ փնտրել բարձր հասարակության մեջ: Այն տունը, ուր նա սիրահոժար գնում էր, դքսուհի Կարիլիանոյի տունն էր: Դքսուհուն վերջ ի վերջո հաջողվել էր իր մոտ գրավել հռչակավոր արվեստագետին: Երբ Օգյուստինը բաղդատվեց, երբ նրա որդին այլևս չպահանջեց այն հարատև խնամքները, որոնք մորն արգելում էին աշխարհիկ զվարճությունները, Թեոդորն արդեն իսկ այն վիճակում էր գտնվում, որ տենչում էր զգալ փայփայված ինքնասիրության հաճույքը, ինչ որ հասարակությունն է տալիս մարդուն, երբ սա այնտեղ ներկայանում է բոլորի նախանձին և հիացմունքի առարկա մի կնոջ հետ: Զբոսնել հյուրասրահներում, այնտեղ երևալ շողշողուն՝ իր ամուսնու փառքով պսակված, բոլոր կանանց նախանձը շարժել... սա արդեն վայելքի նոր հունձ եղավ Օգյուստինի համար, բայց դա միևնույն ժամանակ հանդիսացավ վերջին ցոլքը, որ պետք է սփռեր նրա ամուսնական երջանկությունը: Նա սկսեց վիրավորել ամուսնու ունայն ինքնասիրությունը, երբ հակառակ իր կատարած անօգուտ ջանքերին, նա չկարողացավ թաքցնել տգիտությունը, լեզվի անհաճությունն ու իր նեղ մտահորիզոնը: Սիրո առանձին արբեցումը երկու և կես տարի զսպեց նկարչի բուռն բնավորությունը, բայց երբ վրա հասավ երկարատև տիրանալու հանդարտությունը, վերադարձան նախկին հակումներն ու սովորությունները, որոնք որոշ ժամանակ շեղվել էին իրենց սովորական ուղուց: Պոեզիան, նկարչությունն ու երևակայության վայելքները անժխտելի իրավունքներ ունեն վսեմ հոգիների վրա: Երկու տարիների ընթացքում Թեոդորը ոչ թե իրեն զրկել էր իր տենդոտ հոգու համար այդ անհրաժեշտ կարիքներից, այլ նա միայն նոր ճարակ էր գտել: Երբ արվեստագետը ծայրեծայր արշավեց սիրո անդաստանում, երբ նա երեխաների նման փնջեր կապեց վարդերից և կապտածաղիկներից այնպիսի ագահությամբ, չնկատելով, որ ձեռքերն այլևս չէին կարող դրանք բոլորը պահել, պատկերը փոխվեց: Երբ նկարիչը ցույց էր տալիս կնոջն իր ամենագեղեցիկ կոմպոզիցիաների ուրվագծերը, նա լսում էր նրա բացականչելը՝ ինչպես հայր Գիյոմը պիտի սներ. «Ի՜նչ սիրունն է»: Նման անկիրք հիացմունքը բարեխիղճ գնահատության արդյունք չէր, այլ դա բխում էր սիրո նկատմամբ նրա ունեցած հավատքից: Օգյուստինը իր ամուսնու մի նայվածքն ավելի բարձր էր գնահատում, քան ամենագեղեցիկ նկարը: Նրա համար ամենավսեմը սրտի հետ կապ ունեցող զգացումներն էին: Վերջապես, Թեոդորը չկարողացավ չընդունել մի դաժան իրողության ակներև փաստը. նրա կինն զգայուն չէր պոեզիայի նկատմամբ, նա չէր ապրում նրա ոլորտում. նա չէր հետևում նրա բոլոր քմայքներին, նրա երևակայության անսպասելի խաղերին, ուրախություններին, վշտերին. կինն ընթանում էր առօրյա գետնի վրա, իրական աշխարհում, մինչդեռ ինքը սավառնում էր երկնքում: Սովորական մտքի տեր մարդիկ չեն կարող գնահատել անվերջ վերածնվող տառապանքներն այն էակի, որը միացած լինելով մի ուրիշի հետ զգացմունքներից ամենամտերիմով, ստիպված է լինում անընդհատ ճնշել իր մտքի ամենանվիրական ծավալումները, ոչնչացնել, ետ մղելով դեպի անէություն, ինչ-որ մոգական զորությամբ իր մեջ ստեղծված պատկերները: Նրա համար այդ տանջանքը առավել դաժան է, քանի որ զգացմունքը, որ նա տածում է իր կենակցուհու նկատմամբ, հրամայում է որպես առաջին պատվիրան՝ ոչինչ չթաքցնել միմյանցից և ի մի խառնել մտքի, ինչպես նաև հոգու զեղումները: Մարդ չի կարող անպատիժ կերպով խաբել բնությանը՝ գործելով նրա կամքի դեմ: Բնությունն անողորմ է, ինչպես անհրաժեշտությունը, որը, անտարակույս, մի տեսակ սոցիալական բնություն է: Սոմերվիոն ապաստանեց իր արվեստանոցի անդորրի և լռության մեջ. նա հուսով էր, որ արվեստագետների հետ շփվելը նրա կնոջ մեջ կզարգացնի հոգևոր կյանքի ընդարմացած սաղմերը, որոնք բարձր իմացականությամբ օժտված մի քանի մարդկանց կարծիքով, որպես նախադրյալ գոյություն ունեն բոլոր էակների մոտ: Սակայն, Օգյուստինը չափից դուրս անկեղծորեն բարեպաշտ էր և նա ահաբեկվում էր արվեստագետներին հատուկ խոսելակերպից: Թեոդորի տված առաջին ճաշկերույթի ընթացքում նա լսեց, թե ինչպես մի երիտասարդ նկարիչ ասել էր մանկական մի այնպիսի թեթևամտությամբ, որը Օգյուստինն անկարող էր ըմբռնել, և որ ներելի է դարձնում ամենաանկրոն կատակն իսկ:
— Բայց, տիկին, ձեր դրախտը հո ավելի գեղեցիկ չէ, քան Ռաֆայելի «Այլակերպությունը»... Եվ սակայն ես հոգնել եմ դրան նայելուց:
Ուրեմն Օգյուստինը հոգևոր կյանքով ապրող այդ մտավորական հասարակության մեջ բերեց կասկածոտ ոգի, որը ոչ ոքից չվրիպեց: Նա իր ներկայությամբ նեղեց, իսկ, երբ իրենց նեղված են զգում, արվեստագետներն անգութ են լինում. նրանք փախչում են կամ ծաղրում: Տիկին Գիյոմը, ի միջի այլոց, ուներ մի ծիծաղելի հատկություն. նա չափազանցում էր իր արժանապատվությունը, կարծելով, որ այդպես պետք է վարվի ամուսնացած կինը, եթե նա ուզում է պատկառելի դառնալ,

թեև ինքն էլ հաճախ ծիծաղում էր դրա վրա: Օգյուստինն իր վրա կրում էր մոր սուտ-զգաստ բարեպաշտության ազդեցությունը: Այդ չափից դուրս զգաստությունն ու կեղծ ամոթխածությունը, որոնցից հաճախ չեն կարող խուսափել առաքինի կանայք, նյութ էր դարձել անմիջական ներշնչման տակ մրոտված մի քանի փոքրիկ երգիծական ուրվագրերի, որոնք իրենց անմեղ հստակաբանությամբ և նրբամտությամբ չէին կարող բարկացնել Սոմերվիոյին: Այդ հանաքները կարող էին և ավելի դաժան լինել. վերջ ի վերջո դրանք բարեկամների կողմից նրա նկատմամբ կիրառված փոքրիկ պատժամիջոցներ էին միայն: Բայց ոչինչ զուր չի անցնում՝ տպավորություններն այնպես հեշտությամբ ընկալող հոգու համար, որպիսին Թեոդորի հոգին էր: Ուստի, անզգալաբար ինչ-որ սառնություն համակեց նրան, որը քանի գնում աճում էր: Ամուսնական երջանկության հասնելու համար պետք է մագլցել մի ամբողջ լեռ, որի սարահարթը շատ մոտիկ է դրա հակալանջի խիստ թեք սահուն զառիթափին. նկարչի սերը իջնում էր այդ զառիթափով: Նա վճռեց, թե իր կինն անկարող էր գնահատել բարոյական այն նկատառումները, որոնք, ըստ իրեն, արդարացնում էին նրա նկատմամբ իր տարօրինակ վարվելակերպը. նա իրեն համոզեց, թե բոլորովին անմեղ բան է կնոջից թաքցնել նրա համար անհասկանալի մտքեր և կենցաղային այնպիսի շեղումներ, որոնք քիչ արդարացի են բուրժուական բարոյականության կողմից: Օգյուստինը պարփակվեց մռայլ և լուռ վշտի մեջ: Այդ ծածուկ զգացմունքները երկու ամուսինների միջև գցեցին մի քող, որը օրեցօր պետք է թանձրանար: Չնայած ամուսինը նրա նկատմամբ հարգանքի մեջ չէր թերանում, Օգյուստինը, այնուամենայնիվ, չէր կարող չդողդողալ, տեսնելով, թե նա հասարակության համար էր վերապահում իր մտքի և բարեշնորհության գանձերը, որ առաջ նա գալիս էր դնելու իր ոտքերի մոտ: Շուտով նա չարագուշակ մեկնաբանություն տվեց տղամարդկանց հեղհեղուկ նկարագրի մասին հասարակության մեջ շրջող սրամիտ զրույցներին: Նա չգանգատվեց, բայց նրա վարմունքը հավասար էր հանդիմանանքի: Ամուսնությունից երեք տարի անց, այս մանկամարդ և գեղանի կինը, որ չքնաղափայլ անցնում էր իր պերճ շքակառքով, որ ապրում էր փառքով և հարստությամբ շրջապատված, անփույթ և կյանքի վիճակները ճիշտ գնահատելու անկարող բազմաթիվ մարդկանց նախանձի առարկա, համակվեց խորունկ թախիծով: Նա դալկացավ, նա մտածեց, համեմատություններ արեց. այնուհետև դժբախտությունը նրա առաջ բաց արեց փորձառության առաջին էջերը: Նա որոշեց արիաբար մնալ իր պարտականությունների շրջանակում, հուսալով, որ այդ վեհանձն վարմունքով ինքը վաղ թե ուշ պիտի վերագտներ իր ամուսնու սերը. սակայն այդպես չստացվեց: Երբ Սոմերվիոն, աշխատելուց հոգնած, դուրս էր գալիս իր արվեստանոցից, Օգյուստինը չէր հասցնում հարկ եղած արագությամբ թաքցնելու իր ձեռագործը, և նկարիչը տեսնում էր, թե ինչպես իր կինը բարեխիղճ տանտիկնոջ մանրակրկիտությամբ կարկատում է սպիտակեղենը: Նա վեհանձնորեն և առանց տրտնջալու հայթայթում էր իր ամուսնու շռայլությունների համար անհրաժեշտ դրամը. բայց ցանկանալով պահպանել իր սիրելի Թեոդորի հարստությունը, նա ցուցաբերում էր խնայողություն, լինի իր նկատմամբ, լինի առտնին տնտեսության ղեկավարման մանրուքներում: Նմանօրինակ ընթացքն անհամատեղելի է արվեստագետների անհոգության հետ, որոնք իրենց ասպարեզի վերջում այնքան են վայելած լինում կյանքը, որ չեն ուզում անգամ իմանալ իրենց սնանկության պատճառները: Անօգուտ է նշել երանգի յուրաքանչյուր խաթարում, որով նրանց շողափայլ մեղրալուսինը, աստիճանաբար մթագնվելով, հասավ մինչև վերջնական խավարում:

Մի երեկո, թախծալից Օգյուստինը, որ վաղուց է, ինչ լսում էր, թե ինչպես իր ամուսինը հիվանդագին ոգևորությամբ խոսում է դքսուհի Կարիլիանոյի մասին, մի բարեկամուհուց ստացավ իբր թե գթոտ, սակայն նենգամտաբար տրված մի քանի խորհուրդներ այն սերտ կապի շուրջը, որ գոյություն ուներ Սոմերվիոյի և կայսերական արքունիքին տոն տվող այդ հռչակավոր պչրուհու միջև: Քսանմեկ տարեկան հասակում, երիտասարդության և գեղեցկության իր ողջ փայլի մեջ Օգյուստինը տեսավ, թե ինքը դավաճանորեն լքված էր երեսուն և վեց տարեկան մի կնոջ համար: Իրեն զգալով դժբախտ՝ աշխարհիկ հասարակության մեջ և իր համար ամայացած տոնահանդեսներում, խեղճ կինն այլևս ոչինչ չհասկացավ ո՛չ այն հիացմունքից, որ ինքն այնտեղ հարուցում էր, ո՛չ էլ այն նախանձից, որ ինքը բորբոքում էր իր շուրջը: Նրա դեմքը նոր արտահայտություն ընդունեց. մելամաղձոտությունը ծորեց նրա դիմագծերի մեջ համակերպվածության քաղցրությունն ու արհամարհված սիրո դալկությունը: Շուտով ամենահրապուրիչ տղամարդիկ սկսեցին պտտվել նրա շուրջը, սակայն նա մնաց մենավոր ու առաքինի: Ամուսնու բերանից պատահաբար դուրս թռած արհամարհական մի քանի խոսքեր անհավատալի հուսահատությամբ համակեցին նրան: Նրա աչքերի առջև ճակատագրական պարզությամբ հանդես եկան իրենց միության թերությունները, իր դաստիարակության խեղճությունը, որոնք խանգարում էին իր և ամուսնու հոգիների լիակատար միաձուլմանը, նա այնքան էր սիրում Թեոդորին, որ արդարացնում էր նրան, դատապարտելով իրեն: Նա արյուն արցունք թափեց և իմացավ, բայց արդեն չափազանց ուշ, որ ամուսնության մեջ գոյություն ունի հոգեկան անհամապատասխանություն, ինչպիսի անհամապատասխանություն կարող է գոյություն ունենալ բնավորությունների մեջ կամ հասարակական դիրքի տեսակետից:

Մտաբերելով իր ամուսնության գարունքի բերկրալից վայելքները՝ նա ըմբռնեց անցյալում իր ունեցած երջանկության խորությունը և ինքն իր մեջ համաձայնեց, թե այդպիսի հարուստ հունձն իրենից ներկայացնում էր մի ամբողջ կյանք, որ չէր կարելի հատուցել այլ կերպ, բայց եթե դժբախտությամբ: Եվ սակայն նա չափազանց անկեղծությամբ էր սիրում և չէր ուզում հույսը կտրել: Ուստի և քսանմեկ տարեկան հասակում, նա համարձակվեց ձեռնամուխ լինել ինքնուսուցման, որպեսզի մշակի իր միտքը և այն դարձնի առնվազն արժանի ամուսնու հանճարին, որի վրա նա զմայլվում էր:
«Եթե ես բանաստեղծ չեմ, գեթ պիտի ըմբռնեմ պոեզիան»,— ինքն իրեն ասում էր նա:
Ուրեմն, ծավալելով կամքի այդ ուժը, այդ էներգիան, որ բոլոր կանայք ունեն, երբ նրանք սիրում են, տիկին Սոմերվիոն խիզախորեն փորձեց փոփոխել իր բնավորությունը, իր նիստ ու կացն ու իր սովորությունները. նա ագահորեն կլանեց հատորներ, սովորեց արիաբար, և սակայն նրան հաջողվեց լինել միայն մի փոքր նվազ տգետ: Մտքի անոսրությունն ու խոսակցության շնորհալիությունը բնության պարգևն է կամ դեռևս օրորոցից սկսված հարատև դաստիարակության պտուղ: Նա կարողանում էր գնահատել երաժշտությունը, վայելքով լսել այն, բայց անկարող էր ճաշակով երգել: Նա հասկացավ գրականությունը, բանաստեղծության գեղեցկությունը, բայց արդեն չափազանց ուշ էր, որպեսզի նա կարողանար դրանցով գեղազարդել իր ըմբոստ հիշողությունը: Նա հաճույքով լսում էր պերճախոս մարդկանց զրույցները, բայց ոչ մի փայլուն մասնակցություն չէր բերում այդ զրույցներին: Նրա կրոնական ըմբռնումներն ու մանկական հասակի նախապաշարմունքներն արգելակեցին նրա մտքի լիակատար ազատագրումը: Վերջապես, նրա դեմ Թեոդորի հոգում մուտք էր գործել ինչ-որ կանխակալ տրամադրություն, որ նա չկարողացավ հաղթահարել: Արվեստագետը ծաղրում էր բոլոր նրանց, ովքեր գովաբանում էին իր կնոջը և նրա ծաղրանքները բավականին հիմնավորված էին. նա այնքան էր ազդում այդ մատղաշ և սրտառուչ էակի վրա, որ նրա ներկայությամբ կամ նրա հետ մտերմության պահերին կինն ուղղակի դողում էր: Հաճելի լինելու սաստիկ ցանկությունը շփոթեցնում էր Օգյուստինին. նա զգում էր, որ նրա առաջ իր միտքն ու գիտելիքները ցնդում են, տեղի տալով երկյուղի: Նրա հավատարմությունն անգամ դուր չեկավ այդ անհավատարիմ ամուսնուն, որը կարծես քաջալերում էր նրան հետևելու ապօրինի ուղիների՝ նրա պարկեշտությունը վերագրելով անզգայության: Օգյուստինը ջանաց, բայց իզուր, հրաժարվել իր ողջախոհությունից, ենթարկվել իր ամուսնու քմահաճույքներին, ֆանտազիաներին և նվիրվել նրա եսապաշտ ունայնասիրությունը բավարարելուն. նա չքաղեց իր զոհողությունների պտուղը: Գուցե նրանք երկուսով բա՞ց էին թողել այն ակնթարթը, երբ հոգիները կարող են միմյանց հասկանալ: Մի օր մանկամարդ կնոջ չափազանց զգայուն սիրտն ստացավ այն հարվածներից մեկը, որոնք այնպես ուժգնորեն են կտրում զգացումների կապերը, որ կարծում եք, թե վերջնականապես խորտակվել են դրանք: Նա ամփոփվեց ինքն իր մեջ: Բայց շուտով ինչ-որ ճակատագրական մտահոգացում նրան թելադրեց գնալ և սփոփանք խորհուրդ փնտրել իր ընտանիքի ծոցում:
Ուստի, մի առավոտ, նա ուղղվեց դեպի այդ համեստ ու լռակյաց տան անճոռնի ֆասադը, մի տուն, ուր իր մանկությունն էր անցել: Նա հոգոց հանեց, վերստին տեսնելով այն պատուհանը, որտեղից մի օր, իր առաջին համբույրն էր ուղարկել այն մարդուն, որը, այսօր, նրա կյանքի վրա սփռում էր ինչքան փառք, նույնքան և դժբախտություն: Ոչինչ չէր փոխվել այդ քարանձավում, ուր, սակայն բարգավաճում էր կերպասեղենի առևտուրը: Օգյուստինի քույրը հնամենի վաճառասեղանի հետև գրավում էր մոր տեղը: Վշտահար կինը հանդիպեց իր փեսային՝ գրիչն ականջին: Սա նրան հազիվ թե լսեց, այնքան զբաղված էր երևում: Ապրանքների ընդհանուր հաշվառման ահարկու ազդանշաններն էին տրվում նրա շուրջը: Ուստի Ժոզեֆը նրան թողեց՝ ներողություն խնդրելով: Քույրը նրան ընդունեց սառնությամբ, ցույց տալով որոշ քինախնդրություն: Եվ իրոք, Օգյուստինը երբեք չէր եկել իր քրոջը տեսնելու այլ կերպ, բայց եթե անցնելիս՝ պերճափայլ ու շքակառքից իջնելով: Զգուշավոր Լեբայի կինը երևակայեց, որ այդ վաղ առավոտվա այցի շարժառիթը նախ և առաջ փողն էր: Նա փորձեց մնալ վերապահ դիրքի վրա, ինչ որ բազմիցս ժպիտ հարուցեց Օգյուստինի դեմքին: Նկարչի կինը տեսավ, որ իր մայրը հանձինս Վիրժինիի, բացի գդակի ծոպերից, գտել էր իր արժանի հաջորդը, որը բարձր էր պահում «Գնդակ խաղացող կատվի» հնօրյա պատիվը: Նախաճաշին, տան ռեժիմում նա նկատեց որոշ փոփոխություններ, որոնք պատիվ էին բերում Լեբային. գործակատարները աղանդերի պահին չհեռացան, նրանց թույլ էր տրվում խոսել, բացի այդ, սեղանի ճոխությունը հայտնում էր բարեկեցիկ կյանքի մասին, թեև առանց ավելորդ շռայլանքի: Վայելչագեղ Օգյուստինը նրանց մոտ հայտնաբերեց Ֆրանսիական կոմեդիայի թատրոնի օթյակի տալոններ, և նա հիշեց իր քրոջն այդ թատրոնում հեռվից հեռու տեսած լինելը: Տիկին Լեբան իր ուսերի վրա գցել էր քիշմիրի շալ, որի շքեղությունը հաստատ վկայում էր ամուսնու կողմից նրա հանդեպ ցուցաբերված ուշադիր վերաբերմունքի, ինչպես նաև առատաձեռնության մասին: Վերջապես, երկու ամուսինները քայլում էին իրենց դարի հետ համընթաց: Շուտով Օգյուստինը նրանց հանդեպ լցվեց խանդաղատանքով, երբ տեսավ, թե իրար հրաշալիորեն հարմարված այդ զույգը օրվա երկու երրորդի ընթացքում վայելում էր խաղաղ

երջանկություն, ճիշտ է, առանց հոգեկան թռիչքների, բայց և նույնպես առանց փոթորկալի հույզերի: Նրանք ընդունել էին կյանքն ինչպես մի առևտրական ձեռնարկություն, ուր նախ և առաջ հարկավոր էր պատվով կատարել իր գործը: Կինն իր նկատմամբ արտակարգ մի սեր չգտնելով ամուսնու մեջ՝ ջանացել էր, որ այն ծնվի: Ամուսինն անզգալաբար սկսեց հարգել Վիրժինիին, գուրգուրալ նրա վրա, և ժամանակը, որի ընթացքում փթթեց երջանկությունը, հանդիսացավ Ժոզեֆ Լեբայի և նրա կնոջ համար այդ երջանկության հարատևության երաշխիքը: Ուստի, երբ Օգյուստինը, տրտնջալով պատմեց իր ցավալի կյանքի մասին, նա ստիպված էր ընդունել մի ամբողջ տեղատարափ ընդհանուր տեղիների, որ Սեն-Դընի փողոցի բարոյագիտությունն էր հայթայթում իր քրոջը:

— Չարիքը եղել է, կի՛նս,— ասաց Ժոզեֆ Լեբան,— պետք է ջանալ լավ խորհուրդներ տալ մեր քրոջը:

Ապա, ճարպիկ վաճառականը լրջորեն վերլուծեց այն բոլոր հնարավորությունները, որ օրենքն ու հասարակաց վարքուբարքը կարող էին ընձեռել Օգյուստինին՝ դուրս գալու համար այդ ճգնաժամից. նա համարակալեց, այսպես ասած, ի՞նչ կարելի էր նկատի առնել, բաժանելով և դասավորելով մի տեսակ կատեգորիաների մեջ յուրաքանչյուր հանգամանք, ըստ իր ուժի, կարծես հարցը վերաբերվեր տարբեր որակի ապրանքների. այնուհետև նա դրանք գցեց նժարի մեջ, կշռեց և եզրափակեց, զարգացնելով այն միտքը, թե քենին կանգնած էր ամենախիստ միջոցի դիմելու անհրաժեշտության առաջ, ինչ որ երբեք չէր կարող բավարարել Օգյուստինին, որը դեռևս սիրում էր իր ամուսնուն: Ուստի և այդ զգացմունքն արթնացավ իր ողջ ուժով, երբ նա լսեց, որ Ժոզեֆ Լեբան խոսում է դատական միջոցառումների մասին: Նա շնորհակալություն հայտնեց իր երկու ազգականներին և վերադարձավ տուն ավելի շփոթված, քան նրանց հետ խորհրդակցելուց առաջ: Այնուհետև նա որոշեց գնալ Կոլոմբիե փողոցի հնամենի առանձնատունը իր դժբախտությունների մասին հորը և մորը հայտնելու նպատակով: Խեղճ փոքրիկ կինը նմանվում էր այն հիվանդներին, որոնք հասնելով անհուսալի վիճակի, փորձում են ամեն տեսակի դեղագրեր և վստահում մինչև անգամ պառավական դեղերի: Երկու ծերունիների սրտաբուխ ընդունելությունը հուզեց նրան: Այդ այցելությունը նրանց բերում էր մի այնպիսի սփոփանք, որը թանկարժեք գանձի էր հավասար: Չորս տարի է, ինչ նրանք ընթանում էին կյանքում՝ աննպատակ և կողմնացույցից զուրկ ծովագնացների նման: Նստած իրենց օջախի առաջ, նրանք իրար պատմում էին «մաքսիմումի» ժամանակաշրջանի բոլոր աղետների մասին, կերպասեղենի իրենց հին գնումների մասին, այն մասին, թե ինչպե՛ս իրենք կարողացել էին խուսափել սնանկությունից և մանավանդ Լեկոկի այդ հռչակավոր սնանկության մասին, որը հանդիսանում էր հայր Գիյոմի Մարենգոյի ճակատամարտը [10]: Այնուհետև, երբ արդեն սպառած էին լինում հին դատավարությունները, նրանք հիշում էին ապրանքների այն ընդհանուր հաշվառումները, որոնք հատկապես շատ հասութաբեր էին եղել. կրկին ու կրկին իրար պատմում Սեն-Դընի թաղամասի հին պատմությունները: Ժամը երկուսին հայր Գիյոմը գնում էր մի հայացք գցելու «Գնդակ խաղացող կատվի» վաճառատանը: Վերադարձին նա կանգ էր առնում բոլոր խանութների առջև, որոնք հին ժամանակ իր մրցակիցներն էին եղել, և որոնց երիտասարդ սեփականատերերը հույս ունեին ծեր վաճառականին ներքաշելու արկածախնդրական ինչ-որ գործարքի մեջ, որ նա իր սովորության համաձայն երբեք կտրականապես չէր մերժում: Նորմանդական երկու ընտիր ձիեր գիրությունից սատկում էին առանձնատան ախոռում. տիկին Գիյոմը դրանց օգտագործում էր, որպեսզի իրեն քարշ տան, ամեն կիրակի, իր ծխական եկեղեցու հանդիսավոր պատարագին: Այս պատկառելի զույգը շաբաթվա մեջ երեք անգամ ճաշկերույթ էր տալիս: Իր փեսայի՝ Սոմերվիոյի ազդեցության շնորհիվ, հայր Գիյոմը նշանակվել էր զորքի հանդերձավորման խորհրդակցական կոմիտեի անդամ: Այն օրվանից, երբ իր ամուսինն այդպես բարձր պաշտոն էր գրավել ադմինիստրացիայում, տիկին Գիյոմը վճռել էր բաց ապրելակերպ ունենալ: Նրանց բնակարանն այն աստիճան էր խճողված ոսկյա և արծաթյա զարդարանքներով, անճաշակ, բայց հաստատուն արժեք ներկայացնող կահույքներով, որ այնտեղ ամենապարզ սենյակն անգամ մատուռի էր նմանվում: Թվում էր, թե այդ առանձնատան կահավորման ամեն մի մանրուքում համառ պայքար է գնում խնայողության և շռայլանքի միջև: Կարծես հայր Գիյոմը նկատի է առել դրամ ներդնել նույնիսկ մի ջահ գնելիս: Այդ շուկայի մեջտեղում, որի ճոխությունը խոսում էր երկու անզբաղ ամուսինների ձանձրույթի մասին, Սոմերվիոյի հռչակավոր նկարը պատվավոր տեղ էր գրավել: Դա պարոն և տիկին Գիյոմների մխիթարությունն էր, որոնք, ակնոցն աչքերին, օրվա մեջ քսան անգամ հայացքներն ուղղում էին դեպի իրենց վաղեմի կյանքի այդ պատկերը, այն կյանքի, որն իրենց համար այնքան աշխույժ ու այնքան ուրախալի էր եղել: Այդ առանձնատան և այդ սենյակների տեսքը, որտեղ ամեն ինչ հնությամբ և միջակությամբ էր շնչում, այդ երկու արարածների տեսքը, որոնց կարծես փոթորիկը գցել էր ինչ-որ ոսկյա ապառաժի վրա, հեռու՝ աշխարհից և այն գաղափարներից, որոնք կյանք են տալիս մարդուն, ուղղակի զարմացրեց Օգյուստինին: Այդ րոպեին նա դիտում էր երկրորդ մասն այն ներկայացման, որի սկիզբն ապշեցրել էր նրան Ժոզեֆ Լեբայի մոտ. դա պատկերում էր անհանգիստ մի կյանք, թեև շարժումներից

զուրկ, մի տեսակ բնազդային, մեխանիկական գոյություն՝ նման կուղբերի գոյության: Ուստի և իր վշտերը նրան ներշնչեցին չգիտես ինչպիսի հպարտություն, մտածելով, որ դրանց ակնաղբյուրը գտնվում էր իր տասնութամսյա երջանկության մեջ, մի այնպիսի երջանկություն, որպիսին նրա աչքին արժեր հազար նման գոյություններ, որոնց ունայնությունը նրան թվում էր սարսափելի: Այնուամենայնիվ նա թաքցրեց այդ ոչ-շատ գթոտ զգացմունքը և ծնողների համար ծավալեց իր մտքի նոր շնորհները, գորովալից նազանքները, որ սերն էր սովորեցրել նրան և նրանց մեջ ստեղծեց բարենպաստ տրամադրություն, որպեսզի լսեն իր ամուսնական տրտունջները: Ծերունիներն առհասարակ սիրում են նմանօրինակ խոստովանություններ: Տիկին Գիյոմն ուզեց իմանալ ամենաչնչին մանրուքներն անգամ այդ տարօրինակ կյանքի, որը, նրա համար ինչ-որ հեքիաթային բան էր բովանդակում: «Բարոն դը լա Օնտանի ճանապարհորդությունները», որոնց ընթերցումը նա միշտ էլ սկսում էր առանց երբևէ վերջացնելու, դրանից ավելի զարհուրելի բան չհայտնեցին նրան Կանադայի վայրենաբնակների մասին:
— Ինչպե՞ս թե, զավա՛կս, ամուսինդ առանձնանում է մերկ կանանց հետ, և դու բավականին պարզամիտ ես հավատալու, որ նա նրանց նկարո՞ւմ է:
Այդպես բացականչելով՝ պառավը տեղավորեց իր ակնոցը ձեռագործի փոքրիկ սեղանի վրա, թափ տվեց փեշերը և ձեռքերը դրեց իր նախասիրած պատվանդանը հանդիսացող ջեռուցիկով բարձրացված ծնկների վրա:
— Բայց, մայր իմ, բոլոր նկարիչներն էլ ստիպված են մոդելներ ունենալ:
— Սակայն նա խիստ զգուշացավ այդ բոլորի մասին հայտնել, երբ քո ձեռքը խնդրեց: Եթե այդ իմանայի, ապա ես իմ աղջկան չէի տա այդպիսի արհեստ ունեցող մի մարդու: Կրոնն արգելում է այդ կարգի նողկանքները. դա բարոյականության դեմ է: Ուրեմն, ասում էիր, նա ժամը քանիսի՞ն է վերադառնում տուն:
— Այսինքն, ժամի մեկին, երկուսին…
Երկու ամուսիններն իրար նայեցին խորունկ զարմանքով:
— Նա ուրեմն խաղո՞ւմ է,— ասաց պարոն Գիյոմը,— իմ ժամանակին, միայն խաղացողներն էին այդքան ուշ վերադառնում տուն:
Օգյուստինը մի թեթև ծռմռեց շրթունքը. դրանով նա ժխտում էր այդ ամբաստանությունը:
— Դու ուրեմն դաժան գիշերներ ես անցկացնում, սպասելով նրան,— վրա տվեց տիկին Գիյոմը:— Բայց ոչ, դու պառկում ես, այնպես չէ՞: Եվ, երբ տանուլ է տվել, այդ ճիվաղն արթնացնո՞ւմ է քեզ:
— Ո՛չ, մայր իմ, ընդհակառակը, նա երբեմն շատ զվարթ է: Նույնիսկ, հաճախ, երբ եղանակը գեղեցիկ է, նա ինձ առաջարկում է վեր կենալ Բուլոնյան անտառ գնալու:
— Անտա՞ռ, այդ ժամերի՞ն, ուրեմն պետք է դու խիստ փոքր բնակարան ունենաս, որ, չբավարարվելով իր սենյակներով, իր հյուրասրահներով՝ նա կարիք զգա քեզ այդպես քաշ տալու... թերևս այդ գարշելին քեզ այդպիսի զբոսանքի քաշ տալով, ուզում է, որ դու մրսես, որպեսզի քեզնից ազատվի: Որտե՞ղ է տեսնված, որ կարգին մարդը, հաստատուն զբաղմունք ունեցող մարդը դիվահարի պես թրև գա անտառում:
— Բայց, մայր իմ, դուք ուրեմն չե՞ք հասկանում, որ զարգացնելու համար իր տաղանդը, նա կարիք ունի հոգեկան թռիչքների: Նա շատ է սիրում այն տեսարանները, որոնք…
— Ա՛հ, ես լինեի, տեսնեիր, ինչպիսի գեղեցիկ տեսարաններ սարքեի նրա գլխին,— բացականչեց տիկին Գիյոմն ընդհատելով իր դստեր խոսքը:— Դու ինչպե՞ս կարող ես խնայել այդպիսի մի մարդու: Նախ և առաջ, ես չեմ սիրում, որ ջրից բացի, այլ բան են խմում. դա առողջարար չէ: Ինչո՞ւ նրա համար զզվելի է նայել կանանց, երբ նրանք ուտում են: Ինչ նորօրինակ և այլանդակ բնավորություն: Այն բոլորը, ինչ դու մեզ պատմեցիր, անհնարին է: Չի կարող պատահել, որ մարդ տնից դուրս գա սուսուփուս և վերադառնա տուն տասն օր հետո միայն: Նա քեզ ասում է, որ գնացել է Դիեպ՝ նկարելու համար ծովը: Մի՞թե ծովը կնկարեն: Նա քեզ քնաբեր հեքիաթներ է պատմում:
Օգյուստինը բաց արեց բերանը, որպեսզի պաշտպանի իր ամուսնուն, բայց տիկին Գիյոմը լռություն պարտադրեց նրան ձեռքի մի շարժումով, որին, հնուց մնացած ինչ-որ սովորությամբ՝ աղջիկը հնազանդվեց, և մայրը բացականչեց կտրուկ շեշտով.
— Դե՛, դու ինձ մի՛ ասա այդ մարդու մասին. նա երբեք եկեղեցի ոտք չի դրել, բացի միայն քեզ տեսնելու և քեզ հետ ամուսնանալու համար: Անկրոն մարդիկ կարող են ամեն ինչ անել: Մի՞թե Գիյոմն երբևիցե միտք է արել ինձնից որևէ մի բան թաքցնել, երեք օր մնալ առանց բերանը բացելու և ապա շատախոսել կույր կաչաղակի պես:
— Թանկագին մայր իմ, դուք շատ խստորեն եք դատում օժտված անձնավորությունների մասին: Եթե դրանք ունենային նույնանման գաղափարներ, ինչ որ մյուսներն ունեն, ապա դրանք այլևս տաղանդավոր մարդիկ չէին լինի:
— Թե որ այդպես է, թող տաղանդավոր մարդիկ մնան իրենց տեղում և չամուսնանան: Որ ի՜նչ, տաղանդավոր մարդն ուրեմն պիտի դժբախտացնի՞ իր կնոջը, որովհետև նա տաղանդ ունի, ուրեմն այդ լա՞վ է: Տաղա՜նդ, տաղա՜նդ: Այնքան էլ տաղանդ չկա ամեն որպե ափեղ-ցփեղ խոսելու մեջ, մարդկանց խոսքը կտրելու մեջ, իր տանը աղմուկ բարձրացնելու մեջ, այն բանի մեջ, որպեսզի

ինքդ չիմանաս, թե ո՞ր ոտի վրա պար գաս, հարկադրելու մեջ մի կնոջ՝ որ սա զվարճանա, երբ ինքն է զվարթ, տխրի՝ հենց որ ինքը տխուր է:
— Բայց, մայր իմ, հարուստ երևակայության տեր մարդկանց յուրահատկությունն այդ է...
— Դա ի՞նչ երևակայել է որ…— գոչեց տիկին Գիյոմը, նորից ընդհատելով իր դստեր:— Իրոք որ նա տաղանդավոր հիմարություններ ունի, ազնիվ խոսք: Դա ի՞նչ մարդ է, որ առանց բժշկից խորհուրդ առնելու, հանկարծ գլուխն է մտցնում միայն բանջարեղենով սնվելու ինչ-որ ֆանտազիա: Եթե դա կրոնի համար լիներ, էլի ոչինչ. ծոմապահությունը գեթ մի բանով օգտակար կլիներ նրան. սակայն նա մի հյուգենոտից ավելի հավատք չունի: Մարդ երբևէ տեսե՞լ է մեկի, որը, նրա պես, ձիերին ավելի սիրի, քան իր արյունակիցներին, գանգրացնել տա մազերը հեթանոսի նման, արձաններ կանգնեցնի բեհեզի տակ, ծածկել տա պատուհանները ցերեկ ժամանակ՝ աշխատելու համար լամպի լույսով: Դե՛, թող ինձ, թո՛ղ... թե որ նա այդքան այլանդակորեն անբարոյական չլիներ, պետք կլիներ գժանոց ուղարկել նրան: Դու դիմիր պարոն Լորոյի՝ Սեն-Սյուլպիս եկեղեցու երեցի խորհուրդներին. խնդրիր նրան, որպեսզի նա հայտնի իր կարծիքն այդ բոլորի մասին, նա քեզ կասի, որ քո ամուսինը քրիստոնեավայել վարմունք չունի…
— Օ՜հ, մայր իմ, մի՞թե դուք կարող եք կարծել…
— Այո՛, ես կարծում եմ, որ դա այդպես է: Դու նրան սիրեցիր և ոչինչ չես նկատել այս կարգի բաներից: Բայց ամուսնության առաջին շրջանում, ես հիշում եմ, որ հանդիպել եմ նրան Շան-զ'Էլիզեում. ձի էր նստել: Եվ ի՜նչ... նա մերթ արշավում էր քառատրոփ, մերթ կանգ էր առնում և առաջանում քայլ առ քայլ: Եվ այն ժամանակ ես ինձ ասացի.— Այ թե քեզ դատողությունից զուրկ մի մարդ:
— Հա՛,— բացականչեց պարոն Գիյոմը շփելով իր ձեռքերը,— ինչ լավ եմ արել, որ քո ամուսնության ժամանակ քո ունեցվածքն այդ տարօրինակ մարդուց անջատ եմ գրանցել տվել: Եվ երբ Օգյուստինն անխոհեմություն արեց պատմելու ամուսնու դեմ իր ունեցած գանգատների իսկական պատճառների մասին, երկու ծերունիները սառույց կտրեցին զայրույթից: Տիկին Գիյոմն իսկույն արտասանեց «ապահարզան» բառը: Ապահարզան բառը լսելով՝ անզբաղ վաճառականը կարծես արթնացավ: Խթանվելով իր աղջկա հանդեպ տածած սիրուց, ինչպես նաև աշխուժության այն հեռանկարից, որ դատավարությունը պիտի մտցներ իրադարձություններից զուրկ իր կյանքի մեջ, հայր Գիյոմն սկսեց խոսել: Նա իսկույն արտահայտվեց հօգուտ ապահարզանի, պատրաստ էր անմիջապես դիմելու դատարանին, խոստացավ դստեր՝ իր վրա վերցնել բոլոր ծախսերը, տեսնվել դատավորների, հավատարմատարների, փաստաբանների հետ, երկինք-գետին իրար խառնել: Տիկին Սոմերվիոն սարսափած՝ մերժեց հոր ծառայությունները. նա հայտարարեց, որ չէր ուզենա իր ամուսնուց բաժանվել թեկուզ տասնապատիկ անգամ ավելի ևս դժբախտ լիներ, և նա այլևս չխոսեց իր վշտերի մասին: Ծնողների ամեն տեսակի մանր ու անխոս խնամքներից պարտասուն՝ որոնցով երկու ծերունիները փորձեցին, բայց իզուր, սփոփել նրան, մոռացնել նրա սիրո ցավերը, Օգյուստինը հեռացավ. նա զգում էր, թե անհնարին է, և իրեն չի հաջողվի հասնել այն բանին, որպեսզի սահմանափակ անձնավորությունները լավը դատեն գերազանց մարդկանց մասին: Նա սովորեց, թե կինը պետք է թաքցնի բոլորից, անգամ իր ծնողներից, այն դժբախտությունները, որոնք դժվար թե կարեկցանք գտնեն ուրիշների մոտ: Բարձր ոլորտների տառապանքներն ու փոթորիկները կարող են հասկանալ ու գնահատել միմիայն այն վեհ հոգիները, որոնք ապրում են այնտեղ: Ամեն ինչում մեր մասին կարող են դատել միմիայն մեր հավասարները: Ուստի, խեղճ Օգյուստինն իրեն գտավ իր տան սառը մթնոլորտում՝ իր տխուր խոհերին անձնատուր: Ուսումը նրա համար այլևս ոչինչ չէր ներկայացնում, քանի որ ուսումը նրան չէր վերադարձրել իր ամուսնու սիրտը: Հասու լինելով բոցավառ հոգիների գաղտնիքներին, նա չուներ նրանց ունակությունները, նա ամբողջ ուժով մասնակցեց նրանց ցավերին, առանց կարողանալու բաժանել նրանց հաճույքները: Նա զզվել էր աշխարհից, որը նրան թվում էր գռեհիկ ու ճղճիմ՝ սիրո իրադարձությունների առաջ: Մի խոսքով՝ կյանքը նրան չէր հաջողվել: Մի երեկո ինչ-որ միտք գրավեց նրան, և դա եկավ երկնային ճառագայթի պես լուսավորելու նրա ցավատանջ հոգին: Նման մի միտք կարող էր ժպտալ միմիայն նրա չափ մաքուր, և նրա չափ առաքինի մի անձնավորությանը: Նա որոշեց գնալ դքսուհի դը Կարիլիանոյի մոտ, ոչ թե նրանից ետ պահանջելու իր ամուսնու սիրտը, այլ իմանալու համար, թե ի՜նչ հնարավորություններով էր այդ կինը հափշտակել իր ամուսնու սիրտը, հարկադրելու այդ աշխարհիկ հպարտ կնոջը կարեկցել իր բարեկամի երեխաների մորը, ողոքելու նրան, նրան դարձնելով իր ապագա երջանկության ստեղծողը, որչափով եղել էր իր ներկա դժբախտության մեղսակիցը:
Ուստի, մի օր, երեկոյան ժամը երկուսին, երկչոտ Օգյուստինը, զինված գերմարդկային քաջությամբ, բարձրացավ իր կառքը, որպեսզի փորձի մուտք գործել մինչև բուդուարն այդ հռչակավոր պչրուհու, որը երբեք չէր երևում այդ ժամից առաջ: Տիկին Սոմերվիոն դեռևս ծանոթ չէր Սեն-Ժերմեն արվարձանի հնամենի, շքեղ ապարանքներին: Երբ նա անցավ այդ վեհաշուք նախասրահներով, այդ հոյակապ սանդուղքներով, և, չնայած ձմեռվա խստությանը՝ ծաղիկներով գեղազարդված այդ ընդարձակ դահլիճներով, որոնք և կահավորված էին այնպիսի ճաշակով, որը հատուկ է փարթամության մեջ կամ արիստոկրատական նրբացած սովորություններով ծնված

կանանց, նրա սիրտը ահռելիորեն ճմլվեց: Նա նախանձեց այդ վայելչագեղության գաղտնիքներին, որոնց մասին նա ոչ մի պատկերացում չուներ: Նա շնչեց վեհությամբ հագեցված այդ օդը, և հասկացավ, թե ինչու այդ տունն այնքան շատ էր գրավում իր ամուսնուն: Հասնելով դքսուհու գողտրիկ սենյակները՝ նախանձ ու մի տեսակ հուսահատություն պաշարեցին նրան, երբ այնտեղ նա հիացմունքով դիտեց կահույքների, ծալազարդումների և թավիշների հեշտալի դասավորությունը: Խառնակությունն այնտեղ բարեշնորհություն էր, այնտեղ՝ շքեղությունը կարծես մի տեսակ արհամարհում էր հարստությունը: Այդ քաղցրաբույր մթնոլորտում տարածված անուշահոտությունները շոյում էին հոտոտելիքը, առանց այն գրգռելու: Այդ բնակարանի պիտույքները ներդաշնակում էին ծառապատ այգու դալարագեղ մարգագետինների հետ, որոնք երևում էին լայնադիր պատուհանների միակտուր ապակիների միջով: Ամեն ինչ հրապույր էր, ու ամենևին չէր զգացվում, թե այդ բոլորը հաշիվ էր: Այդ բնակարանի տիրուհու հանճարն ամբողջությամբ արտացոլվում էր հատկապես այն հյուրասրահում, ուր Օգյուստինն սպասում էր: Նա փորձեց գուշակել իր մրցակցուհու բնավորությունը այնտեղ ցրիվ եկած իրեղենների օգնությամբ, սակայն ինչ-որ մի անթափանցելի բան կար դրանց խառնակության, ինչպես նաև համաչափության մեջ, և դա մնաց անըմբռնելի գաղտնիք պարզունակ Օգյուստինի համար. միակ բանը, որ նա հասկացավ, այդ այն էր, որ դքսուհին բացառիկ կին է: Այն ժամանակ ցավագին մի միտք համակեց նրան:
«Ավա՜ղ,— ինքն իրեն ասաց նա,— արդյոք ճի՞շտ է, որ սիրով առլեցուն և պարզունակ սիրտն անբավարար է արվեստագետին, և թե՝ որպես հակակշիռ, այդ ուժեղ հոգիներին անհրաժեշտ է միացնել կանացի այնպիսի հոգիների հետ, որոնց զորությունը համապատասխան լինի դրանց ուժին: Եթե ես դաստիարակված լինեի այս սիրենայի նման, ապա գոնե մեր զենքերը հավասար կլինեին մարտի ժամանակ:
— Բայց չէ՞ որ ես տանը չե՛մ:
Այս չոր ու կտրուկ բառերը, որոնք ցածրաձայն արտասանվեցին հարևան սենյակում, հասան Օգյուստինի ականջին. նրա սիրտը թրթռաց:
— Այդ տիկինն այստեղ է,— առարկեց նաժիշտը:
— Դուք խենթացել եք, դե ուրեմն հրավիրիր ներս,— պատասխանեց դքսուհին. նրա ձայնը քաղցրանալով ընդունել էր քաղաքավարության սիրալիր շեշտ: Ակներևաբար նա կամենում էր, որ այդ րոպեին իրեն լսեն:
Օգյուստինը երկչոտ առաջացավ: Այդ թարմաշունչ բուդուարի խորքում նա տեսավ դքսուհուն՝ հեշտասիրաբար ընկողմանած կանաչավուն թավշով պատած արևելյան մի բազմոցի վրա, որը դրված էր ոսկեփայլ բեհեզով պատած մուսլինի փափուկ ծալքերով՝ ֆոն կազմող մի կիսաշրջանի կենտրոնում: Ոսկեզօծ, նուրբ ճաշակով դասավորված բրոնզյա զարդարանքները ևս առավել շքեղացնում էին այդ մի տեսակ ամպհովանին, որի տակ տեղավորվել էր դքսուհին հնամենի արձանի պես: Թավշի մուգ գույնի շնորհիվ նա կարողանում էր անկորուստ ծավալել հրապուրանքի իր բոլոր միջոցները: Աղոտ լույսը, որն ավելի շուտ ցոլքի էր նմանվում, շեշտում էր նրա գեղեցկությունը: Մի քանի հազվագյուտ ծաղիկներ բարձրացնում էին իրենց բուրավետ գլուխները Սևրի ամենաթանկարժեք ծաղկամանների վերև: Այն րոպեին, երբ այդ պատկերը պարզվեց զարմացած Օգյուստինի աչքերի առաջ, սա այնքան կամաց էր քայլել, որ կարողացավ անակնկալորեն նկատել այդ կախարդող գեղեցկուհու հայացքը: Թվում էր, թե այդ հայացքն ասում էր ինչ-որ մեկի, որին նկարչի կինը նախապես չէր նշմարել. «Մնացե՛ք, դուք կտեսնեք մի գեղեցիկ կնոջ, և նրա այցելությունն ինձ համար կդարձնեք նվազ տաղտկալի»:
Տեսնելով Օգյուստինին՝ դքսուհին վեր կացավ և նրան նստեցրեց իր կողքին:
— Ի՞նչ բանի եմ պարտական այս երջանիկ այցելությունը, տիկի՛ն,— ասաց նա դյութական մի ժպիտով:
«Ինչո՞ւ այս աստիճանի կեղծավորություն»,— մտածեց Օգյուստինը, և նա պատասխանեց գլխի միմիայն մի թեթև շարժումով:
Նրա լռությունը հարկադրական էր. մանկամարդ կինն իր առաջ տեսնում էր այդ տեսարանի համար ավելորդ մի վկայի: Այդ անձնավորությունը բանակի բոլոր զնդապետներից ամենավայելչագեղն էր ու բարեկազմը: Նրա կիսով չափ քաղաքացիական հագուստը շեշտում էր նրա մարմնի նրբագեղությունը: Նրա կենսունակ դեմքը խիստ արտահայտիչ էր, և առավել ևս աշխույժ տեսք էր ստանում դեպի վեր ոլորած սևաթույր բեղիկներով, փարթամ մորուքով, խնամքով սանրված այտմորուքներով և շատ խիտ ու բավականին խճճված սև մազերով: Սա զվարթորեն խաղում էր ձեռքի մտրակով՝ իրեն պահելով հանգիստ ու ազատ, ինչ որ սազում էր նրա դիմագծի ինքնահաճ տեսքին, ինչպես նաև խնամված նուրբ արդուզարդին: Լամբակին անցկացրած շքանշանների ժապավենները հանգուցված էին անփութորեն՝ կարծես արհամարհանքով. երևում էր, թե նա ավելի է պարծենում իր արտաքինով, քան իր արիությամբ:
Օգյուստինը նայեց դքսուհի դը Կարիլիանոյին, մատնանշելով զնդապետին մի հայացքով, որի իմաստը ըմբռնվեց:
— Դե լա՛վ, ցտեսություն, պարոն դ՚Էգլմոն, մենք կհանդիպենք Բուլոնյան անտառում:

Այս բառերն այդ սիրենայի կողմից արտասանվեցին այնպիսի տոնով, կարծես ամեն ինչ որոշված էր Օգյուստինի գալուց առաջ: Նա իր խոսքերին ուղեկցեց սպառնացայտ մի հայացք, որին գուցե արժանացել էր սպան, որովհետև սա չէր թաքցնում իր հիացմունքը՝ հպարտ դքսուհուն այնքան գեղեցկորեն հակադրվող այս համեստ ծաղիկը դիտելիս: Երիտասարդ պճնամոլը լուռ գլուխ տվեց, շուռ եկավ իր կոշիկների կրունկների վրա և թեթևասահ դուրս եկավ բուդուարից: Այդ րոպեին Օգյուստինը թաքուն նայում էր իր մրցակցուհուն, որը կարծես աչքով հետևում էր գեղեցիկ սպային: Նրա հայացքում նա նկատեց այն զգացմունքը, որի խուսափուկ արտահայտությունները ծանոթ են բոլոր կանանց: Նա խորունկ կսկիծով մտածեց, թե իր այցելությունը պիտի լինի անօգուտ, այդ նենգամիտ դքսուհին չափից դուրս ծարավի էր մեծարանքների, հետևապես չէր կարող անգութ չլինել:
— Տիկին,— ասաց Օգյուստինը կտրատվող ձայնով,— իմ այս քայլը շատ տարօրինակ պիտի թվա ձեզ, սակայն հուսահատությունն ունի իր խելացնորությունը և ամեն ինչ արդարացնում է: Ես շատ լավ եմ հասկանում, թե ինչո՞ւ Թեոդորը գերադասում է ձեր տունը բոլոր մյուսներից, և թե ինչո՞ւ ձեր խելքն այնքան մեծ ազդեցություն է գործում նրա վրա: Ավա՜ղ, բավական է ինքս ինձ նայեմ, որպեսզի իմ մեջ գտնեմ դրա պատճառները: Բայց ես պաշտում եմ ամուսնուս, տիկին: Երկու տարիների արտասուքը չկարողացավ սրտիցս ջնջել նրա պատկերը, թեև ես կորցրել եմ նրա սիրտը: Ես խելացնորություն ունեցա հղանալ ձեր դեմ պայքարելու միտքը, և ահա դիմում եմ ձեզ, որպեսզի իմանամ, թե ես ինչպիսի՞ միջոցներով կարող եմ հաղթանակ տանել ձեզ վրա: Օ՜, տիկի՜ն,— բացականչեց մանկամարդ կինը, թափով բռնելով իր մրցակցուհու ձեռքը, որ վերջինս թողեց վերցնի:— Ես երբեք այնքան ջերմեռանդությամբ պիտի չաղոթեմ աստծուն ի՜մ երջանկության համար, ինչքան ձե՜ր երջանկության համար, եթե միայն դուք օգնեիք ինձ նվաճելու, չեմ ասում Սոմերվիոյի սերը, այլ լոկ գուրգուրանքը: Դուք եք իմ վերջին հույսը: Օ՜, ասացե՛ք ինձ, դուք ինչպե՞ս կարողացաք դուր գալ նրան և նրան մոռացնել տալ առաջին օրերի…
Այս խոսքերի վրա Օգյուստինը չկարողացավ զսպել իր հեկեկանքը, և շնչակտուր՝ ստիպված եղավ կանգ առնել: Ամաչելով իր թուլությունից, նա երեսը ծածկեց իր թաշկինակով, արտասուքներով ողողելով այն:
— Դուք հո երեխա չեք, իմ թանկագի՜ն, փոքրիկ գեղեցկուհի,— ասաց դքսուհին, հրապուրված այս տեսարանի նորությամբ և հուզված, ակամայից, ընդունելով այս մեծարանքը, որ մատուցում էր նրան Փարիզի թերևս ամենաառաքինի կինը: Նա վերցրեց մանկամարդ կնոջ թաշկինակը և սկսեց անձամբ սրբել նրա աչքերը, կարեկցանքի մի քանի կցկտուր խոսքեր շշնջալով նրան:
Մի որոպե լռությունից հետո պչրուհին, Օգյուստինի սիրունիկ ձեռքերը պահելով իր ձեռքերի մեջ, որոնք իրենց վրա կրում էին ուժեղ անհատականության և ազնվական հազվագյուտ գեղեցկության դրոշմը, քաղցր ու գորովալից ձայնով ասաց նրան.
— Որպես առաջին խրատ՝ ես ձեզ խորհուրդ կտայի լաց չլինել այդպես, արցունքները տգեղացնում են: Պետք է գիտենալ հակազդել վշտերին, դրանք հիվանդացնում են և սերը երկար չի մնում ցավի անկողնու վրա: Մելամաղձոտությունը, ճիշտ է, նախ տալիս է որոշ շնորհալիություն, որը դուր է գալիս, սակայն դա վերջ ի վերջո երկարացնում է դիմագծերը և թառամեցնում ամենազմայլելի դեմքերն իսկ: Հետո, մեր բռնակալները եսասիրաբար ցանկանում են, որ իրենց ստրկուհիները միշտ զվարթ լինեն:
— Օ՜, տիկին, չզգալն ինձնից կախված չէ: Մի՞թե կարելի է չզգալ մահացու տառապանքներ, տեսնելով անգույն, սառը և անտարբեր այն դեմքը, որը, մի ժամանակ շողշողում էր սիրով և երջանկությամբ: Օ՜, ես անկարող եմ հրամայելու իմ սրտին:
— Ավելի վատ, թանկագինս, բայց ես կարծում եմ, թե արդեն իսկ գիտեմ ձեր ամբողջ պատմությունը: Նախ և առաջ, դուք մի բան լավ պատկերացրեք, որ, եթե ձեր ամուսինը ձեր հանդեպ եղել է անհավատարիմ, ապա ես նրա մեղսակիցը չեմ: Եթե ես ցանկացել եմ նրան տեսնել իմ սալոնում, դա, ես այդ խոստովանում եմ, իմ կողմից ինքնասիրություն էր, նա հռչակավոր էր և ոչ մի տեղ չէր գնում: Ես արդեն իսկ ձեզ չափազանց շատ եմ սիրում, որպեսզի ձեզ ասեմ այն բոլոր խենթությունները, որ նա արել է ինձ համար: Բավական է հայտնել մեկի մասին, որովհետև դա գուցե մեզ կօգնի նրան ետ բերելու դեպի ձեզ, նաև պատժելու նրան այն հանդուգն վարվեցողության համար, որ նա ցուցաբերում է իմ հանդեպ: Նա ի վերջո կարող է անվանարկել ինձ: Ես հիանալի ճանաչում եմ աշխարհիկ հասարակությունը և չեմ վստահում ականավոր մարդկանց համեստությանը: Իմացե՛ք, որ պետք է ընդունել այդ մարդկանց երկրպագությունները, բայց ամուսնանալ նրանց հետ, դա սխալ է: Կանայք պետք է զմայլվեն հանճարների վրա, նրանք պետք է վայելք զգան նրանցից, ինչպես վայելում են մի ներկայացում, սակայն ապրել նրանց հետ, երբե՛ք: Ներողությո՛ւն, դա նման է հաճույք փնտրելուն՝ դիտելով օպերայի կուլիսների սարքերը, փոխանակ մնալու օթյակում և այնտեղ ըմբոշխնելու դրա գեղեցիկ պատրանքները: Բայց ձեզ հետ, իմ խեղճ երեխա, չարիքն արդեն կատարվել է, այդպես չէ՞: Դե ուրեմն, պետք է ջանալ զինվել բռնության դեմ:
— Ա՜հ, տիկին, նախքան այստեղ մտնելը և ձեզ տեսնելը, ես արդեն իմացա որոշ հնարներ, որոնց գոյության մասին ես նախապես չգիտեի:

— Դե լա՛վ, եկեք ինձ մոտ երբեմն, և դուք երկար չեք մնա առանց տիրապետելու այդ մանր-մունր սնոտիքների գիտությանը, որոնք այլ կողմից չափազանց կարևոր են: Արտաքին բաները հիմարների համար կյանքի կեսն են ներկայացնում, և դրա համար էլ տաղանդավոր շատ ու շատ մարդիկ հիմարանում են հակառակ իրենց տաղանդին: Ես գրազ եմ գալիս, որ դուք երբեք չեք կարողացել մի որևէ բան մերժել Թեոդորին:
— Ինչպե՞ս, տիկին, մի որևէ բան մերժե՞լ նրան, որին սիրում եք:
— Խե՜ղճ, անմեղ աղջիկ, ես ձեզ կպաշտեմ ձեր պարզամտության համար: Ուրեմն իմացե՛ք, որ ինչքան ավելի ենք սիրում, այնքան և ավելի պետք է աշխատենք ցույց չտալ տղամարդուն, մանավանդ ամուսնուն, մեր սիրո խորությունը: Նա է տանջվում, ով ամենաշատն է սիրում, և ավելի վատն այն է, որ նա վաղ թե ուշ լքվում է: Նա, ո՛վ ուզում է իշխել, պետք է...
— Ինչպե՞ս թե, տիկի՛ն, ուրեմն պետք է ծածկամի՞տ լինել, շահագետ և կեղծավո՞ր լինել, արհեստական դե՞մք ընդունել և դա ընդմի՞շտ: Օ՜, ինչպե՞ս կարելի է ապրել այդպես: Մի՞թե դուք կարող եք…
Նա վարանեց. դքսուհին ժպտաց:
— Սիրելի՛ս,— նորից խոսեց մեծաշուք տիկինը լրջորեն,— ամուսնական երջանկությունը բոլոր ժամանակներում էլ եղել է սպեկուլյացիա, ինչ-որ գործարք, որը պահանջում է հատուկ ուշադրություն: Եթե դուք շարունակ սեր հոլովեք, երբ ես խոսում եմ ամուսնության մասին, մենք շուտով, այլևս իրար չենք հասկանա: Լսե՛ք ինձ,— շարունակեց նա խորհրդավորությամբ:— Կյանքի բերումով ես առիթ եմ ունեցել տեսնելու մեր ժամանակի մեծահանճար մարդկանց մի քանիսին: Դրանցից՝ նրանք, ովքեր ամուսնացել են, շատ քիչ բացառությամբ, որպես կին առել են ոչնչություն ներկայացնող արարածների: Եվ երևակայեցեք, այդ կանայք կառավարում էին դրանց այնպես, ինչպես կայսրն է մեզ կառավարում, և նրանք, եթե ոչ սիրված, գեթ հարգված էին այդ մարդկանց կողմից: Ես բավականին սիրում եմ գաղտնիքները, մանավանդ այնպիսիները, որոնք մեզ են վերաբերում: Ուստի, ես հաճախ զվարճացել եմ այդ հանելուկի լուծումով: Եվ ինչ, հրեշտակս, այդ «լավ կանայք» կարողացել են հասկանալ իրենց ամուսինների բնավորությունը: Առանց ահաբեկվելու, ինչպես դուք, նրանց գերազանցությունից, նրանք վարպետորեն նկատում էին այն արժանիքները, որոնք պակասում էին այդ մարդկանց: Կամ, որովհետև իրենք ունեին տվյալ արժանիքները կամ թե ձևացնում էին որ ունեն, համենայն դեպս նրանք հնար գտնում էին այնքան շատ խոսելու իրենց ունեցածի մասին և այն ի ցույց դնելու իրենց ամուսինների աչքին, որ ի վերջո հարգանք էին ներշնչում նրանց: Վերջապես, սովորեցեք նաև, թե այն մարդիկ, որոնք այնքան ականավոր են երևում, բոլորն էլ անպայման ունեն խենթության ինչ-որ հատիկ, որ մենք պետք է օգտագործել իմանանք: Դրանց վրա իշխելու հաստատ կամքով տոգորված և չշեղվելով երբեք այդ նպատակից, դեպի այդ նպատակն ուղղելով մեր ամբողջ գործունեությունը, մեր մտքերը, մեր պչրանքները, մենք կտիրենք այդ վերին աստիճանի քմահաճ հոգիներին, որոնք իրենց մտքերի հարափոխությամբ իսկ՝ մեզ հնարավորություն են տալիս իրենց վրա ազդելու:
— Օ՜, աստվա՛ծ իմ,— բացականչեց մանկամարդ կինը սարսափած,— ուրեմն այդ է կյանքը: Դա կռիվ է...
— Ուր պետք է միշտ սպառնալ,— վրա տվեց դքսուհին ծիծաղելով:— Մեր իշխանությունն ամբողջությամբ արհեստական է և շինծու: Դրա համար էլ, երբեք չպետք է թողնել որևէ տղամարդու, որ արհամարհի մեզ. այդպիսի ստորացումից չի կարելի դուրս գալ այլ կերպ, բայց եթե նողկալի մանևրներով: Եկե՛ք,— ավելացրեց նա,— ես ձեզ կտամ ձեր ամուսնուն շղթայակապ պահելու մի միջոց:
Դքսուհին ժպտալով վեր կացավ և ամուսնական խորամանկությունների գործում անփորձ իր դեռատի աշակերտուհուն տարավ իր փոքրիկ պալատի բավիղներով: Նրանք երկուսով հասան մի թաքուն սանդուղքի, որը տանում էր ընդունելության սենյակները: Երբ դքսուհին շուռ տվեց դռան գաղտնի փականքը, նա կանգ առավ և նայեց Օգյուստինին՝ դեմքին տալով չարաճճի խորամանկության և գրավչության մի անզուգական արտահայտություն:
— Տեսե՛ք, օրինակի համար, դուքս Կարիլիանոն ինձ պաշտում է, և սակայն նա չի համարձակվում այս դռնից անցնել՝ առանց իմ թույլտվության: Իսկ նա մի այնպիսի մարդ է, որը սովոր է հրամայելու բազմահազար զինվորների: Նա գիտե կուրծքը դեմ տալ թնդանոթների, բայց ինձնից վախենում է:
Օգյուստինը հառաչեց: Նրանք հասան մի շքեղ պատկերասրահ, ուր դքսուհին նկարչի կնոջը տարավ Թեոդորի նկարած այն դիմանկարի առջև, որը ներկայացնում էր օրիորդ Գիյոմին: Տեսնելով այդ՝ Օգյուստինը մի ճիչ արձակեց:
— Ես հաստատ գիտեի, որ սա այլևս իմ տանը չէր, բայց... այստե՞ղ…
— Սիրելի՛ս, ես սա պահանջեցի, որպեսզի տեսնեմ, թե հիմարության ի՞նչ աստիճանի կարող էր հասնել հանճարեղ մարդը: Վաղ թե ուշ ես սա կվերադարձնեի ձեզ, բայց ճիշտն ասած, չէի սպասում, որ բախտ կունենամ տեսնելու բնագիրը պատճենի դիմաց: Մինչև մենք կվերջացնենք մեր խոսակցությունը՝ ես այն փոխադրել կտամ ձեր կառքը: Եթե, զինված այս թալիսմանով, դուք

հարյուր տարի շարունակ չտիրապետեք ձեր ամուսնուն՝ ապա դուք կին չեք և դուք արժանի եք ձեր վիճակին:
Օգյուստինը համբուրեց դքսուհու ձեռքը, իսկ դքսուհին նրան սեղմեց իր կրծքին և համբուրեց նրան այնքան քնքշությամբ, որքան որ արագ պետք է այն մոռացվեր հաջորդ օրը: Այս տեսարանը գուցե և ընդմիշտ կործաներ Օգյուստինից նվազ առաքինի կնոջ անմեղությունն ու մաքրությունը. դքսուհու հայտնած գաղտնիքները նրա համար կարող էին լինել և՛ փրկարար, և՛ կործանարար:
Հասարակության բարձր ոլորտների նենգապատիր քաղաքականությունը նույնքան էր հարմարվում Օգյուստինին, որքան Ժոզեֆ Լեբայի հայացքները կամ տիկին Գիյոմի նեղ բարոյագիտությունը: Եվ ինչպիսի՞ տարօրինակ կացության մեջ ենք ընկնում կյանքում թույլ տված սխալ քայլի, նվազագույն սխալի համար: Իր դրության մեջ Օգյուստինը նմանվում էր ալպյան լեռների խաշնարածի, որին հանկարծակի սպառնում է ձյան հյուսը, եթե նա տատանվում է կամ ուզում է լսել իր ընկերների աղաղակները՝ ապա ավելի հաճախ կործանվում է: Այդպիսի մեծագրոհ ճգնաժամերի ընթացքում սիրտը փշրվում է կամ կարծրանում բրոնզի պես:
Տիկին դը Սոմերվիոն վերադարձավ տուն՝ մատնված հոգեկան մի այնպիսի տագնապի, որպիսին դժվար թե կարելի լինի նկարագրել: Դքսուհի դը Կարիլիանոյի հետ ունեցած զրույցը նրա մեջ արթնացրել էր հակասական բազում մտքեր: Առակի ոչխարների նման նա լի էր արիությամբ, քանի գայլը ներկա չէր: Նա սրտապնդվում էր՝ ինքն իրեն ճառախոսելով և իր համար կառուցում գործողության հրաշալի պլաններ. նա մտահղանում էր պչրանքի հազար ու մի հնարներ. նա մինչև անգամ խոսում էր իր ամուսնու հետ, վերագտնելով, նրա բացակայությամբ, բոլոր միջոցները այն ճշմարիտ պերճախոսության, որը երբեք չի լքում կանանց, ապա, մտաբերելով Թեոդորի սևեռուն և սառը հայացքը՝ նա արդեն դողում էր: Երբ նա հարցրեց՝ թե պարոնն իր սենյակո՞ւմ է, նրա ձայնը կտրվեց: Իմանալով, որ իր ամուսինը չի գալու ճաշի նա անբացատրելի մի ուրախություն զգաց: Նման այն հանցագործին, որը բեկման է տալիս իր դեմ կայացած մահվան դատավճիռը, որևէ տարկետում, թեկուզ և դա ամենակարճը լիներ, նրան թվում էր մի ամբողջ կյանք:
Դիմանկարը նա տեղավորեց իր սենյակում և սպասեց ամուսնուն՝ անձնատուր լինելով հույսի հոգեմաշ տվայտանքներին: Նա կանխազգում էր հստակ կերպով, թե այս փորձը որոշելու է իր ամբողջ ապագան, և դողում՝ ամեն տեսակ աղմուկից, մինչև անգամ իր ժամացույցի հնչյուններից, որոնք, կարծես չափելով իր սարսափները, առավել ևս էին ծանրացնում դրանք: Նա աշխատեց ժամանակն սպանել հազար ու մի հնարանքներով նա միտք արեց իրեն հարդարել այնպիսի ձևով, որպեսզի կետ առ կետ նմանվի դիմանկարին: Ապա, իմանալով ամուսնու դյուրահույզ բնավորությունը, նա իր սենյակները լուսավորել տվեց արտասովոր կերպով, վստահ, թե հենց որ նա վերադառնար, հետաքրքրասիրությունը նրան իսկույն պիտի բերեր իր մոտ:
Կեսգիշերը հնչեց, երբ, կառապանի ճչի վրա, բացվեց առանձնատան դարպասը: Նկարչի կառքը թավալվեց լռության մեջ թաղված բակի սալահատակի վրա:
— Ի՞նչ է նշանակում այս հրավառությունը,— հարցրեց Թեոդորն ուրախ ձայնով, մտնելով կնոջ սենյակը:
Օգյուստինը, վարպետորեն օգտագործելով ներկայացող այդ բարենպաստ առիթը, նետվեց ամուսնու պարանոցին և նրան ցույց տվեց դիմանկարը: Արվեստագետն անշարժացավ ժայռի պես: Նրա աչքերն ուղղվեցին, փոխիփոխ, մերթ Օգյուստինի վրա, մերթ ամբաստանող կտավի վրա: Երկչոտ կինը, կիսով չափ մեռած, գաղտագողի հետևում էր ամուսնու արագորեն գունաթափվող, ահարկու ճակատին: Նա տեսավ, թե ինչպես փոթորկալի կնճիռներ կուտակվեցին այնտեղ ամպրոպի նման: Ապա, նրան թվաց, թե արյունը սառչում է իր երակներում, երբ կայծակնացայտ հայացքով և խուլ ձայնով նա հարցաքննեց:
— Որտե՞ղ եք գտել այդ նկարը:
— Դքսուհի Կարիլիանոն այն վերադարձրեց ինձ:
— Դուք այն նրանից պահանջեցի՞ք:
— Ես չգիտեի, թե դա նրա մոտ էր:
Այդ հրեշտակի ձայնի քաղցրությունը, ավելի շուտ, կախարդական մելոդիան պիտի հուզեր մարդակերներին իսկ, բայց ոչ արվեստագետին, որի սիրտը գալարվում էր վիրավորված սնափառության ճիրանների մեջ:
— Իսկապես, որ սա արժանի է այդ կնոջը,— բացականչեց արվեստագետը որոտալից ձայնով:— Ես վրեժխնդի՞ր կլինեմ,— ասաց նա՝ մեծաքայլ չափչփելով սենյակը.— նա կմեռնի ամոթանքից. ես նրան կնկարեմ, այո՛, ես նրան կներկայացնեմ Մեսալինայի

տեսքով, երբ նա գիշերը դուրս է գալիս Կլավդիոսի պալատից:
— Թեոդո՛ր,— ասաց նրան նվաղուն մի ձայն:
— Ես նրան կսպանե՛մ:
— Բարեկա՛մս:
— Նա սիրում է հեծելազորի այդ խղճուկ գնդապետին, որովհետև սա լավ գիտե ձի նստել:
— Թեոդո՛ր:

— Է՛հ, թողե՛ք ինձ,— ասաց նկարիչն իր կնոջը մի այնպիսի ձայնով, որը համարյա թե մռնչյունի էր նման:
Անօգուտ կլիներ նկարագրել այդ ամբողջ տեսարանը, որի վերջում զայրույթի գինովությունն արվեստագետին թելադրեց այնպիսի խոսքեր ու արարքներ, որ Օգյուստինից նվազ երիտասարդ մի կին պիտի վերագրեր ուղղակի խելագարության:
Առավոտյան ժամը ութի մոտերքը, տիկին Գիյոմն իր աղջկան գտավ գունաթափված. նրա աչքերը կարմրատակել էին, մազերն ու հագուստները խառնիխուռն վիճակում: Նա ձեռքում բռնած ուներ արտասուքով ողողված թաշկինակը: Նա դիտում էր հատակի վրա ցրիվ եկած ինչ-որ մի պատառոտված կտավի ծվեններ և մի ոսկեզօծ, ջարդոտված շրջանակի կտորտանքներ:
Օգյուստինը, որին վիշտը դարձրել էր գրեթե զգայազուրկ, հուսահատական շարժումով ցույց տվեց այդ բեկորները:
— Ահա՛ թե ինչ, կարծես թե մեծ կորո՛ւստ է եղել,— բացականչեց «Գնդակ խաղացող կատվի» վաղեմի կառավարչուհին:— Ճիշտ է, նկարը նման էր, բայց ես գիտեմ, որ բուլվարի վրա գտնվում է մի մարդ, որը հիսուն էկյուով հիանալի նկարներ է սարքում:
— Օ՛հ, մա՛յր իմ:
— Խեղճ պստի՛կ, դու, իհարկե, իրավացի ես,— պատասխանեց տիկին Գիյոմը, որը սխալ հասկացավ իր դստեր նետած հայացքի բովանդակած իմաստը:— Ի՞նչ արած, զավակս, մարդ չի կարող ուրիշ որևէ մեկից սիրվել այնքան գորովալիր, ինչքան մոր կողմից: Սիրունի՛կս, ես ամեն ինչ կռահում եմ, բայց դու արի՛ ինձ մոտ, սիրտդ բաց, վստահիր ինձ քո վշտերը, ես քեզ կսփոփեմ: Չէ՞ որ ես արդեն ասել եմ քեզ, թե այդ մարդը խելագար է: Քո աղախինը գեղեցիկ բաներ է պատմել ինձ նրա մասին…Բայց, նա ուրեմն իսկ և իսկ ճիվաղ է:
Օգյուստինը մատը դրեց իր դալկահար շրթներին, կարծես պաղատագին խնդրելով մորից մի րոպեի լռություն: Այդ սոսկալի գիշերվա ընթացքում, դժբախտությունը նրան տվեց այդ հլու և համբերատար համակերպվածությունը, որն իր տարողունակությամբ, մայրերի, ինչպես նաև սիրող կանանց մոտ գերազանցում է մարդկային ուժը, և գուցե բացահայտում է կանանց սրտում այնպիսի լարերի գոյություն, որ աստված մերժել է տալ տղամարդուն:
Մոնմարտրի գերեզմանատան մի հուշարձանի վրա փորագրված արձանագրությունը ցույց է տալիս, որ տիկին դը Սոմերվիոն վախճանվել է քսանյոթ տարեկան հասակում: Մի պոետ՝ այդ երկչոտ արարածի բարեկամը, նրա դամբանագրի պարզ տողերում տեսնում էր ողբերգության վերջին պատկերը: Ամեն տարի, նոյեմբերի 2-ի հանդիսավոր օրը, նա երբեք չէր անցնում այդ փոքրիկ մարմարիոնի առջևով, առանց ինքն իրեն հարց տալու, թե հանճարի հուժկու գրկախառնումների համար արդյոք անհրաժեշտ չե՞ն այնպիսի ավելի ուժեղ կանայք, քան Օգյուստինն էր:
«Հովիտներում փթթած խոնարհ ու համեստ ծաղիկները մեռնում են գուցե,— ինքն իրեն ասում էր նա,— երբ դրանք վերատնկվում են երկնքին չափազանց մոտիկ այն ոլորտներում, ուր փոթորիկներ են ծնվում, ուր արեգակն է հրկիզում»:

ԳՆԴԱԿ ԽԱՂԱՑՈՂ ԿԱՏՎԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

«Գնդակ խաղացող կատվի վաճառատունը» փոքրիկ վիպակը Բալզակն առաջին անգամ հրատարակել է «Փարիզյան կյանքի տեսարանների» առաջին հրատարակության երկրորդ հատորում, 1830 թվականին:
Սկզբում երկի վերնագիրն էր «Փառք և դժբախտություն»: 1842 թվականին, մտցնելով «Մարդկային կատակերգության» առաջին հրատարակության մեջ, Բալզակն այդ երկն անվանում է «Գնդակ խաղացող կատվի վաճառատունը»:
«Մասնավոր կյանքի տեսարաններ» շարքին պատկանող այս վիպակում ամենամեծ շահեկանությունն ներկայացնում է XIX դարի սկզբի ֆրանսիական առևտրական բուրժուազիայի կենցաղի և բարքերի նկարագրությունը: Սատիրիկ կերպով մերկացնելով այդ բուրժուազիայի ներկայացուցիչների «ողջամտությունը», սահմանափակությունը, նեղհայեցողությունը, Բալզակը ցույց է տալիս, որ նրանք ոչ մի պարագայում չեն կարողանում դուրս գալ իրենց համար սովորական մտքերի, ըմբռնումների և հաշիվների շրջանակից:
1

Կարակուլա
— հռոմեական կայսր (3-րդ դ. մեր թվ.):
2

Դավիդ
Ժակ-Լուի (1748—1825) — ֆրանսիական հռչակավոր նկարիչ, ֆրանսիական XVIII դարի բուրժուական ռևոլյուցիայի և նապոլեոնական կայսրության ժամանակաշրջանում, բուրժուական կլասիցիզմի խոշորագույն ներկայացուցիչը ֆրանսիական նկարչության մեջ:
3

Մերկուրիոս
— հին հռոմեական դիցաբանության մեջ Մերկուրիոս աստվածը (հին հունականում Հերմես) համարվում էր առևտրի, ճանապարհների և արհեստների հովանավորը:
4

«Մաքսիմումի» ռեժիմը
— Բալզակը նկատի ունի 1793 թ. Կոնվենտի ընդունած դեկրետը սննդի գլխավոր մթերքների, արդյունաբերական ապրանքների ու հումքի վրա կայուն գներ նշանակելու մասին: Այդ դեկրետն ուղղված էր սպեկուլյանտների դեմ:
5

«Դուգլասի կոմս Հիպոլիտը»
— դքսուհի դ'Օնեի (մեռած 1705 թ.) գրած սիրային վեպը:—

«Կոմինգի կոմսը»
— ֆրանսիական երկրորդական գրող, դրամատուրգ և վիպագիր Ֆրանսուա-Թոմա Բակյուլար Առնոյի (1718—1805) դրաման:
6

Ժիրոդե
Լուի — (1767—1824) ֆրանսիական նկարիչ, Դավիդի աշակերտը:
7

Արգուս
(դիցաբ.) — հարյուրաչքանի հսկա, որ Հերայի հրամանով հսկում էր աստվածուհու մրցակցուհի Իոյին, որը կերպարանափոխված էր կովի, սպանվեց Հերմեսի կողմից, որին հաջողվեց նրան քնացնել սրնգի նվագով:
8

Վեռնե
Կլոդ-Ժոզեֆ — (1728—1778) — ֆրանսիական նկարիչ:—

Լեկեն
Ֆրանսիական դերասան Անրի-Լուի Կենի (1728—1778) բեմական անունը:—

Նովեր
Ժան-Ժորժ (1727—1810) — ֆրանսիական բալետմեյստեր, մի շարք բալետների հեղինակ:
9

«Քրիստոնեության ոգին» —
(1802) — ֆրանսիական ռեակցիոն ռոմանտիկ Ֆրանսուա Ռենե Շատոբրիանի (1768—1848) երկը:
10

«
…հայր Գիյոմի Մարենգոյի ճակատամարտը»
— Մարենգոն գյուղ է Հյուսիսային Իտալիայում, որտեղ 1800 թվականին, ֆրանսիական բանակը Նապոլեոնի հրամանատարությամբ, հաղթանակ տարավ ավստրիական բանակի դեմ:
11

Մեսալինա
— հռոմեական կայսր Կլավդիոսի (I դար մեր թվ.) կինը, որ հայտնի էր իր անառակությամբ և դաժանությամբ: